



THE REGIONAL ENVIRONMENTAL CENTER
for Central and Eastern Europe

Ուղղված է Նազմավարական էկոլոգիական գնահատման
փորձնական ծրագիրը որպես Հայաստանում ՌԷԳ արձանագրության
իրականացման համար հզորությունների ստեղծման գործիք

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ
ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
Դեկտեմբեր 2005

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ
ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային խումբ.

*Սոնա Այվազյան, ծրագրի համակարգող
Բորիս Ղազարյան, ռազմավարական էկոլոգիական գնահատման գծով փորձագետ
Ազգանուշ Դռնոյան, ռազմավարական էկոլոգիական գնահատման գծով փորձագետ
Միխայիլ Վերմիշև, ռազմավարական էկոլոգիական գնահատման գծով փորձագետ
Պետրոս Սողոմոնյան, ճարտարապետ
Սերգեյ Կարապետյան, առողջապահության գծով փորձագետ
Արևիկ Հովսեփյան, ջրային ռեսուրսների պահպանության գծով փորձագետ
Արման Վերմիշյան, հասարակայնության մասնակցության գծով փորձագետ*

Միջազգային խորհրդատուներ.

*Հենրիետա Մարտոնակովա, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Եվրոպայի և ԱՊՀ երկրների
Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոն
Աուշրա Յուրկիավիչյուտե, Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների
տարածաշրջանային բնապահպանական կենտրոն
Իրժի Դուսիկ, Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների տարածաշրջանային
բնապահպանական կենտրոն*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ	4
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
II. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՈՈՐԿԱՆ	5
Հիմնախնդրի արդիականությունը	5
Գլխավոր հատակագծի նպատակները և խնդիրները	6
Գլխավոր հատակագծի ընդհանուր մոտեցումները	7
Համապատասխան փաստաթղթերը	7
III. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	7
Ռազմավարական էկոլոգիական գնահատում	7
Հիմքերը	8
Նպատակը և խնդիրները	9
ՌԷԳ շրջանակները	10
Շահագրգիռ կողմերի ներգրավումը	11
ՌԷԳ սահմանափակումներ	12
IV. ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ	12
Հենակետային բնապահպանական խնդիրները	12
Համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը	15
Հենակետային բնապահպանական խնդիրների ցուցանիշները	16
V. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ	18
VI. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՆՑ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ	33
VII. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ	34
Երևանի գլխավոր հատակագծի հիմնական ուղղությունների կապը հենակետային բնապահպանական խնդիրների հետ	35
Հենակետային բնապահպանական խնդիրների վրա ազդեցությունը Երևանի գլխավոր հատակագծի հիմնական ուղղությունների իրականացման արդյունքում	35
VIII. ԱՈՈՐԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	39
IX. ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	40

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից տրամադրված ՌԷԳ առաջադրանքի շրջանակները
2. Հասարակական լսումների արձանագրությունը
 - 2.1. Հայաստանի Ճարտարապետների միությունում կայացած հասարակական քննարկման արձանագրություն, ապրիլի 30, 2005թ.
 - 2.2. Հայաստանի Ճարտարագիտական ակադեմիայի խորհրդի նիստի արձանագրություն, մայիսի 5, 2005թ.
 - 2.3. ՌԷԳ ծրագրի շրջանակներում մասնագիտական քննարկման (I մաս) արձանագրություն, մայիսի 11, 2005թ.
 - 2.4. ՌԷԳ ծրագրի շրջանակներում մասնագիտական քննարկման (II մաս) արձանագրություն, մայիսի 16, 2005թ.
 - 2.5. ՌԷԳ ծրագրի շրջանակներում կանաչ տարածքների վերաբերյալ մասնագիտական քննարկման արձանագրություն, հոկտեմբերի 21, 2005թ.
 - 2.6. ՌԷԳ ծրագրի շրջանակներում պետական կառույցների մասնակցությամբ քննարկման արձանագրություն, հոկտեմբերի 25, 2005թ.
 - 2.7. ՌԷԳ ծրագրի շրջանակներում հասարակական քննարկման արձանագրություն, նոյեմբերի 12, 2005թ.

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ

ԳՀՀԽ	Գլխավոր հատակագծի հեղինակային խումբ
ԹԿՊ	Թթվածնի կենսաբանական պահանջ
ԵԳՀ	Երևանի գլխավոր հատակագիծ
ԿԳՑ	Կոնցենտրացիայի զուևարային ցուցանիշ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱՆ	ՀՀ առողջապահության նախարարություն
ՀՀ ԲՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն
ՀՀ ՏԿՆ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՌԷԳ	Ռազմավարական էկոլոգիական գնահատում
ՍԹԱ	Սահմանային թույլատրելիարտանետում/արտահոսք
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՍԹՄ	Սահմանային թույլատրելի մակարդակ
ՏՏՀ	Տեխնիկատնտեսական հիմնավորում

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի գլխավոր Հատակագծի նախագծի ռազմավարական էկոլոգիական գնահատումն իրականացվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Եվրոպայի և ԱՊՀ երկրների՝ Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոնի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի կողմից իրականացվող «Ռազմավարական էկոլոգիական գնահատման փորձնական ծրագիրը՝ որպես Հայաստանում ՌԷԳ արձանագրության իրականացման համար հզորությունների ստեղծման գործիք» ծրագրի շրջանակներում: Տվյալ ծրագրի խնդիրն է՝

- փորձարկել և ցուցադրել «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կոնվենցիային¹ կից «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրության² (այսուհետ՝ ՌԷԳ արձանագրություն) գործնական կիրառման հնարավորությունները Հայաստանում՝ հաշվի առնելով վերջինիս պահանջը հասարակության մասնակցության և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության վերաբերյալ,
- առաջարկություններ ներկայացնել Երևան քաղաքի գլխավոր հատակագծում բնապահպանական խնդիրների օպտիմալ արտացոլման և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ:

ՌԷԳ շրջանակները սահմանվել են՝ հիմք ընդունելով խոշոր քաղաքների գլխավոր հատակագծերի առանձնահատկությունները, մասնավորապես՝ շրջակա միջավայրի գրեթե բոլոր տարրերի, այդ թվում՝ մարդու առողջության ընդգրկումը և փոխշաղկապվածությունը, ինչպես նաև՝ հետազայում քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերի և նախատեսվող գործունեությունների համար հիմնադրույթային փաստաթուղթ հանդես գալու հանգամանքը:

II. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

ՌԷԳ առարկան հանդիսանում է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագիծը 2020թ. ժամանակահատվածի հեռանկարով, որը մշակվել է Երևանի քաղաքապետարանի պատվերով “Երևաննախագիծ” ՓԲԸ կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 30.10.2000թ. “Երևան քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը մշակելու մասին” թիվ 692 որոշման հիման վրա:

Գլխավոր հատակագծի հայեցակարգը, մշակված է լայնածավալ ֆորմատով և հաստատված է ՀՀ կառավարության 24.03.2005թ. «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հայեցակարգը հաստատելու մասին» թիվ 443 որոշմամբ:

Հիմնախնդրի արդիականությունը

Երևան քաղաքի 1971թ. գլխավոր հատակագծի մինչև 2000թ. հեռանկարով գործող նախագիծը՝ 1100 հազ.մարդ ազգաբնակչությամբ և 16305 հա տարածքով, անցյալ դարի 80-ական թվականների կեսերին իր հիմնական ցուցանիշների մեծամասնությամբ լիովին սպառել էր իրեն:

Անցումային ժամանակաշրջանում տնտեսական և էներգետիկական ձգնաժամերի, տրանսպորտային ուղեփակման արդյունքում կանգ էր առել քաղաքի արդյունաբերական

¹ Կոնվենցիան ընդունվել է 1991թ. Էսպոյում, վավերացվել է ՀՀ կողմից 1996թ.:

² Արձանագրությունն ընդունվել է 2003թ. Կիևում, ստորագրվել է ՀՀ կողմից 2003թ., դեռևս չի վավերացվել:

արտադրությունը, բավականաչափ տուժել էին տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքները, կանաչ տարածքները: Արմատական փոփոխություն են կրել քաղաքի տնտեսական և սոցիալական կառուցվածքը, կտրուկ վատացել ժողովրդագրական իրավիճակը:

Ձևավորվել էր սկզբունքորեն նոր քաղաքաշինական իրավիճակ, որը չէր կարող նախատեսվել քաղաքի զարգացման նախորդ ծրագրերում: Քաղաքի կառուցապատումը, որոշ բացառությամբ, իրականացվում էր բավարար չափով չհիմնավորելով քաղաքաշինական լուծումները, հաշվի չառնելով շինարարական նորմերը, ռեսուրսախնայողությունը, տարածքի համալիր զարգացումը և դրա գործառույթային նշանակությունը, շրջակա միջավայրի պահպանությունը:

Հետագայում երկրում իրականացվեցին նոր հասարակական կառուցվածքին համապատասխանող շուկայական տնտեսության ստեղծմանը, կառավարման ապակենտրոնացմանն ու հասարակության ժողովրդավարացմանն ուղղված մի շարք ձևափոխումներ:

Իրավիճակի և տնտեսական աճի կայունացմանը զուգընթաց, սկսվել է քաղաքի կենսագործունեության ապահովման խախտված համակարգերի աստիճանաբար վերականգնում: Վերջին տարիներին երկրում տեղի է ունենում տնտեսական աճ, բավականին հստակ դրսևորվել են շուկայական հարաբերությունները և քաղաքի հետագա զարգացման ուղիները: Հիմնականում ձևավորված է քաղաքաշինության և հողօգտագործման ժամանակակից իրավական և նորմատիվային բազան:

Ղլխավոր հատակագծի նպատակները և խնդիրները

Երևանի ղլխավոր հատակագիծը հանդիսանում է կանխատեսական բնույթի փաստաթուղթ, որը սահմանում է քաղաքի զարգացման ռազմավարությունը՝ հիմնված ժամանակակից վիճակի և պոտենցիալ տնտեսական հնարավորությունների իրական գնահատման վրա: Այս ղեկավար փաստաթղթի հիմնական դրույթները հիմք են ծառայելու գոտիների, ենթակառուցվածքների, համայնքների ու քաղաքային տնտեսության ոլորտների զարգացման համապատասխան նպատակային ծրագրերում (սխեմաներում, նախագծերում) համապատասխան խնդիրների մանրամասնման համար:

ԵԳՀ նպատակն է նոր սոցիալ-տնտեսական պայմաններում քաղաքաշինության ռազմավարության ձևավորումը՝ ուղղված կենսագործունեության բարենպաստ միջավայրի ստեղծմանը և քաղաքի կայուն զարգացման ապահովմանը:

ԵԳՀ համաձայն՝ նշված առաջնային խնդիրների լուծումը նախատեսված է հետևյալ առաջնային խնդիրների (գործողությունների ուղղությունների) միջոցով.

1. Պլանավորման կառուցվածքի կատարելագործում, քաղաքային միջավայրի տարածական ամբողջականության և ֆունկցիոնալ բավարարության ապահովում,
2. Տրանսպորտային և ինժեներային ենթակառուցվածքների կատարելագործում՝ ա. տրանսպորտային կառուցվածքների կատարելագործում, բ. ինժեներային ենթակառուցվածքների կատարելագործում,
3. Էկոլոգիապես մաքուր արտադրության զարգացում՝ ա. Արդյունաբերական գոտիների ընդլայնման բացառում, բ. Գյուղատնտեսական արտադրությունների վերապրոֆիլավորում կամ դուրսբերում քաղաքից,
4. Կենսապայմանների բարելավում և բնակելի ֆոնդի արդիականացում,

5. Բնական կոմպլեքսի կայունության վերականգնում և բարձրացում, բնակչության առողջության համար էկոլոգիական ռիսկերի նվազեցում,
 - ա. բնական միջավայրի բոլոր տարրերի վիճակի բարելավում,
 - բ. վտանգավոր բնական երևույթներից տարածքների ինժեներատեխնիկական պաշտպանության,
6. Պատմամշակութային ժառանգության պահպանում:

Գլխավոր հատակագծի ընդհանուր մոտեցումները

ԵԳՀ մշակվել է քաղաքի գոյություն ունեցող վարչատարածքային սահմանների շրջանակներում (26 300հա) 1.200 մլն. մարդ բնակչության հաշվարկով: Փաստաթուղթը մշակվել է ոչ թե բնագավառային, այլ տարածքային սկզբունքով, որն իր մեջ պարունակում է խնդիրների լուծման այլընտրանքային մոտեցումներ՝ սեփականության բոլոր ձևերի ներգրավվմամբ:

Երևան քաղաքը դիտվում է որպես սուվերեն պետության մայրաքաղաք, Հայաստանի Հանրապետության գործարար և մշակութային կենտրոն, երևանյան ագլոմերացիայի հատակագծային կենտրոն:

Գլխավոր հատակագիծը հիմք է ընդունում կայուն զարգացման սկզբունքները՝ նպատակ ունենալով ապահովել սոցիալական, տնտեսական և էկոլոգիական ոլորտների հավասարակշռած զարգացումը: Փաստաթղթի իրականացման գործընթացը նախատեսվում է իրականացնել անընդհատ մոնիտորինգի, միտումների գնահատման, պահանջների և պահանջարկի կանխատեսման զուգահեռ անցկացմամբ՝ պարբերաբար մտցնելով ձգարտումներ:

Համապատասխան փաստաթղթերը

ԵԳՀ մշակման հիմքում ընկած են հետևյալ հիմնադրությային և նորմատիվ-իրավական փաստաթղթերը.

- o «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1995)
- o ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծը (ՀՀ կառավարության 10.04.03թ. թիվ 610-Ն որոշում)
- o Երևան քաղաքի 2004-2007թթ. սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրությունները (ՀՀ կառավարության 19.02.04թ. թիվ 6 արձանագրային որոշում)
- o Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման և հաստատման ու փոփոխման կարգը (ՀՀ կառավարության 02.05.2003թ. թիվ 609-Ն որոշում)
- o Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения схем и проектов районной планировки и застройки городов, поселков и сельских населенных пунктов (ВСН 38-82, Госстроя СССР, 1984)

III. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմավարական էկոլոգիական գնահատում

ՌԷԳ-ը հանդիսանում է շրջակա միջավայրի քաղաքականության իրականացման համեմատաբար նոր միջոց, որը, համաձայն Էսպոյի կոնվենցիային կից ՌԷԳ արձանագրության, կիրառվում է զարգացման հիմնադրությային փաստաթուղթ ծառայող պլանների և ծրագրերի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև քաղաքականության և օրենսդրության գնահատման համար:

ՌէԳ նպատակն է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա ԵԳՀ իրականացման արդյունքում հնարավոր ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

ՌէԳ խնդիրներն են.

- էկոլոգիական անվտանգության պահանջների և բնապահպանական սահմանափակումների հիման վրա կայուն զարգացմանը նպաստելը,
- հիմնադրույթային փաստաթղթի դրույթների և նախատեսվող գործունեության դրական ազդեցությունների պահպանման, բացասական ազդեցությունների ու դրանց հետևանքների կանխարգելման, նվազեցման կամ բացառման և անդառնալի բացասական ազդեցություն ունեցող դրույթների ու գործունեության բացառման ապահովումը,
- բնական ու տեխնածին աղետների և այլ արտակարգ ու վթարային իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովումը,
- հասարակայնության ծանուցման ու մասնակցության հնարավորության ապահովումը:

Հայաստանի Հանրապետությունում ՌէԳ-ը կարգավորող հատուկ օրենսդրական կամ մեթոդաբանական փաստաթուղթ չկա: Անուղղակի կերպով ՌէԳ-ը, այն էլ մասնակիորեն, կանոնակարգվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (1995թ.), որի համապատասխան՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, ի թիվս այլ փաստաթղթերի, ենթակա են նաև բնակավայրերի գլխավոր հատակագծերը: Օրենքն ամրագրում է, որ ռազմավարական փաստաթղթի մշակման ընթացքում իրականացվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար հետազոտություններ, սակայն դրանց ծավալը դեռևս սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ: Օրենքի անհստակությունը և էկոլոգիական գնահատման գործընթացի վերաբերյալ դրույթների անկատարությունը սահմանափակում է դրա գործնական կիրառումը:

Հիմքերը

Հաշի առնելով վերոհիշյալ սահմանափակումները, Երևան քաղաքի զարգացման գլխավոր հատակագծի ՌէԳ-ի համար անհրաժեշտ է եղել ուրվագծել նոր մեթոդաբանություն, որը հետագայում կարող է օրինակ ծառայել այլ նմանատիպ փաստաթղթերի էկոլոգիական գնահատման համար: Գլխավոր հատակագծի ՌէԳ մեթոդաբանության հիմքում ընկած է «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրության դրույթները, Չեխիայի Հանրապետության զարգացման ազգային ծրագրի և տարածաշրջանային զարգացման հայեցակարգի գնահատման մեթոդները՝ գնահատման առարկաների որոշակի նմանության պատճառով, Կենտրոնական և Արևելյան երկրների տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի կողմից մշակման ընթացքում գնտվող «ՌէԳ ձեռնարկի» նյութերը, ինչպես նաև «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծի մի շարք դրույթներ: Մեթոդաբանության կարևորագույն բաղադրիչ է հանդիսանում շահագրգիռ կողմերի և հասարակայնության ներգրավումը ՌէԳ-ի ողջ գործընթացին՝ հիմք ընդունելով «Շրջակա միջավայրին առնչվող տեղեկության մատչելիության, որոշումների ընդունմանը հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ ԵՏՀ կոնվենցիայի դրույթները:

ՌէԳ գործընթացի տվյալ մեթոդաբանությունը զգալի չափով հիմք է ընդունել գլխավոր հատակագծի համար 2001թ. ի վեր իրականացվող շրջակա միջավայրի ուսումնասիրությունները և մշակված նյութերը:

Նաև հաշվի է առնվել շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հասարակայնության ներգրավմանն ուղղված միջոցառումները: Վերջիններս ընդգրկում են Երևանի

գլխավոր հատակագծի և Երևանի ագլոմերացիայի մշակման աշխատանքների համակարգման միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծումը՝ ՀՀ վարչապետի որոշմամբ, Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակման հետ կապված աշխատանքային հանձնաժողովը՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ, քննարկումների կազմակերպումը Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի, Հայաստանի ճարտարապետների միության և էկոլոգիական հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ:

Նպատակը և խնդիրները

Մեթոդաբանության նպատակն է՝ հիմնադրությային (ռազմավարական նշանակության) փաստաթղթերի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատման գործընթացի կանոնակարգումը՝ հստակ, հերթականորեն կատարվող գործողությունների ամրագրման միջոցով: Տվյալ մեթոդաբանությունը ենթադրում է բնապահպանական նկատառումների հնարավոր հետագա ինտեգրում երկրի տնտեսության ճյուղերի զարգացման պլաններում, ծրագրերում և այլ հիմնադրությային փաստաթղթերում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները առավելագույնս նվազեցնելու նպատակով:

Միջազգային լավագույն պրակտիկայից ելնելով՝ ՌԷԳ առաջակվում է իրականացնել համապատասխան հիմնադրությային փաստաթղթի մշակման հետ զուգահեռ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՌԷԳ գործընթացը սկսվելիս ԵԳՀ մշակումը մոտենում էր իր ավարտական փուլին՝ մեթոդաբանության հիմնական խնդիրներն ընտրվել են առավելագույնս ապահովելու ՌԷԳ արդյունավետությունը: Դրանք են՝

- ՌԷԳ-ը կանոնակարգող ազգային նորմատիվ-մեթոդական փաստաթղթի բացակայության պայմաններում՝ տվյալ գործընթացի հնարավոր համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված կամ ստորագրված կոնվենցիաների և համապատասխան արձանագրության պահանջներին,
- գնահատման ընթացքում ազգային օրենսդրության պահանջների հաշվի առում և օգտագործում,
- բնապահպանության և առողջապահության ոլորտների պետական մարմինների ներգրավում գնահատման շրջանակների որոշմանը,
- ՌԷԳ գործընթացում ԳՀՀԽ հետ հաղորդակցության և հետադարձ կապի ապահովում,
- շահագրգիռ հասարակայնության պատշաճ և ժամանակին տեղեկացում, ներգրավում քննարկումներին, դիտողությունների ներկայացման հնարավորության ընձեռում և կարծիքների հաշվի առում:

Գլխավոր հատակագծի ՌԷԳ մեթոդաբանության շրջանակներում իրականացվում են հետևյալ քայլերը.

- առնչվող ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրություն և հենակետային բնապահպանական (ներառյալ՝ առողջապահական) նպատակների ընտրություն՝ հիմք ընդունելով համապատասխան միջազգային և ազգային օրենսդրությունը,
- հենակետային բնապահպանական նպատակները բնութագրող ցուցանիշների ընտրություն,
- շրջակա միջավայրին (ներառյալ՝ մարդու առողջությունը) առնչվող հարցերի լուսաբանման գնահատում և առաջարկությունների ներկայացում,
- հենակետային բնապահպանական խնդիրների և գլխավոր հատակագծի նախագծի առաջնային խնդիրների կապի գնահատում,
- գլխավոր հատակագծի նախագծի լուծումների (գործողությունների ուղղության) արդյունքում շրջակա միջավայրի (ներառյալ՝ մարդու առողջության) վրա ազդեցության գնահատում՝ հիմք ընդունելով ընտրված բնապահպանական (ներառյալ՝ առողջապահական) նպատակները, այլընտրանքային

- տարբերակների դիտարկում (հնարավորության դեպքում) և առաջարկությունների ներկայացում,
- մոնիտորինգի պլանի գնահատում՝ դրա իրատեսական լինելու և շրջակա միջավայրի (ներառյալ՝ մարդու առողջության) վրա հիմնական ազդեցությունների վերլուծության հնարավորություն ընձեռելու տեսանկյունից և առաջարկությունների ներկայացում.
 - նախագծող խմբի կողմից գլխավոր հատակագծում փոփոխությունների կատարում, կամ կատարված առաջարկությունների հիմնավորված մերժման ներկայացում գնահատման ենթախմբին,
 - ՌԷԳ հաշվետվության նախագծի մշակում, շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հասարակայնության հետ քննարկում և ամփոփում՝ հաշվի առնելով նրանց կարծիքը,
 - ՌԷԳ հաշվետվության վերջնական տարբերակի մշակում և ներկայացում ԵԳՀ հեղինակային խմբի, Երևանի քաղաքապետարան և ՀՀ բնապահպանության նախարարություն:

Հաշվի առնելով ՄԱԶԾ կողմից հովանավորվող ՌԷԳ փորձնական ծրագրի ժամկետային սահմանափակումները և գլխավոր հատակագծի նախագծի փաստաթղթի մշակման շարունակվող աշխատանքները, գլխավոր հատակագծի նախագծի՝ շրջակա միջավայրին (ներառյալ՝ մարդու առողջությունը) առնչվող հարցերի լուսաբանման գնահատումն իրականացվել և ՌԷԳ հաշվետվության նախագիծը կազմվել է հատակագծի հայեցակարգի համար: Համապատասխան առաջարկությունները ներկայացվել են ԵԳՀ նախագծող հեղինակային խմբին և համապատասխանաբար հաշվի առնվել գլխավոր հատակագծի նախագծում:

ՌԷԳ շրջանակները

ՌԷԳ շրջանակները սահմանվել են՝ հիմք ընդունելով խոշոր քաղաքների գլխավոր հատակագծերի առանձնահատկությունները, մասնավորապես՝ շրջակա միջավայրի գրեթե բոլոր տարրերի, այդ թվում՝ մարդու առողջության ընդգրկումը և փոխշահակապվածությունը, ինչպես նաև՝ հետազայում քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերի և նախատեսվող գործունեությունների համար հիմնադրությային փաստաթուղթ հանդես գալու հանգամանքը:

ՌԷԳ շրջանակները ճշգրիտ ուրվագծելու նպատակով հարցում է կատարվել ՀՀ առողջապահության և բնապահպանության նախարարություններին՝ ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերի ցանկը: ՀՀ առողջապահության նախարարությունը իրեն հետաքրքրող հարցերի շրջանակը չի տրամադրել: ՀՀ բնապահպանության նախարարության տրամադրված ցանկը ներկայացված է *Հավելված 1*-ում:

Գլխավոր հատակագծի մշակման ընթացքում շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու առողջության վերաբերյալ ելակետային տեղեկատվության սահմանափակումների պատճառով ՌԷԳ մեթոդաբանությունը նախատեսում է ամփոփ, հիմնականում՝ որակական և աշխատատար կամ մեծ նյութական միջոցներ չպահաջող փորձագիտական գնահատումների կիրառում:

Բացի այդ, հաշվի առնելով, որ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը հանդիսանում է հիմնադրությային փաստաթուղթ հետագա քաղաքաշինական գոտիավորման փաստաթղթերի, մանրամասն հատակագծերի կամ դրանցից բխող առանձին օբյեկտների նախագծերի համար, որոնց համար պետք է համապատասխանաբար իրականացվեն ավելի մանրամասն էկոլոգիական գնահատումներ, տվյալ փուլում ավելի ռացիոնալ և նպատակահարմար է համարվում որակական և ընդհանրացված գնահատումների կիրառումը, ինչը բխում է նաև ռազմավարական էկոլոգիական գնահատման առանձնահատկությունից:

Ճահագրգիռ կողմերի ներգրավումը

Մասնագիտական քննարկումներ

Մասնագիտական առումով առավել ճշգրիտ գնահատումներ իրականացնելու նպատակով մեթաբանությունը նախատեսել է ԵԳՀ գործողության արդյունքում շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու առողջության վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ մասնագիտական քննարկումների կազմակերպում:

ՌԷԳ ծրագրի շրջանակներում իրականացվել են մասնագիտական քննարկումներ՝ շրջակա միջավայրի հարցերին առնչվող բոլոր շահագրգիռ պետական և ոչ պետական մասնագիտացված համապատասխան փորձագետների ներգրավմամբ:

Առաջին քննարկումը կազմակերպվել է ՌԷԳ շրջանակները որոշելու նպատակով: Մոտ 50 կազմակերպությունների ուղարկվել է հրավեր և հրապարակվել բաց հայտարարություն 3 լրատվամիջոցով (*Հայաստանի Հանրապետություն, Առավոտ, Գոլոս Արմենիի*)՝ տեղեկացնելով քննարկումների իրականացման, բովանդակության, նպատակի, գլխավոր հատակագծի հայեցակարգին ծանոթանալու տեղի և ժամանակի վերաբերյալ: Հետաքրքրություն արտահայտած անձինք հրավիրվել են մասնակցելու քննարկումներին և հանդես գալու կարծիքներով ու առաջարկություններով:

Երկրորդ մասնագիտական քննարկումը նվիրված էր Երևանի կանաչ տարածքներին առնչվող հարցերին, որը ՌԷԳ-ի ընթացքում բացահայտվել էր որպես բացասական ազդեցության նկատմամբ առավել զգայուն ոլորտ: Քննարկմանը հրավիրված էին համապատասխան պետական և ոչ պետական կառույցների մասնագետները:

Երրորդ քննարկման նպատակն էր ստանալ պետական կառույցների դիտողությունները և առաջարկությունները Երևանի գլխավոր հատակագծի ՌԷԳ հաշվետվության վերաբերյալ:

Քննարկումներից հետո 10-օրյա ժամկետում մասնագետները՝ համապատասխան գրավոր առաջարկությունները ներկայացրել են ՌԷԳ խմբին և գլխավոր հատակագծի հեղինակներին:

Հասարակական քննարկումներ

Գլխավոր հատակագծի ռազմավարական էկոլոգիական բնապահպանական գնահատման լավագույն արդյունքներ ստանալու համար մեթոդոլոգիան նախատեսել էր հասարակական քննարկումների կազմակերպում և իրականացում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ԵԳՀ և դրա ՌԷԳ հաշվետվության հասարակական քննարկումների մասին հասարակայնության ծանուցում *Հայաստանի Հանրապետություն, Առավոտ, Գոլոս Արմենիի* թերթերում և էլեկտրոնային ցանցերում: Գլխավոր հատակագծի մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ քարտեզները տեղադրվել և ցուցադրվել են «Երևաննախագիծ» ինստիտուտում, Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնում (Օրիուսի կենտրոն), ինչպես նաև բնապահպանական ֆորումի և Օրիուսի կենտրոնի ինտերնետային կայքերում: Հասարակայնության ծանուցումից 30 օր հետո իրականացվել են հասարակական լսումներ Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ՝ ի կատարումն ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի պահանջների, ինչպես նաև՝ Օրիուսի Կոնվենցիայի և ՌԷԳ արձանագրության դրույթների:

Մասնագիտական և հասարակական քննարկումների արձանագրությունը ներկայացված է *Հավելված 2*-ում:

ՈւՊ սահմանափակումներ

ԵԳՀ մշակման ընթացքում ծագել են մի շարք դժվարություններ կապված տարածքային պլանավորման և շրջակա միջավայրի պահպանության ազգային նորմատիվ մեթոդական նյութերի բացակայության, տեխնաժին ազդեցության և աղտոտման վերաբերյալ տվյալների անբավարարության ու ճշմարտացիության, արդյունաբերության հեռանկարային զարգացման անորոշության հետ: Նշված դժվարությունները զգալի չափով հաղթահարվել են նախկին ԽՍՀՄ նորմատիվները և մեթոդիկաները իրական տեղական պայմաններին հարմարեցնելու, բնօրինակային ուսումնասիրությունների, ստուգիչ հաշվարկների և փորձագիտական գնահատումների միջոցով:

IV. ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆՂԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Հենակետային բնապահպանական խնդիրները

ԵԳՀ առնչվող հենակետային բնապահպանական խնդիրները ընտրվել են հիմք ընդունելով գլխավոր հատակագծի մշակման ընթացքում իրականացված էկոլոգիական առկա իրավիճակի ուսումնասիրության արդյունքները և կանխատեսումները ու քաղաքի զարգացման հեռանկարը, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված բնապահպանական հարցերի շրջանակը (*Հավելված 1*) և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ռազմավարական բնույթի հիմնադրույթային փաստաթղթերը՝ առանձնացնելով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր բոլոր ազդեցություններից առավել զգալի բացասական հետևանքներ ունեցող գործունեությունները:

Հենակետային բնապահպանական խնդիրներն են՝

1. Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում,
2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում,
3. Հողային ծածկի պահպանում և վերականգնում,
4. Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում,
5. Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում,
6. Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն,
7. Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում:

Նշված խնդիրները ներառում են մի շարք ենթահարցեր, որոնք բերված են ստորև.

1. Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում

(այդ թվում՝ մթնոլորտը աղտոտող վնասակար նյութերի կրճատում)

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր են հանդիսանում ավտոտրանսպորտը, արդյունաբերական ձեռնարկությունները, էներգետիկայի օբյեկտները (Երևանի ՋԷԿ-ը, կաթսայատները) և այլ անշարժ ու շարժական արտանետման աղբյուրներ: Ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդների, ցնդող օրգանական միացությունների, փոշու և կայուն օրգանական աղտոտիչների արտանետումները հանգեցնում են մթնոլորտի աղտոտմանը՝ մարդու առողջության վրա իր բացասական հետևանքներով:

2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում

(այդ թվում՝ խմելու ջրի կորուստների կրճատում, կեղտաջրերի կոյուղավորում, արդյունաբերական կեղտաջրերի նախնական մաքրում, քաղաքային կեղտաջրերի մաքրում, գետերի հունների և Երևանյան լճի մաքրում հատակային նստվածքներից):

Երևան քաղաքի ջրամատակարարման ցանցի հնության և տեխնիկական վատթար վիճակի պատճառով առկա են քաղցրահամ աղբյուրների ջրերի մոտ 70 տոկոս կորուստներ: Կարևորվում է ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման 1-ին և 2-րդ գոտիների պահպանության խնդիրը:

Հրատապ խնդիր է դարձել Երևան քաղաքի կոյուղու ցանցերի վերակառուցումը և նորերի կառուցումը, կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնումը կամ նոր կայանի կառուցումը: Գոյություն ունեցող կոյուղու ցանցերի մաշվածությունը կարող են պատճառ դառնալ կեղտաջրերի արտահոսքերի, ինչը մեծ վտանգ կներկայացնի շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Բացի այդ, մի շարք արդյունաբերական ձեռնարկությունների կեղտաջրեր առանց նախնական մաքրման արտահոսում են քաղաքի կոյուղու ցանց, այնուհետև կեղտաջրերի մաքրման կայան և իրենց կազմում եղած վտանգավոր և տոքսիկ նյութերով առաջացնում մաքրման կենսաբանական պրոցեսների խափանում:

Լուծում պահանջող հիմնահարց է նաև Երևան քաղաքի կեղտաջրերի ամբողջ քանակի, այդ թվում՝ անձրևաջրերի խորը մաքրումը: Գոյություն ունեցող մաքրման կայանի մաշվածության և անբավարար տեխնիկական վիճակի պատճառով ի վերջո աղտոտվում է Հրազդան գետի ջուրը, որն էլ իր հերթին՝ Արաքս անդրսահմանային գետը, ինչի հետևանքով հնարավոր է Հայաստանի կողմից իր միջազգային պարտավորությունների խախտում և համապատասխան պատասխանատվության ստանձնում:

Երևան քաղաքի մի շարք ջրային օբյեկտների (Գետառ և Հրազդան գետեր, Երևանյան լիճ և այլն) հուններում, հատակներում և ափերին կուտակված են ծանր մետաղներ և այլ վտանգավոր նյութեր պարունակող նստվածք, ինչպես նաև մեծ քանակությամբ կենցաղային և շինարարական աղբ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ, թե շրջակա միջավայրի և թե մարդու առողջության վրա:

Աղտոտվածության ազդեցությունը ավելի է մեծանում այդ գետերի փոքր բնապահպանական էլքերի պատճառով: Դրան նպաստում են նաև մի քանի տասնյակ տարի առաջ ստեղծված բառաժների (մոտ 3 մ բարձրությամբ բետոնե պատվարներ) անհաջող կոնֆիգուրացիան, որի հետևանքով ստեղծված լճակներում գոյանում են «մեռյալ գոտիներ»՝ զգալիորեն նպաստելով աղտոտվածության կուտակմանը, հետագա փտմանը և ջրի որակի վատթարացմանը:

3. Հողային ծածկի պահպանում և վերականգնում

(այդ թվում՝ տարածքների պահպանում տարերային աղետներից, տեխնածին ազդեցություններից, հանքավայրերի շահագործման սահմանափակում, խաթարված տարածքների վերականգնում)

Քաղաքի տարածքները տարիների ընթացքում աղտոտվել են ծանր մետաղներով, այլ վնասակար միացություններով, հողը կորցրել է իր որակական հատկանիշները: Մասնավորապես՝ լուրջ խնդիր է քաղաքի սահմաններում գոյություն ունեցող գյուղատնտեսական հողերի աղտոտվածությունը ծանր մետաղներով, ինչպես նաև գյուղատնտեսությունում օգտագործվող թունաքիմիկատներով և նիտրատներով: Գյուղատնտեսական արտադրության ընթացքում նշված նյութերը թափանցում են

բնակչության կողմից սպառվող մշակաբույսեր՝ վտանգելով բնակիչների առողջությունը:

Տարածքները փոփոխություններ են կրել տարերային աղետներից և տեխնաժին երևույթներից: Մեծ քանակություն են կազմում էրոզիոն, սահքային, սողանքային երևույթների ազդեցությունից փոփոխված տարածքները:

Նշված երևույթների տարածմանը էլ ավելի են նպաստում հանքավայրերի անկանոն, ապօրինի շահագործումը, իսկ շահագործված հանքավայրերի տարածքները տարիներ շարունակ չեն վերականգնվել:

4. Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում

ԽՍՀՄ փլուզումից հետո՝ էներգետիկ ճգնաժամի, սոցիալ տնտեսական ծանր իրավիճակի պատճառով մեծ փոփոխություններ կրեցին թե՛ քաղաքային լանդշաֆտը, թե՛ կանաչ տարածքներն ու անտառները: Քաղաքի կանաչ տարածքների զգալի մասը ոչնչացվեցին, իսկ ներկայումս շարունակում են իրենց տեղը զիջել բենզակայաններին, առևտրի, հասարակական սննդի և այլ օբյեկտների:

5. Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում

(այդ թվում՝ կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքում, օգտագործում, վերամշակում, տեղափոխում, տեղադրում և վնասազերծում)

Քաղաքային աղբյուսում կուտակված աղբը հաճախ ենթարկվում է ինքնայրման, ինչը հանդիսանում է կայուն օրգանական աղտոտիչներով շրջակա միջավայրի աղտոտման: Բացի այդ կան կենցաղային թափոնների բազմաթիվ չկազմակերպված կուտակումներ քաղաքի տարբեր մասերում:

Լուծված չեն արտադրական թափոնների (այդ թվում՝ նախկինում գոյացած թափոնների) կառավարման, ինչպես նաև՝ արտադրական թափոնների պոլիգոնի ստեղծման հարցերը:

Արդյունաբերական ձեռնարկությունների տարածքները աղտոտված են արդյունաբերական թափոններով, նավթամթերքներով, պահեստավորված նյութերով, շինարարական ու այլ աղբով և այս վիճակով վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի և մարդու առողջության համար:

6. Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն

(այդ թվում՝ աղմուկ, էլեկտրամագնիսական ճառագայթում և վիբրացիա)

Քաղաքում մարդու առողջության վրա ազդող բացասական ազդեցություններն են մեզապոլիսներին հատուկ աղմուկը, էլեկտրամագնիսական ճառագայթումը և վիբրացիան, որոնք զգալի ազդեցություն են թողնում մարդու առողջության վրա:

7. Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում

Մարդու առողջությանը զգալի վնաս են հասցնում շրջակա միջավայրի տարրերի աղտոտվածությունը և ֆիզիկական ազդեցությունները, որոնք գումարվելով ընդհանուր սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններին հաճախ հանգեցնում են ստրեսային վիճակի:

Քաղաքի շատ շրջաններում պատշաճ մակարդակով չի կատարվում բակերի սանիտարական մաքրումը և աղբահանումը, ինչը նպաստում է գարշահոտության և կրծողների տարածմանը:

Համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը

Գլխավոր հատակագծի ՌԷԳ շրջանակներում ուսումնասիրվել է ընտրված հենակետային բնապահպանական հարցերի համահունչ լինելը ՀՀ օրենսդրությանը, այդ թվում՝ ՀՀ կողմից վավերացված կամ ստորագրված միջազգային համաձայնագրերին, դրանց համապատասխան արձանագրություններին, ՀՀ օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և վերջիններով հաստատված ազգային ծրագրերին ու պլաններին:

Մասնավորապես, բոլոր հենակետային բնապահպանական խնդիրների հիմքում ընկած են «ՀՀ բնության պահպանության մասին օրենսդրության հիմունքների» (1991), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (1995), ինչպես նաև՝ «Շրջակա միջավայրի պահպանության ազգային ծրագրի» համապատասխան դրույթները:

Հենակետային բնապահպանական խնդիրների կապը մյուս առնչվող փաստաթղթերի հետ ներկայացվում է ստորև.

Ազգային օրենսդրություն	Միջազգային համաձայնագրեր
1. Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	
<ul style="list-style-type: none"> ▪ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994) ▪ «Ազգային գործողությունների ծրագիր կայուն օրգանական աղտոտիչների մասին» (ՀՀ կառավարության 03.06.2004թ. որոշում) ▪ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» (ՀՀ կառավարության 08.08.03թ. թիվ 994-Ն որոշում) 	<ul style="list-style-type: none"> ▪ ՄԱԿ ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիա (1979) ▪ ՄԱԿ ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (1992) ▪ ՄԱԿ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրություն (1997) ▪ ՄԱԿ ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիային կից «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» արձանագրություն (1998) ▪ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (2001)
2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	
<ul style="list-style-type: none"> ▪ ՀՀ Ջրային օրենսգիրք (2002) ▪ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» (2003) ▪ Ջրի ազգային քաղաքականություն (2005) 	<ul style="list-style-type: none"> • ՄԱԿ ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (1992) • ՄԱԿ ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիային կից «Ջրի և առողջության մասին» արձանագրություն (1999)
3. Հողային ծածկի պահպանում և վերականգնում	
<ul style="list-style-type: none"> ▪ «Հողային օրենսգիրք» (2001) ▪ Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք (2002) ▪ «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենք (2002) ▪ «Հայաստանի Հանրապետությունում 	<ul style="list-style-type: none"> ▪ ՄԱԿ «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիա (1994)

<p>անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր» (ՀՀ կառավարության 28.03.2002թ. թիվ 13 արձանագրային որոշում)</p>	
<p>4. Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում</p>	
<ul style="list-style-type: none"> ▪ «ՀՀ անտառային օրենսգիրք» (1994) ▪ «Հայաստանի Հանրապետության անտառի ազգային քաղաքականություն և ռազմավարություն» (ՀՀ կառավարության 30.09.04թ. թիվ 38 արձանագրային որոշում) ▪ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» (2003) 	<ul style="list-style-type: none"> ▪ ՄԱԿ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (1992) ▪ ՄԱԿ «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիա (1992) ▪ ՄԱԿ «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիա (1994) ▪ Լանդշաֆտների եվրոպական Կոնվենցիա (2003)
<p>5. Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում</p>	
<ul style="list-style-type: none"> ▪ «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) ▪ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» (2003) 	<ul style="list-style-type: none"> ▪ «Վտանգավոր և այլ թափոնների անդրսահմանային տեղափոխման և հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (1989) ▪ ՄԱԿ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (1992) ▪ ՄԱԿ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրություն (1997) ▪ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (2001)
<p>6. Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն</p>	
<ul style="list-style-type: none"> ▪ «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը (1992) ▪ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994) 	
<p>7. Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում</p>	
<ul style="list-style-type: none"> ▪ «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք (1992) ▪ «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների ազգային ծրագրի մասին» (ՀՀ կառավարության 01.08.01 թիվ 1204-Ն որոշում) 	<ul style="list-style-type: none"> ▪ ՄԱԿ ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիային կից «Ջրի և առողջության մասին» արձանագրություն (1999)

Հենակետային բնապահպանական խնդիրների ցուցանիշները

Գլխավոր հատակագծի իրականացման արդյունքում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գնահատելու նպատակով ընտրվել են ցուցանիշներ, որոնք կարող են ընդհանուր պատկերացում տալ Երևան քաղաքի շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու առողջության վիճակի մասին:

Նշված ցուցանիշները ԵԳՀ ՌԷԳ հաշվետվության մեջ օգտագործվում են հետևյալ նպատակներով՝

- գնահատելու հենակետային բնապահպանական խնդիրների արտացոլումը ԵԳՀ հայեցակարգում,
- մշակելու գլխավոր հատակագծի և դրանով նախատեսվող միջոցառումների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու առողջության վրա ազդեցության մոնիտորինգի պլան,
- առաջարկելու լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված հենակետային բնապահպանական խնդիրների իրականացմանը,
- հիմք ծառայելու գլխավոր հատակագծից բխող միջոցառումների ռազմավարական էկոլոգիական գնահատման կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում:

Հենակետային բնապահպանական նպատակների ընտրված ցուցանիշները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Ցուցանիշներ	
1. Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	
1.1	Օդի աղտոտվածության մակարդակի նվազում՝ ըստ ՍԹԿ բազմապատիկի <ul style="list-style-type: none"> ▪ ազոտի օքսիդներ ▪ ածխածնի օքսիդ ▪ ցնդող օրգանական միացություններ ▪ կայուն օրգանական աղտոտիչներ ▪ փոշի
1.2	Ըստ քաղաքաշինական նորմերի խիտ կառուցապատված տարածքներում կառուցապատման խտության նվազեցում
2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	
2.1	Քաղաքային ցանցերում ջրերի կորուստների նվազում (տոկոս)
2.2	Խմելու ջրի որակի պահպանում և բարելավում
2.3	Արտահոսքերի ծավալների նվազում <ul style="list-style-type: none"> ▪ արտահոսող կեղտաջրերի ընդհանուր ծավալի նվազում (խոր.մ/տարի)՝ ▪ արտահոսվող աղտոտիչների քանակի նվազում՝ ըստ ԹԿՊ (տոննա/տարի)
2.4	Ջրային օբյեկտների աղտոտվածության մակարդակի նվազում՝ ըստ ՍԹԿ բազմապատիկի <ul style="list-style-type: none"> ▪ ԹԿՊ ▪ նավթամթերքներ ▪ ծանր մետաղներ
2.5	Մաքրված կեղտաջրերի և անձրևաջրերի ծավալի աճ (տոկոս)
3. Հողային ծածկի պահպանում և վերականգնում	
3.1	Ծանր մետաղներով աղտոտվածության մակարդակի նվազում՝ ըստ ԿԳՑ
3.2	Ռադիոնուկլիդներով աղտոտվածության մակարդակի նվազում՝ ըստ ՍԹՄ
3.3	Գերնորմատիվային աղտոտված տարածքների մակերեսի նվազում (հա, տոկոս)
3.4	Վտանգավոր երկրաբանական երևույթների ենթակա տարածքների մակերեսի նվազում (հա) <ul style="list-style-type: none"> ▪ ջրաողողումներ ▪ սելավներ ▪ սողանքներ
4. Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	
4.1	Կանաչ տարածքների մակերեսի աճ <ul style="list-style-type: none"> ▪ կանաչ տարածքների, այդ թվում՝ վերականգնվող և նոր հիմնվող,

	<ul style="list-style-type: none"> ընդհանուր մակերես, (հա) ▪ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը (հա, քառ.մ/մարդ) ▪ հատուկ պահպանվող տարածքների բնապահպանական հողերի մակերեսը (հա) ▪ անտառային հողերի մակերեսը (հա)
5. Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	
5.1	Կազմակերպված աղբյուսների քանակը (հատ) և մակերեսի (հա) պահպանում
5.2	Չկազմակերպված աղբյուսների քանակի (հատ) և մակերեսի (հա) նվազում
5.3	Կենցաղային կողշտ թափոնների ընդհանուր ծավալից վերամշակվող և օգտագործվող թափոնների բաժնի աճ (տոկոս)
5.4	Սանիտարա-պաշտպանական գոտիների մակերեսի աճ (հա)
6. Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	
6.1	Աղմուկի մակարդակի նվազում՝ ըստ ՍԹՄ
6.2	Էլեկտրամագնիսական ճառագայթման մակարդակի նվազում՝ ըստ ՍԹՄ
6.3	Վիբրացիայի մակարդակի նվազում՝ ըստ ՍԹՄ
7. Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	
7.1	Էկոլոգիապես դիսկոմֆորտային գոտում ³ ապրող բնակչության թվի նվազում
7.2	Բնակչության հիվանդացության և մահացության դեպքերի նվազում՝ ըստ հետևյալ նոզոլոգիական ձևերի <ul style="list-style-type: none"> ▪ շնչառական հիվանդացություններ (մարդ/հազ.մարդ) ▪ սրտանոթային հիվանդացություններ (մարդ/հազ.մարդ)
7.3	Ջրով փոխանցվող հիվանդությունների բռնկումների ենթարկված մարդկանց քանակի նվազում

V. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԳԼԵԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

ԵԳՀ կազմում մշակվել է շրջակա միջավայրի պահպանության բաժին՝ բնակչության առողջության և կենսագործունեության համար բարենպաստ քաղաքային միջավայր ձևավորելու վերաբերյալ առաջարկություններ մշակելու նպատակով: Սակայն, հաշվի առնելով գլխավոր հատակագծի կողմից առաջադրվող լուծումների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ՌԷԳ շրջանակներում ուսումնասիրվել է ԵԳՀ հայեցակարգի ողջ փաստաթուղթը և գնահատվել դրանում շրջակա միջավայրին առնչվող խնդիրների արտացոլումը: ՌԷԳ խմբի դիտողությունների մեծ մասն ընդունվել և հաշվի է առնվել գլխավոր հատակագծի վերջնական բացատրագրում և սխեմաներում:

Ստորև բերված են ՌԷԳ խմբի առաջարկություններն ու դիտողությունները ԵԳՀ հայեցակարգի վերաբերյալ և դրանց համապատասխան հաշվի առումը ԳՀՀԽ կողմից ԵԳՀ փաստաթղթում:

Գլուխ 1. Երևան քաղաքի ձևավորման պատմական փուլերը

ՌԷԳ խումբը այս գլխի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չի ունեցել:

Գլուխ 2. Երևան քաղաքի 1971թ. գլխավոր հատակագծի իրացման վերլուծության հիմնական արդյունքները

³ Առկա և կանխատեսվող էկոլոգիապես դիսկոմֆորտային գոտիների սահմանները ներկայացված են *Գլխավոր հատակագծի հատոր 5, 11 և 15 սխեմաներում, էջ 49 և 70*

ՌԷԳ խումբը այս գլխի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չի ունեցել:

Գլուխ 3. Բնական պայմանների գնահատականը և հատակագծային սահմանափակումների գնահատականը

3.1 Հողային պաշարների և տարածքների օգտագործում

ա) ՌԷԳ խումբն առաջարկել է գլխավոր հատակագծում⁴ հիմնավորել և պարզաբանել 4516 հա տարածք զբաղեցնող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերի վերացումը, արդյունարդյունաբերության և պահեստարանների տարածքի ավելացումը մինչև 2459 հա-ից մինչև 2778 հա, հատուկ պահպանվող տարածքների մակերեսի աճը 592 հա-ից մինչև 1525 հա, անտառային հողերի նվազումը 1234 հա-ից մինչև 660 հա, և զբոսայգիների, զբոսապուրակների, պուրակների և այլ կանաչ տարածքների աճը 1119 հա-ից մինչև 3177 հա:

Դիտողությունն ընդունվել է: ԳՀՀԽ խումբը գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերի վերացումը հիմնավորել է այն հանգամանքով, որ ՀՀ ԳԱԱ էկոլոգանոռաֆերային հետազոտությունների կենտրոնի տրամադրած տվյալների համաձայն Երևան քաղաքի տարածքում գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերը, ինչպես նաև դրանց վրա աճող մշակաբույսերը աղտոտված են ծանր մետաղներով, ինչը վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ մարդու առողջության համար: Առաջարկվել է գյուղատնտեսական նշանակության հողերն օգտագործել գերեզմանոցները եզերող սանիտարական գոտիների,⁵ ինչպես նաև՝ մոտ 1380հա լրացուցիչ կանաչապատ տարածքի ապահովման համար՝ նորմատիվային ցուցանիշին հասնելու համար:

Արդյունաբերության և պահեստարանների տարածքը ներկայումս կազմում է 2952.6 հա: Գլխավոր հատակագծով նախատեսվում է Կենտրոն համայնքում գտնվող արդյունաբերական տարածքների մի մասը վերափոխել խառը կառուցապատման և ընդհանուր օգտագործման տարածքների, տեղակայելով այնտեղ նաև հասարակական նշանակության օբյեկտներ՝ համապատասխան կանաչապատումով: Նման միջոցառումների արդյունքում՝ արդյունաբերության և պահեստարանների տարածքները 2020թ. կկազմեն՝ 2459.6հա: Ընդհանուր առմամբ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների տարածքները կնվազեն 2765.8 – 2468.8հա:

Ըստ քաղաքի հողերի ճշգրտված հաշվեկշռի հատուկ պահպանվող տարածքների մակերեսն աճում է ի հաշիվ գերեզմանոցների՝ 595հա մինչև 714հա, ինչպես նաև սանիտարապաշտպանիչ գոտիների ավելացման 0-ից մինչև 1041հա:

Գլխավոր հատակագծով անտառայինը հողերի կրճատումը 1238.7հա-ից մինչև 1090 հա պայմանավորված է նրանով, որ տարածքների մի մասը փոխանցվում է ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների կարգավիճակի:

բ) Հաշվի առնելով Երևան քաղաքի շոգ և չոր բնակլիմայական պայմանները, ՌԷԳ խումբն առաջարկել է գլխավոր հատակագծում նախատեսել քաղաքի ջրային տարածքների մակերեսի հնարավորին ավելացում: Մասնավորապես, կարելի է Կենտրոն համայնքի արդյունաբերապահեստային տնտեսության տեղափոխման պատճառով ազատված տարածքները օգտագործել կանաչապատման կամ ջրային մակերեսներ ստեղծելու նպատակով:

Դիտողությունն ընդունվել է: ԳՀՀԽ խումբը խոշոր ջրային մակերեսների կազմակերպման հնարավորությունը ներկայումս գնահատել է խիստ

⁴ Հայեցակարգի տարածքների հաշվեկշռի և նախագծային օգտագործման 3.1.4 աղյուսակ

⁵ СНиП 2.07.01-89, п.5, табл.6, СН 245-71, п.8,4, класс III

սահմանափակ, իսկ փոքր ջրային մակերեսների կազմակերպումը կամ վերականգնումը նպատակահարմար է գտել դիտարկել որպես նախագծման հաջորդ փուլերի խնդիր:

- զ) ՌԷԳ խումբը, կարևորելով «ՀՀ տարաբնակեցման սխեմայի» համաձայն նախատեսված մերձքաղաքային ուղեկից-քաղաքների (տեխնոպոլիսների) դերը՝ Երևան քաղաքի բնակչության քանակը նվազեցնելու և դրա հետ կապված տեխնածին ճնշումը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա նվազեցնելու նպատակով, առաջարկել է գլխավոր հատակագծում մանրամասնել դրանց կառուցման խնդիրը: Բացի այդ առաջարկվել է դրանք տեղադրել ոչ թե մերձքաղաքային ինտենսիվ յուրացված գոտում, այլ տարաբնակեցման սխեմայով նախատեսված թույլ յուրացված գոտիներում, իսկ Երևանի գլխավոր հատակագծում հստակորեն ամրագրել ու հիմնավորել այդ քաղաքների տեղադրությունը, բնակչության թվաքանակը, դրանց սոցիալ-տնտեսական զարգացման ուղղվածությունը, տարբերակային ձևով վերլուծել դրանց իրականացման ժամկետը և հաջորդականությունը և այլ առնչվող հարցեր, առաջնորդվելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության սկզբունքով:

Համաձայն ՀՀ տարածքում տարաբնակեցման Գլխավոր սխեմայի պահանջների, նոր հեռանկարային բնակավայրերը տեղակայված են և բաշխվում են ոչ թե քաղաքամերձ ինտենսիվ յուրացված գոտում, այլ Երևանի ագլոմերացիայի կարգավորման համար հատուկ նախատեսվող գերիշխող զարգացման ռեժիմ ունեցող գոտիում: Հիմնական նպատակը՝ ոչ թե սուբուրբանիզացիան է, այլ հանրապետության տարածքում կոնտրուրբանիզացիոն գործնթացների ապահովումն է: Նախագծվող բնակավայրերը դիտարկվում են ոչ թե որպես «ուղեկից» կամ «արբանյակային» ննջարան-քաղաքներ, այլ որպես ինքնուրույն, ՀՀ տարածքում կայուն զարգացման սկզբունքները ներմուծող տեխնոպոլիսներ:

Բացի ՀՀ տարածքում տարաբնակեցման Գլխավոր սխեմայով ընդունված “Առուջ” և “Եվրոպոլիս” նոր բնակավայրերից, որոնք առաջարկվել է կառուցել Արագածոտնի և Սյունիքի մարզերում, ծրագրվում է նաև “Հայկ” հեռանկարային նոր բնակավայրի հիմնումը Երևան-Վայոց Ձոր հեռանկարային (մերձձակատային) ավտոմայրուղու վրա, քաղաքից դեպի արևելք՝ 15 կմ հեռավորության վրա: Բոլոր վերը նշված քաղաքների համար ժամանակին կատարվել են մանրամասն հիմնավորումներ և գլխավոր հատակագծերի ՏՏՀ-ներ, որոնց ճշգրտումը կիրականացվի նախագծային հաջորդ փուլում՝ Երևանի ագլոմերացիայի տարածքային հատակագծման նախաժամ:

- դ) Երևան քաղաքի տարածքում գտնվող հանքավայրերի շահագործման սահմանափակման կամ դադարեցման հետ մեկտեղ ներկայացնել նաև խաթարված հողերի, վերականգնման ենթակա տարածքների մակերեսը, տեղաբաշխումը, հետագա օգտագործումը, գլխավոր հատակագծի շրջանակներում անհրաժեշտ է նախատեսել համապատասխան ծրագիր, որի համար պետք է իրականացվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում:

Դիտողությունն ընդունվել է: Բոլոր հանքավայրերը և այլ խաթարված տարածքները ենթակա են վերականգնման և օգտագործման: Հողերի բոլոր տրասֆորմացիաները ցույց են տրված գլխավոր հատակագծի բացատրագրում:

- ե) Առաջարկվում է քաղաքի տարածքում գոյություն ունեցող բոլոր անասնաբուծական և թռչնաբուծական ֆերմաները դուրս բերել քաղաքից, այդ տարածքները մաքրել, վարակազերծել, վերականգնել՝ հետագա օգտագործման նպատակով:

Դիտողությունն ընդունվել է: Գլխավոր հատակագծում քաղաքի տարածքում գտնվող բոլոր անասնաբուժական և թռչնաբուժական ֆերմաները դուրս են բերվել քաղաքից, իսկ դրանց զբաղեցրած հողերը տրամադրվում են այլ արտադրական նպատակների համար:

3.2. Քաղաքի բնայանդաֆտային բնութագիրը

ՌԷԳ խումբը այս գլխի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չի ունեցել:

3.3. Ճարտարագիտա-երկրաբանական և սեյսմիկ պայմանները

ՌԷԳ խումբը այս գլխի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չի ունեցել:

3.4. Քաղաքային պիտանելիության գնահատման համակարգ

ՌԷԳ խումբը այս գլխի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չի ունեցել:

3.5. Շրջակա միջավայրի վիճակը

Մթնոլորտային օդ

ա) ՌԷԳ խումբն առաջարկել է գլխավոր հատակագծում ներկայացնել արտանետումների քանակները ոչ միայն ըստ ոլորտների՝ էներգետիկա, արդյունաբերություն և ավտոտրանսպորտ՝ տոննա/տարի միավորով, այլ նաև ըստ առանձին նյութերի (ազոտի օքսիդներ, ածխածնի օքսիդ և այլն)՝ ըստ ՍԹԿ-ի:

Դիտողությունն ընդունվել է և 29 աղտոտող նյութերի համար արտանետումները և աղտոտվածության մակարդակները ըստ ՍԹԿ-ի բերված են գլխավոր հատակագծի վերջնական բացատրագրում /հատոր 5, աղ. 2.2, էջ 23 և աղ. 2.3, էջ 25/:

բ) Նաև առաջարկվել է հաշվի առնել տաք ջրամատակարարման և ձմեռվա ամիսներին տեղային տաքացուցիչների օգտագործման հետևանքով առաջացած աղտոտումները:

Դիտողությունն ընդունվել է և գործող կաթսայատների և անհատական տաքացուցիչների արտանետումները հաշվի են առնվել «էներգետիկա» կատեգորիայում /ՋԷԿ՝ 702տ, նշված աղբյուրներից՝ 200 տ/ հատոր 5, աղ. 6.1, էջ 60/:

Մակերևութային ջրեր

Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքներում⁶ ապացուցվել է Հրազդան գետի, որպես լեռնային արագահոս ջրահոսքի, ինքնամաքրման բարձր ունակությունը, ուստի առաջարկվել է դրա բարձր աղտոտվածությունը բացատրել ոչ թե գետի ինքնամաքրման ցածր պոտենցիալով, այլ աղտոտումների բարձր բեռնվածքով:

ԳՀՀԽ հիմք է ընդունել «Методические указания по предупредительному санитарному надзору в районной планировке» (Минздрав СССР, 1990г.) նյութերը, որոնցում Հրազդան գետի ինքնամաքրման պոտենցիալը գնահատվում է որպես ցածր: Հայեցակարգում գետի բարձր աղտոտվածությունը չի հիմնավորվում ցածր ինքնամաքրման պոտենցիալով: Այն բացատրվում է բազմաթիվ պատճառներով, որոնք շարադրված են տրամադրված նյութում:

⁶ Т.А. Асмангулян, Т.А. Овсепян. “Динамика отмирания бактерий в процессе самоочищения горных рек. Материалы 5-ого Всесоюзного симпозиума по современным проблемам самоочищения и регулирования качества вод”. Таллин, 1975г; В.К. Саградян. “О методике изучения процесса трансформации азотсодержащих веществ в горных реках. Материалы 6-ого Всесоюзного симпозиума по современным проблемам самоочищения и регулирования качества вод”. Таллин, 1979г.; С.Г. Габалян. “Исследования некоторых параметров самоочищения рек в Армянской ССР. Материалы 4-ого Всесоюзного симпозиума по современным проблемам самоочищения и регулирования качества вод”. Таллин, 1972г.

Հողերի աղտոտում

ՌԷԳ խումբը նշել է ծանր մետաղների շարքում սնդիկի միացությունները ներառելու կարևորությունը, քանի որ բնակչության մի մասի կողմից, ինչպես նաև արդյունաբերական և այլ հիմնարկներում մեծ չափով ավելացել է սնդիկ պարունակող լամպերի օգտագործումը, մինչդեռ իսկ ՀՀ-ում և Երևան քաղաքում բացակայում է օգտագործված սնդիկ պարունակող լամպերի հավաքումը և վնասագործումը:

Համաձայն էկոնոմսֆերային հետազոտությունների կենտրոնի տվյալների, սնդիկով աղտոտված հողեր չեն հայտնաբերվել:

Քաղաքային կոշտ թափոններ

ա) ՌԷԳ խումբը առաջարկել է գլխավոր հատակագծում դիտարկել նաև մածուկաձև և հեղուկ արտադրական, ինչպես նաև՝ շինարարական թափոնները:

Դիտողությունը չի ընդունվել: Քաղաքների գլխավոր հատակագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում որպես կանոն դիտարկվում են քաղաքային կոշտ թափոնները: Հեղուկ թափոնները դիտարկվել են մակերևութային ջրերի աղտոտման բաժնում (ԵԳՀ, հատոր 5, էջ 26-29): Մածուկաձև թափոնները հիմնականում առաջանում են «Նաիրիտ» գործարանի արտադրություններից, որը գործում է տարվա 2-3 ամիսը՝ 10 տոկոս հզորությամբ, իսկ դրանց վնասագործումը հանդիսանում է տվյալ ձեռնարկության խնդիրը: Շիրարարական թափոնների թաղման նպատակով գլխավոր հատակագծով առաջարկվում է քաղաքի շրջակայքում առկա ծորակների և գոգահովիտների օգտագործումը՝ տարածքի հետագա բարեկարգման պայմանով:

բ) Առաջարկվել է գլխավոր հատակագծում գնահատել Նուբարաշենի աղբյուսի ազդեցությունը շրջակա միջավայրի (մթնոլորտային օդ, այդ թվում՝ դիօքսինների արտանետումների պատճառով, ջրային ռեսուրսներ, հողեր և այլն) և մարդու առողջության վրա:

Դիտողությունն ընդունվել է: Նուբարաշենի աղբյուսի շրջակա միջավայրի վրա գործած ազդեցության որակական գնահատականը բերվել է ԵԳՀ վերջնական բացատրագրում /հատոր 5, էջ 34-35/: Քանակական գնահատման համար անհրաժեշտ են հատուկ ուսումնասիրություններ, որոնք բացակայում են: Գլխավոր հատակագծով քաղաքային աղբյուսում նախատեսված է աղբամշակման գործարանի կառուցում, մեթանի որսում և օգտագործում, ինչպես նաև սանիտարապաշտպանական գոտու ստեղծում:

Սանիտարա-համաձարակաբանական պայմաններ

Գլխավոր հատակագծի հայեցակարգն ընդունում է առողջ շրջակա միջավայրի ունենալու անհրաժեշտությունը՝ մարդու բարձրորակ ապրելակերպ ապահովելու նպատակով: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առանձնացված են հինգ հիմնական էկոլոգիական պայման՝ մաքուր օդ, խմելու ջրի անվտանգ որակ և բավարար քանակություն, անվտանգ և հաշվեկշռված անուղղ, հարմարավետ բնակարան, էկոհամակարգերի կայունություն: Երևանում, ներկա իրավիճակում, գրեթե բոլոր պայմանները նորմատիվորեն բավարարված չեն: Այդ և այլ, հիմնականում՝ սոցիալական պատճառներով է պայմանավորված քաղաքի բնակիչների ստրեսային իրավիճակներում գտնվելը, հիվանդացության և մահացության թվի աճը, միաժամանակ ծնելիության անկումը: ՌԷԳ խումբը ցանկալի է համարել շրջակա միջավայրի վիճակի և մարդու առողջության միջև կապերի հայտնաբերումը՝ համապատասխան միջոցառումներ մշակելու միտումով:

Դիտողությունն ընդունվել է: ԳՀՀԽ դիտարկում է շրջակա միջավայրի վիճակի և բնակչության առողջության միջև եղած կապը որպես հատուկ ուսումնասիրության

առաքյալ, որը գոյություն ունեցող իրավիճակի վերաբերյալ համապատասխան տվյալների բացակայության պատճառով չի արտացոլվել հայեցակարգում, թեև փաստաթղթում բացահայտված է քաղաքային ստրեսի (որի բաղկացուցիչ մասն է կազմում շրջակա միջավայրի վիճակը) և բնակչության առողջության միջև եղած կապը: Միևնույն ժամանակ, գլխավոր հատակագծի վերջնական բացատրագրում (հատոր 5, աղ. 5.1, էջ 52) բերվել է ստրես-ինդեքսների դասակարգված շարքը, որը թույլ է տալիս գնահատել հիվանդացության ռիսկերը:

3.6. Երևան քաղաքի տարածքում տեղակայված պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման հայեցակարգի հիմնական սկզբունքները

Առաջարկվում է գլխավոր հատակագծում դիտարկել նաև բնապատմական արգելոցների ստեղծման (կամ այդ կարգավիճակի շնորհման) հարցը, քանի որ քաղաքացիների համար դրանք կունենան գիտա-ճանաչողական, բնապահպանական, էսթետիկական և դաստիարակչական նշանակություն:

Դիտողությունն ընդունվել է: Գլխավոր հատակագծում առաջարկվել են պահպանության կենսաբազմազանության 4 հատվածներ և առաջարկվել է դրանց համար սահմանել հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ: Բավարար չափանիշների և համապատասխան իրազեկ ատյանների հիմնավորումների առկայության դեպքում բնապատմական արգելոցների ստեղծման հարցը կարող է դիտարկվել գլխավոր հատակագծում /օրինակ Դալմայի այգիների հարցը/:

Գլուխ 4. Բնակչություն

ՌԷԳ խումբն այս գլխի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չի ունեցել:

Գլուխ 5. Սոցիալ տնտեսական զարգացման նախադրյալները և գերակայությունները

5.1. ՀՀ սոցիալ տնտեսական զարգացման գերակայությունները

ՌԷԳ խումբն այս ենթագլխի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չի ունեցել:

5.2. Սոցիալ-տնտեսական զարգացման նախադրյալները և գերակայությունները

ՌԷԳ խումբն առաջարկել է հստակեցնել, թե Երևանում ինչպե՞ս և ո՞ր ուղղություններով է նախատեսված արդյունաբերության զարգացումը, ինչպիսի՞ն և որքա՞ն են լինելու դրանց արտանետումները, արտահոսքերը և ի՞նչ ազդեցություն կունենան շրջակա միջավայրի և/կամ մարդու առողջության վրա: Եթե արդյունաբերության զարգացումը սահմանափակվում է, ապա բնապահպանական տեսակետից ճիշտ կլինի ազատված արտադրական տարածքներն օգտագործել կանաչապատման նպատակներով:

Քաղաքի արդյունաբերական հեռանկարային զարգացման անորոշության պատճառով դժվար է կանխատեսել արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումների ծավալը: Այդ կապակցությամբ, գլխավոր հատակագծում արդյունաբերական գոտիների համար (մասնավորապես հարավային արդյունաբերական գոտու համար, որտեղ տեղադրված են նախկինում արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրները) նախատեսված են էկոլոգիական սահմանափակումներ՝ ըստ գումարային սահմանային թույլատրելի արտանետումների կամ օդի պահանջվող սպառման ցուցանիշի (հատոր 5, էջ 59), որոնք պետք է պահպանվեն, անկախ արտադրությունների զարգացման ուղղությունից և տեմպերից: Միաժամանակ հայեցակարգում առաջարկվում է արդյունաբերության վերապրոֆիլավորում և արդիականացում, ստեղծելով էկոլոգիապես մաքուր արտադրությունների գերակշիռ զարգացում:

ԳՀՀԽ առաջարկել է արդյունաբերության և պահեստարանների տարածքների մանրամասն ուսումնասիրումն ու հետագա օգտագործման հիմնավորումն ու ծրագրավորումը նախատեսել ԵԳՀ հաջորդող նախագծման փուլերում:

5.3. Երևան քաղաքի գյուղատնտեսության զարգացման ռազմավարություն

ա) ՌԷԳ խումբն առաջարկել է գլխավոր հատակագծում վերանայել քաղաքի սահմաններում թռչնաբուծության կամ անասնապահության /անկախ դրա տեսակից/ զարգացման քաղաքականությունը: Նման գործունեություն համար նախատեսված օբյեկտները դուրս հանել քաղաքից՝ անվտանգ հեռավորության վրա, քանի որ նույնիսկ սանիտարապաշտպանիչ գոտու առկայության դեպքում, վերջինս աստիճանաբար ինքնակամ կառուցապատվում է և փաստորեն վերանում:

Դիտողությունն ընդունվել է: Գլխավոր հատակագծում քաղաքի տարածքում գտնվող բոլոր անասնաբուծական և թռչնաբուծական ֆերմաները /տարածքը՝ 287,3հա/ դուրս են բերվում, իսկ դրանց զբաղեցրած հողերը տրամադրվում են այլ արտադրական նպատակների համար:

բ) Առաջարկվում է ենթագլուխը լրացնել գյուղատնտեսական հողերի որակական ցուցանիշներով:

Դիտողությունն ընդունվել է: Գյուղատնտեսական հողերի ցուցանիշների մասին տվյալները թերի են համապատասխան մոնիտորինգի բացակայության պատճառով:

գ) Առաջարկվել է գլխավոր հատակագծում նախատեսել Դալմայի այգիների գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերի տեղափոխումը հատուկ պահպանվող տարածքների բնապահպանական գործառնական նշանակության հողերի կարգավիճակով:

Դիտողությունը չի ընդունվել: Գլխավոր հատակագծի մշակման համար հիմք են ծառայել ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետի կողմից ընդունված որոշումները հողահատկացումների մասին: Դալմայի այգիների տարածքում կան նման մի շարք որոշումներ:

Գլուխ 6. Սոցիալական ենթակառուցվածքների զարգացում

Այս գլխի վերաբերյալ ՌԷԳ խումբը առաջարկություններ և դիտողություններ չի ունեցել:

Գլուխ 7. Տարածահատակագծային զարգացում

7.1. Քաղաքի դիրքը ՀՀ տարաբնակեցման համակարգում

ՌԲԳ խմբի դիտողության համաձայն, ԵԳՀ հիմնական խնդիրը՝ քաղաքի աճի սահմանափակումը և Երևան քաղաքի որոշ գործառույթները հարևան մարզերին փոխանցելը Հայեցակարգում լուծված է մասամբ: Հաշվի առնելով Երևանի էկոլոգիական վիճակի լարվածությունը և դրա բարելավման ռեալ հնարավորությունների սղությունը, առավել նպատակահարմար է նկատվել քաղաքի բնակչության աստիճանական նվազեցման քաղաքականության որդեգրումը և Երևանյան ագլոմերացիայի տարածքային հատակագծման նպատակի, խնդիրների և սկզբունքների դիտարկումը ԵԳՀ հետ համատեղ՝ ճիշտ, երկարաժամկետ միջոցառումներ նախատեսելու նպատակով:

ԳՀՀԽ խումբը տվյալ խնդիրը դիտարկել է որպես տարածքային հատակագծման նախագծերի առարկա, մինչդեռ Երևանի գլխավոր հատակագծում տվել է տարաբնակեցման համակարգում քաղաքի դիրքի ընդհանուր գնահատականը: Երևանի հաշվարկային բնակչության թիվը ընդունված է ըստ ՀՀ տարաբնակեցման Գլխավոր նախագծի պահանջների:

7.2. Մերձքաղաքային գոտի

ՌԷԳ խումբն առաջարկել է գլխավոր հատակագծում լուսաբանել տարաբնակեցման հետ կապված մի շարք հարցեր, այդ թվում՝ թե ի՞նչ օբյեկտներ է նախատեսվում տեղափոխել քաղաքից, ո՞րտեղ, ո՞րքան գումար է նախատեսվում այդ նպատակով, ի՞նչ քաղաքաշինական նախադրյալներ են ստեղծվելու շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանությանն ուղղված համալիր միջոցառումների իրականացման համար (նշելով դրա հետ կապված առանձին տարրերի աղտոտվածության նվազեցման աստիճանը):

ԳՀՀԽ խումբը տվյալ խնդիրը դիտարկել է որպես տարածքային հատակագծման նախագծերի առարկա:

7.3. Հատակագծային կառուցվածք և գոտիավորում

ա) Առաջարկվել է հաշվի առնել այն հանգամանքը, որ կանաչապատման համար նշված տարածքները, ինչպիսիք են՝ Կորեայի ծորը, Ղալմայի այգիները, Նորքը, Էրեբունին, մասամբ կանաչապատ են և գլխավոր հատակագծում նախատեսել այլ՝ ներկայումս ոչ կանաչապատ տարածքներ:

Դիտողությունն ընդունվել է: Վերականգնման ենթակա ոչնչացված կանաչ տարածքներից բացի գլխավոր հատակագծով նախատեսված է ստեղծել շուրջ 2500հա նոր կանաչ տարածքներ:

բ) Հաշվի առնելով Ղալմայի այգիների 3000 տարվա պատմամշակութային արժեքը, ինչպես նաև բնապահպանական արժեքը, ՌԷԳ խումբն առաջարկել է Ղալմայի այգիների ներկայումս պահպանված սահմաններում՝ տվյալ տարածքին տալ հատուկ պահպանվող տարածքների բնապահպանական գործառնական նշանակության կարգավիճակ: Այգու տարածքով ճանապարհի անցկացումը ՌԷԳ խմբի կողմից գնահատվել է որպես հակասող կանաչաստեղծման /բնապահպանական/ սկզբունքներին, կրճատելով կանաչ մակերեսը, մասնատելով հոծ կանաչ զանգվածը և աստիճանավոր կանաչ գոտին ավտոտրանսպորտի արտանետումներից:

Հաշվի առնելով այն, որ Ղալմայի այգիներին ՀՀ Կառավարության որոշմամբ շնորհվել է անտառային հողերի կատեգորիայի կարգավիճակ, գլխավոր հատակագծում այդ տարածքը նախատեսված է որպես անտառպուրակ:

գ) Առաջարկվել է գլխավոր հատակագծում ամբողջությամբ վերականգնել և պահպանել «Հաղթանակ» զբոսայգին:

ԳՀՀԽ խումբը «Հաղթանակ» զբոսայգին, ինչքան նաև այլ հասարակական զբոսայգիները, հայեցակարգում ներկայացրել է որպես ընդհանուր օգտագործման կանաչ տարածք, իսկ դրանց վերականգնման խնդիրը կդիտարկվի գլխավոր հատակագծին հաջորդող նախագծային փուլերի ընթացքում:

դ) Առաջարկվել է վերանայել գոյություն ունեցող գերեզմանոցների կանաչապատումը՝ որպես ընդհանուր օգտագործման կանաչ տարածք:

Դիտողությունն ընդունվել է: ԳՀՀԽ խումբը գերեզմանոցների և դրանց սանիտարական գոտիների կանաչն առաջարկել է որպես հատուկ նշանակության կանաչապատում:

Գլուխ 8. Քաղաքի փողոցաճանապարհային ցանց և տրանսպորտ

ա) ՌԷԳ խումբն, ընդհանուր առմամբ ընդգծելով ճանապարհային ցանցի զարգացման հաջող լուծումները, առաջարկվել է վերանայել Լենինգրայան փողոցից մինչև Իսակովի փողոցը «Օղակաձև արագընթաց ճանապարհի» հատվածի և դրան

ուղղահայաց՝ Դալմայի այգիներով անցնող ճանապարհի ուղեգիծը, քանի որ այն չորս մասի է բաժանում առանց այդ էլ կիսված Դալմայի այգիների մնացորդը, մասնատելով դրա ժամանակին միացյալ և կայուն էկոհամակարգը, որն իր մեջ ընդգրկում է կանաչ տարածքներ, պտղատու և խաղողի այգիներ, դարավոր կաղնիներ և պատմական հուշարձաններ:

Դիտողությունը չի ընդունվել: ԳՀՀԽ խումբը, կիսելով տվյալ մտահոգությունը, հավաստել է, որ որպես քաղաքի հեռանկարային հատակագծային կառուցվածքի հիմնական տարր, տվյալ հատվածում ճանապարհատրանսպորտային ցանցը այլընտրանք չունի: Հաշվի է առնվել նաև քաղաքի ավտոպարկի հեռանկարային կրկնակի մեծացումը և քաղաքի կենտրոնի բեռնաթափման անհրաժեշտությունը: Քաղաքի կենտրոնի բեռնաթափումն ավտոտրանսպորտից դիտարկվում է նաև որպես միջոց մթնոլորտի աղտոտվածության մակարդակի իջեցման համար:

- բ) ՌԷԳ խումբը նկատել է, որ Հայեցակարգում բացակայում են տվյալներ ավտոտրանսպորտի քանակի, վիճակի և վառելիքի տեսակի վերաբերյալ՝ ներկա և հեռանկարային ժամանակաշրջաններում:

Դիտողությունն ընդունվել է: Գլխավոր հատակագծի վերջնական բացատրագրում բերված են ներկա և կանխատեսվող արտանետումները (հատոր 5, աղյուսակ 6.1, էջ 60):

Գլուխ 9. Ճարտարագիտական ենթակառուցվածքներ

9.1. Զրամատակարարում

- ա) ՌԷԳ խումբն առաջարկել է ներկայացնել տվյալներ տեխնածին և մարդածին ազդեցությունից Երևանը սնող ջրաղբյուրների պաշտպանվածության մասին:

Դիտողությունն ընդունվել է: Բոլոր աղբյուրներն ունեն նորմերին համապատասխանող սանիտարական պաշտպանության I գոտի: II գոտու սահմանները, ուր ընդգրկված է տնտեսական գործունեությունը, դեռևս չկա: Գլխավոր հատակագծում նշված է II գոտու անհրաժեշտությունը:

- բ) Առաջարկվել է լրացնել արտաքաղաքային սպառողների աճի (5%), արդյունաբերության աճի (20%) և հոսակրուստների կրճատման չափի (20%) հիմնավորումները:

Դիտողությունն ընդունվել է: Հոսակրուստների չափն ընդունվել է 30%՝ հիմք ընդունելով ֆինանսական հնարավորությունները և նպատակահարմարությունը:

- գ) Հայեցակարգի հաշվային ջրօգտագործման աղյուսակ 6-ում կան որոշ թվաբանական անճշտություններ: Բացի այդ՝ բոլոր տարբերակների հաշվարկներում բացակայում են բյուջետային և առևտրային կազմակերպությունների ջրապահանջը:

Դիտողությունը չի ընդունվել: ԳՀՀԽ խումբն ընդգրկել է նշված ջրապահանջները գումարային հաշվային ջրապահանջի մեջ և տվյալ մոտեցումն արժանացել է Երևանի գլխավոր հատակագծի միջգերատեսչական հանձնաժողովի հավանությանը:

- դ) Հայեցակարգի աղյուսակ 7-ում պահանջվող ներդրումների ներկայացումը 4 տարբերակով անիմաստ է, քանի որ դրանք բացարձակ նույնն են: ՌԷԳ խումբն առաջարկել է լրամշակել ենթազուխը՝ դիտարկելով արտակարգ իրավիճակներում կայուն ջրամատակարարման ապահովումը, տարբերակային լուծումները, համակարգերի աշխատանքների բարելավման կամ կոնսերվացման և այլ

ծախսերի գնահատումը, օրենսդրական փոփոխությունները և սակագնային քաղաքականությունը:

Դիտողությունն ընդունվել է: Կայուն ջրամատակարարման ապահովման, տարբերակային լուծումների դիտարկման, համակարգերի աշխատանքների բարելավման կամ կոնսերվացման և այլ ծախսերի գնահատման, օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ տվյալները բերվել են գլխավոր հատակագծի «Արտակարգ իրավիճակներ»-ի բաժնում: Սակագնային քաղաքականության խնդիրը համարվել է ԵԳՀ շրջանակներում բարձրացվող հարցերից դուրս խնդիր:

9.2. Կենցաղային և հեղեղատար կոյուղի

ա) Հաշվի առնելով կեղտաջրերի գերիշխող դերը ջրային ռեսուրսների աղտոտման և մարդու առողջության վրա ազդեցության գործում՝ ՌԷԳ խումբն առաջարկել է գլխավոր հատակագծի ներկա իրավիճակի նկարագրություններում ներառել նաև արտադրական լոկալ մաքրման կայանների (ներկա և հեռանկարային), Հրազդան գետի կիրճով անցնող կոլեկտոր և քաղաքային մաքրման կայանի վիճակը:

Դիտողությունն ընդունվել է մասամբ: Արտադրական լոկալ մաքրման կայանների հարցը դիտվում է ոչ թե գլխավոր հատակագծի, այլ համապատասխան ձեռնարկությունների կողմից լուծվելիք խնդիր: Կոլեկտորի և քաղաքային մաքրման կայանի վիճակը նկարագրված են գլխավոր հատակագծում:

գ) Առաջարկվում է ներկայացնել տարբերակներ ներդրումային հաշվարկների վերաբերյալ:

Դիտողությունն ընդունվել է: Ներդրումային հաշվարկները ներկայացված են հատոր ԵԳՀ վերջնական բացատրագրում (հատոր 7):

դ) Լրամշակման կարիք ունեն հետևյալ հարցերը՝ կոյուղավորումը (կոյուղացման կոնկրետ աշխատանքները), բակային ցանցերի վերականգնումը (նոր ցանցերի կառուցումն ու հների վերակառուցումը), մաքրման կայանի վերականգնումը (կայանի տվյալները և մաքրման աստիճանը), վթարային իրավիճակներում մաքրման կայանի տիղմի վերամշակումը և տեղափոխումը, կեղտաջրերի մաքրման աստիճանը և անդրսահմանային նշանակություն ունեցող Հրազդան գետի մեջ մաքրված կեղտաջրերի հեռացման սանիտարական պայմանները, կիսակառույց մաքրման կայանի տարածքի մաքրումը, ներդրումների հստակեցումը:

Դիտողությունն ընդունվել է: Նշված հարցերը հնարավորության շրջանակներում դիտարկվել են Գլխավոր հատակագծում: Հրազդան գետի ջրի մեխանիկական մաքրման կայանի կառուցման անհրաժեշտության հարցը ներկայացված է գլխավոր հատակագծի փուլում և լրացուցիչ կքննարկվի նաև Երևանի ազլոմերացիայի տարածքային հատակագծման նախագծում:

ե) Գլխավոր հատակագծում պետք է հստակ ներկայացվի կոյուղու մաքրման կայանի վերակառուցման այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը:

Դիտողությունն ընդունվել է: Սակայն ԳՀՀ-ի դիտարկում է տվյալ խնդրի այլընտրանքների մշակումը որպես գլխավոր հատակագծին հաջորդող առանձին համապատասխան նախագծի խնդիր:

9.3. Զերմամատակարարում

ա) ՌԷԳ խումբը նշել է, որ ջերմամատակարարման առաջարկված երեք տարբերակներն (լոկալ կաթսայատներ, խմբային կաթսայատներ և խոշոր ջերմային

աղբյուրներ) առանձին-առանձին կարող են չգործել և առաջարկել են դիտարկել առավել իրատեսական՝ դրանց կոմբինացված տարբերակի դիտարկումը:

Դիտողությունն ընդունվել է: Ջերմամատակարարման երեք կամ դրանց կոմբինացված տարբերակներն իրատեսական են՝ նրանց համապատասխանող սոցիալ-տնտեսական պայմաններում:

- բ) Ջերմամատակարարման երեք տարբերակները դիտարկված են միայն ֆինանսական տեսանկյունից, անհրաժեշտ է դիտարկել նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից, ինչը և հնարավորություն կտա ձիշտ ընտրություն կատարել այս կամ այն տարբերակի միջև:

Դիտողությունն ընդունվել է: Մթնոլորտ արտանետումները գնահատված են /հատոր 5, աղ. 6.1, էջ 60/: Ջերմամատակարարման յուրաքանչյուր տարբերակի համար ընտրված է շրջակա միջավայրի վրա նվազագույն ներգործությամբ էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ:

9.4. Գազամատակարարում

Այս ենթազվխի վերաբերյալ ՌԷԳ խումբն առաջարկություններ և դիտողություններ չունի:

9.5. Էլեկտրամատակարարում և կապ

Այս ենթազվխի վերաբերյալ ՌԷԳ խումբն առաջարկություններ և դիտողություններ չունի:

Գլուխ 10. Քաղաքի կանաչապատման համակարգ

- ա) ՌԷԳ խումբը նկատել է, որ չնայած ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների տեսակարար մակերեսը հասցվում է նորմատիվային պահանջների մակարդակի (ընդհանուր օգտագործման տարածքների մակերեսը 4.9-ից հասցվում է մինչև 19.15 քառ.մ/մարդ), դա չի լուծում կանաչապատ տարածքների 15 բույսերից մատչելիության խնդիրը, քանի որ կանաչապատ տարածքները տեղադրված են բնակելի թաղամասերից հեռու: Տվյալ խնդրի լուծումը հատկապես դժվարանում է Կենտրոն համայնքի խիտ կառուցապատված լինելու պայմաններում: Առաջարկվում է ընդունել Երևան քաղաքի կանաչապատման քաղաքականություն, որը կարող է սկսվել իրականացվել այսօր և ավարտին կարող է հասցվել Գլխավոր հատակածի նույնիսկ հաշվարկային ժամկետից դուրս՝ նախատեսելով կառուցապատումից ազատված տարածքների տրամադրում՝ կանաչապատման համար:

Դիտողությունն ընդունվել է: Կանաչ տարածքների մատչելիության պայմանը հաշվի է առնվել ելնելով առկա հնարավորություններից: Իսկ նոր կանաչ տարածքների հիմնման հնարավորությունը պետք է դիտարկել:

- բ) ՌԷԳ խումբն նկատել է որ Հայեցակարգի քարտեզագրական նյութերում պայմանական նշանների անհստակության պատճառով հնարավոր չէ ապահովել ներկա և հեռանկարային կանաչապատման համապատասխանությունը տեքստային տվյալներին և առաջարկել է դրանք հստակեցնել գլխավոր հատակագծում:

Դիտողությունն ընդունվել է: Պայմանական նշանները հստակեցվել են գլխավոր հատակագծի գրաֆիկական մասի վերջնական տարբերակում:

Գլուխ 11. Երևան քաղաքի տարածքի վտանգավոր տարերային և տեխնածին երևույթների կանխարգելիչ միջոցառումներ

- ա) ՌԷԳ խումբն առաջարկել է գլխավոր հատակագծում ներկայացնել Երևան քաղաքի տարածքների պաշտպանության կոնկրետ միջոցառումների նկարագրությունը,

ինչը թույլ կտա գնահատել նախատեսված միջոցառումների արդյունավետությունը և բավարարությունը:

Դիտողությունն ընդունվել է: ԳՀՀԽ հիմնավորմամբ, գլխավոր հատակագծի հայեցակարգում մանրամասնորեն դիտարկվել և արծարծվել են քաղաքի տարածքում վտանգավոր տարերային և տեխնածին երևույթների կանխարգելիչ միջոցառումները, որոնք արժանացել են ԵԳՀ աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հավանությանը: Միջոցառումների առավել մանրամասնեցումը հանդիսանում է գլխավոր հատակագծին հաջորդող նախագծային փուլերի խնդիր:

- բ) ՌԷԳ խումբն առաջարկել է Երևան քաղաքի սահմաններում գտնվող բարաժների նորոգման փոխարեն իրականացնել դրանց կապիտալ վերակառուցում, քանի որ գետերի ջրերի աղտոտման պատճառը դրանց սխալ կոնստրուկցիան է:

Դիտողությունն ընդունվել է:

Գլուխ 12. Շրջակա միջավայրի պահպանություն

ՌԷԳ խմբի գնահատման համաձայն տվյալ գլխի սկզբում շարադրված շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության նպատակը և սկզբունքները համապատասխանում են կայուն զարգացման ընդհանուր գաղափարին: Ենթազույգներում առաջարկվող միջոցառումները նույնպես ուղղված են յուրաքանչյուր բաղադրիչի պահպանությանը, սակայն դրանք չունեն համապատասխան կոնկրետ հիմնավորումներ:

Մթնոլորտային օդի պահպանություն.

ա) Առաջարկվում է ավտոտրանսպորտի արտանետումների կրճատման միջոցառումների իրականացման արդյունքում աղտոտվածության նվազեցման կանխատեսումները հիմնավորել թվերով կամ հաշվարկներով. նշել միջոցառումների արդյունքում յուրաքանչյուր վնասակար նյութի արտանետման քանակները, նվազեցումն, աղտոտվածությունը՝ ըստ սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջոցառումների իրականացման արդյունքում ընդհանուր արտանետումները նվազում են 20%-ով, սակայն դեռևս շարունակում են 2-4 անգամ գերազանցել ՍԹԿ-ները, անհրաժեշտ է նախատեսել արտանետումների նվազեցմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ, այն հասցնելով թույլատրելի նորմերի սահմաններին:

Դիտողությունն ընդունվել է: Նախատեսված են ավտոտրանսպորտի արտանետումների կրճատման լրացուցիչ միջոցառումներ, մասնավորապես չեզոքացուցիչների օգտագործում, ինչը հնարավորություն կտա 60%-ով կրճատելու արտանետումները և մինչև 1.3 ՍԹԿ՝ օդի աղտոտվածությունը (հատոր 5, էջ 58): ԵԳՀ վերջնական բացատրագրում բերված են կանխատեսվող արտանետումները և օդի աղտոտվածությունը (հատոր 5, աղ. 6.1, 6.2, էջ 60):

- բ) Եթե արդյունաբերության զարգացումը սահմանափակվի Հայեցակարգում բերված բանաձևերի համաձայն, ապա յուրաքանչյուր արդյունաբերական զոնայի սահմաններից դուրս օդի աղտոտումը չի գերազանցի ՍԹԿ-ները: Սակայն, այստեղ հաշվի չի առնված ավտոտրանսպորտի արտանետումների գումարումը արտադրական արտանետումներին, որի դեպքում ՍԹԿ-ները կգերազանցվեն:

Դիտողությունն ընդունվել է: ՍԹԱ-ի նորմատիվները մշակելիս հաշվի է առնվել ֆոնը, որն ընդգրկված է բերված բանաձևում (հատոր 5, էջ 59):

- զ) Մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցման նպատակով առաջարկվում է գլխավոր հատակագծում նախատեսել էլեկտրական տրանսպորտի առավել զարգացում:

Դիտողությունն ընդունվել է: Տրանսպորտային սխեմայում հաշվի է առնված էլեկտրոտրանսպորտի (մետրոպոլիտեն, տրոլեյբուս) բաժնի ավելացումը ուղևորափոխադրումներում:

Մակերևութային ջրերի պահպանություն.

- ա) Հայեցակարգում գնահատված է, որ Հրազդան գետը արտահոսող կեղտաջրերի կոյուղավորման և մաքրման կայանում դրանց մաքրման շնորհիվ 85%-ով կկրճատվի աղտոտող նյութերի մուտքը գետ: Ցանկալի է հիմնավորել այդ թիվը և միաժամանակ լուծել մնացած 15%-ի մաքրման հարցը: Բացի այդ առաջարկվում է ապագայում գնահատել Հրազդան գետի աղտոտումը Քաղսիի մաքրման կայանի չգործելու պատճառով:

Դիտողությունն ընդունվել է: Մաքրված աղտոտիչների քանակությունը /85%/ որոշված է ըստ ԵԳՀ աղ. 2.5 և 2.6 (հատոր 5, էջ 28-29): Մնացած 15% արտահոսքը ՍԹԱ-ի սահմաններում է: Հրազդան գետի աղտոտումը հնարավոր կլինի գնահատել միայն համապատասխան մոնիտորինգի համակարգի առկայության դեպքում:

- բ) Առաջարկվում է ներկայացնել քաղաքի ջրային օբյեկտների ջրի որակը, ինչպես նաև նախատեսել ջրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Դիտողությունն ընդունվել է: Մակերևութային ջրահոսքերի և ջրամբարների աղտոտվածությունը բերված է ըստ պաշտոնական աղբյուրների: Մակերևութային ջրերի պահպանության միջոցառումները նախատեսում են ջրերի նորմատիվային որակի ապահովում /հատոր 5, էջ 60/:

- գ) Նախատեսել Երևանյան լճի հատակի տիղմի հեռացմանը և վնասագերծմանն ուղղված միջոցառումներ:

Դիտողությունն ընդունվել է: Երևանյան լճի հատակի մաքրումը և տիղմի վնասագերծումը նախատեսված է /հատոր 5 էջ 60/:

Հողերի պահպանություն

Անհրաժեշտ է ներկայացնել հողի պահպանությանն ուղղված կոնկրետ միջոցառումները, դրանց արդյունավետությունը, բավարարությունը և աղտոտված հողերի հետագա օգտագործումը:

Դիտողությունն ընդունվել է: Հողերի պահպանության միջոցառումները բերված են ԵԳՀ հատոր 5, էջ 61-ում:

Քաղաքային կոշտ թափոններ

- ա) Առաջարկվել է հիմնավորել թափոնների քանակի կանխատեսումները, քանի որ պարզ չէ արդյունաբերության զարգացման ուղղությունները և ծավալները:

Դիտողությունն ընդունվել է: ԳՀՀ-ի հիմնավորմամբ, կենցաղային կոշտ թափոնների կանխատեսվող ծավալը որոշվել է ըստ բնակչության կանխատեսվող թվի և թափոնների տեսակարար ցուցանիշի (մոտ 0.5 կգ/մարդ օր): Կոշտ թափոնների կանխատեսվող ընդհանուր ծավալը որոշվել է խոշոր քաղաքների համար ընդունված եղանակով:

- բ) Առաջարկվել է դիտարկել արտադրական թափոնների պոլիգոնի և շինարարական թափոնների աղբավայրի ստեղծման նպատակահարմարության հարցը:

Ըստ պաշտոնական տվյալների ներկայումս թափոնների 95 տոկոսը պատկանում է տոքսիկության 5-րդ կարգին: Այդ պատճառով տոքսիկ թափոնների թաղման պոլիգոնի կառուցման հարցը ՔՀՀ-ի կողմից գնահատվել է ոչ հրատապ (հատոր 5, էջ 62):

Պահպանություն աղմուկից

ՌԷԳ խումբն առաջարկել է ճշգրտել հայեցակարգում բերված աղմուկի նորմատիվ մեծությունները: Գլխավոր հատակագծում անհրաժեշտ է նախատեսել աղմուկից պաշտպանվելուն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

Դիտողությունն ընդունվել է: Աղմուկի ՍԹՍ ընդունված է համաձայն ՇՈՒՄ 11-12-77: Աղմուկից պաշտպանման համալիր միջոցառումները բերված են հատոր 5, էջ 63- ում:

Պաշպանություն էլեկտրամագնիսական ճառագայթումից

ա) Հայեցակարգում չի ներկայացված էլեկտրամագնիսական ճառագայթումների ներկա իրավիճակը: Չկան գնահատումներ այն առումով, որ վերջին տասնամյակի ընթացքում այն ենթարկվել է կտրուկ փոփոխության, տասնյակ անգամ աճել են հաղորդիչ և ընդունող կայանները, այդ թվում հեռուստակայանները, ռադիոկայանները, բջջային կապի կայանները: Հայեցակարգում նշվում է, որ սանիտարապաշտպանության գոնաների չափերը հաշվի կառնվեն ճառագայթման աղբյուրների տեխնիկական բնութագրերի ստացումից հետո, սակայն առանց գործիքային չափումների արդյունքների հնարավոր չէ սահմանել բնակեցման համար բարենպաստ տարածքները: Անհրաժեշտ է դիտարկել գոյություն ունեցող և հեռանկարային էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրները, ազդեցությունները և պաշտպանիչ կոնկրետ միջոցառումները:

Դիտողությունն ընդունվել է: Ներկայումս էլեկտրամագնիսական դաշտի մակարդակի չափումներ չեն կատարվում: ԷՄՃ-ից պաշտպանության համար նախատեսվել են նորմատիվ սանիտարապաշտպանական գոտիներ՝ հաշվի առնելով ճառագայթման աղբյուրների հնարավոր հզորության ավելացումը (հատոր 5, էջ 64):

- բ) Հաշվի առնելով ԵԳՀ ելակետային տվյալներում վիբրացիայի ուսումնասիրությունների բացակայությունը, դրանք ներառել գլխավոր հատակագծի հետագա մոնիտորինգի ծրագրում:

Վիբրացիայի ազդեցությունը չի գնահատվել տվյալների բացակայության պատճառով:

Գլուխ 13. Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

«Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ» աղյուսակում տրանսպորտի հեռանկարային զարգացում չի երևում: Նույն աղյուսակում շրջակա միջավայրի վիճակի կանխատեսվող ցուցանիշները գերազանցում են թույլատրելի նորմերը:

Դիտողությունն ընդունվել է: Ճշտգրտված ցուցանիշները կբերվեն ԵԳՀ վերջնական բացատրագրում:

Գլուխ 14. Ներդրումներ

- ա) Առաջարկվում է առանձնացնել և ներկայացնել բնապահպանական միջոցների ծավալները և ներդրումները:

Դիտողությունն ընդունվել է: Բնապահպանական ներդրումների ծավալները կառանձնացվեն գլխավոր հատակագծի իրականացման ընդհանուր ծավալներից:

Ընդհանուր դիտողություններ

Գլխավոր հատակագծի հայեցակարգի վերաբերյալ ՌԷԳ խմբի կողմից տրվել և ԳՀՀԽ կողմից հաշվի են առնվել մի շարք ընդհանուր բնույթի առաջարկություններ, որոնք ներկայացված են ստորև:

1. ԵԳՀ հայեցակարգում բացակայել է քաղաքականությունը՝ կապված քաղաքի տարբեր տարածքներում, արդյունաբերական հանգույցներից դուրս տեղակայված մթնոլորտային օդը, հողը և ջուրը աղտոտող առանձին ձեռնարկությունների և գործարանների սելիտեբային տարածքներից դուրս բերման հետ:

Դիտողությունն ընդունվել է: Գլխավոր հատակագծում նաև նշվում է, որ գոյություն ունեցող արտադրական օբյեկտների վերակառուցման և նորերի տեղադրման ժամանակ պետք է պահպանվեն բնապահպանական անհրաժեշտ պայմանները:

2. Շրջակա միջավայրի բաղադրիչների պահպանության միջոցառումները չեն դասակարգված ըստ առաջնայնության, բացառությամբ՝ մակերևույթային ջրերի:

Դիտողությունն ընդունվել է: Շրջակա միջավայրի բաղադրիչների պահպանության միջոցառումների դասակարգումն ըստ առաջնայնության բերված է ամփոփ աղյուսակում (հատոր 5, էջ 69):

3. Առաջարկվել է ներկայացնել նախատեսված միջոցառումների արդյունավետությունը, բավարարությունը, միջոցառումների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակը (այդ թվում որակական ցուցանիշները):

Դիտողությունն ընդունվել է: Շրջակա միջավայրի կանխատեսվող ցուցանիշները բերված են ԵԳՀ վերջնական բացատրագրում (հատոր 5, աղյուսակ 6.6):

4. Անհրաժեշտ է մշակել գլխավոր հատակագծից բխող և հատակագծի կիրարկումը ապահովող գիտա-գործնական ծրագրերի ցանկը, դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, աղբյուրները և իրականացման ժամանակացույցը (գյուղատնտեսություն, կանաչապատում, ձանապարհաշինարարություն, ջրամատակարարում և ջրահեռացում, արդյունաբերություն, թափոնների կառավարում և այլն):

Դիտողությունն ընդունվել է: Գլխավոր հատակագծում առանձին հատորով տրվում են առաջարկվող համապատասխան միջոցառումների և ծրագրերի ցանկը:

5. Որպես թերություն է գնահատվել այն փաստը, որ գլխավոր հատակագծի հայեցակարգում ներկայացված լուծումները չունեն այլընտրանքային տարբերակներ և բացակայում են հիմնական տարբերակի ընտրությունը հիմնավորող էկոլոգատնտեսական հաշվարկները, ինչպես նաև միջոցառումների արդյունավետության և բավարարության հիմնավորումները:

Այլընտրանքային տարբերակներ՝ բնակչության աճի, տարածքի, ենթակառուցվածքի տարբեր համամասնությունների համեմատական վերլուծություններով դիտարկվել են հայեցակարգի մշակման փուլում: Գլխավոր հատակագիծը հիմք է ընդունել Միջգերատեսչական հանձնաժողովի որոշմամբ սահմանված 1200000 մարդ բնակչության հեռանկարային թվաքանակը՝ անփոփոխ

վարչական սահմանների շրջանակում, որի հիման վրա և կատարվել են համապատասխան էկոլոգատնտեսական հաշվարկներն ու մշակվել միջոցառումները: Այլընտրանքային տարբերակներ մշակվել են նաև հատակագծային կառուցվածքի կազմավորման փուլում (հատակագծային ուղղություններ և գոտիներ, բնակչության խտություն, սպասարկման ոլորտ, կանաչապատում, ենթակառուցվածքներ և այլն):

6. Հայեցակարգում բացակայում են նախատեսված միջոցառումների հետ կապված ռիսկերի գնահատումները:

Միջոցառումները մշակվել են հիմք ընդունելով բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների գնահատումը: Առավել մանրամասն գնահատումներ կիրականացվեն կոնկրետ միջոցառումների մշակման ընթացքում:

7. Հայեցակարգում բացակայում է կանաչապատման, կոյուղավորման, կեղտաջրերի մաքրման, ջրամատակարարման, թափոնների հավաքման, վերամշակման և այլ ոլորտներում մասնավոր սեկտորի ներգրավման քաղաքականությունը:

Դիտողությունն ընդունվել է: Նշված առաջարկությունը հաշվի է առնված գլխավոր հատակագծում: Բոլոր սպասվող ներդրումները բաշխված են պետական, համայնքային և մասնավոր ներդրողների միջև:

8. Առաջարկվել է բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը գնահատել՝ համապատասխան հիմնավորումներով:

Դիտողությունն ընդունվել է: Բնապահպանական միջոցառումների զգալի մասի իրականացման ծախսերը գնահատված և ներկայացված են գլխավոր հատակագծի իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ընդհանուր ցանկում:

VI. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՆՑ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (գրոյական տարբերակ)

Երևանի գլխավոր հատակագծով նախատեսված են առաջնային խնդիրների իրականացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, որոնց չիրականացման դեպքում հնարավոր է քաղաքում տիրող էկոլոգիական լարվածության ուժեղացում և մարդու առողջության համար ռիսկերի ավելացում: Այսպես, գրոյական այլընտրանքային տարբերակի դեպքում՝

- Տրանսպորտային հոսքերի վերաբաշխում և օպտիմիզացիա նախատեսող փողոցա-ձանապարհային ցանցի զարգացման սխեմայի բացակայության, ինչպես նաև ավտոմեքենաներից արտանետվող գազերի չեզոքացուցիչների պարտադիր օգտագործմանն ուղղված օրենսդրական միջոցառումների պատշաճ ժամանակին չիրականացնելու դեպքում, քաղաքի ավտոպարկի՝ ըստ կանխատեսումների երկու անգամ մեծացման արդյունքում մերձմայրուղային տարածքներում մթնոլորտային օդի աղտոտումը ազոտի և ածխածնի օքսիդներով ու ածխաջրածիններով կաճի մինչև 5.0 ՍԹԿ, իսկ աղմուկի մակարդակը կգերազանցի թույլատրելի սահմանները 10դԲԱ-ով:
- Քաղաքի կոյուղացանցի և կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնմանը, չկազմակերպված կենցաղային և արտադրական կեղտաջրերի դեպի

մակերևութային ջրահոսքեր արտահոսքի կանխմանը, ինչպես նաև հեղեղատար կոյուղու վերականգնմանն ու ընդլայնմանն ուղղված միջոցառումների չիրականացման դեպքում ջրային ռեսուրսների աղտոտումը կմնա բարձր մակարդակի վրա (ԹԿՊ կլինի ավելի քան 20 ՍԹԿ) և դրանց օգտագործումը ռեկրեացիոն նպատակներով կբացառվի, ինչպես և նախկինում: Ջրամատակարարման և կոյուղացանցի արդի տեխնիկական վիճակը չփոխելու դեպքում պահպանվում է ինֆեկցիոն հիվանդությունների բռնկման ռիսկը կոյուղաջրերի՝ ջրամատակարարման ցանց լցվելու արդյունքում:

- Ակնկալվում է, որ հողերի աղտոտումը ծանր մետաղներով կնվազի դրանց հիմնական աղբյուրների վերացմանը զուգահեռ (էթիլացված բենզինի օգտագործման արգելում, մի շարք արտադրությունների փակում): Սակայն հեռանկարում հնարավոր (կամ չհաշվառվող) աղբյուրների կողմից դեպի մթնոլորտ ՍԹԱ նորմատիվների պահպանման նկատմամբ վերահսկողության բացակայությունը կարող է հանգեցնել ծանր մետաղների ավելացմանը շրջակա միջավայրում: Խիստ աղտոտված տարածքների առողջացմանն ուղղված միջոցառումները և աղտոտված գյուղատնտեսական հողերի հողային բալանսից հանման վերաբերյալ առաջարկությունները չիրականացնելու դեպքում կստեղծվի լուրջ վտանգ բնակչության առողջության համար, քանի որ գյուղատնտեսական մթերքներում հայտնաբերվել է ծանր մետաղների մեծ պարունակություն:
- Հաշվի առնելով կոշտ կենցաղային թափոնների, այդ թվում՝ պլաստիկ նյութերի քանակության աճի պայմաններում, աղբավերանշակման գործարան չկառուցելու և աղբյուրներում առաջացող մեթանը չօգտագործելու դեպքում քաղաքային աղբյուսը վտանգ կներկայացնի շրջակա միջավայրի համար, ինչպես թափոնների ինքնայրման արդյունքում գոյացող բարձր տոքսիկություն ունեցող դիօքսինների մթնոլորտ արտանետման, այնպես էլ գրունտային ջրերի հնարավոր աղտոտման առումով:
- Կանաչ տարածքների մակերեսի վերականգնմանն ու ընդլայնմանն ուղղված (ընդհանուր մակերեսի աճ 2 անգամ, ընդհանուր օգտագործման մակերեսի աճ՝ 4.5 անգամ) միջոցառումների չիրականացման և արդի իրավիճակի պահպանման դեպքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կաճի միկրոկլիմայի վատթարացման, օդի աղտոտիչների կլանման նվազման ու աղմուկի աճի առումով, ինչը համապատասխան ներգործություն կունենա մարդկանց առողջության վրա: Մասնավորապես, Նորքի լանջերի անտառը չվերականգնելու դեպքում, օդի մեջ փոշու առկայությունը կմնա բարձր (մինչև 4 ՍԹԿ)՝ հիմնականում պայմանավորված լինելով ծառազրկված տարածքներից փոշեգոյացմամբ:
- Տարածքների ինժեներական պաշտպանության միջոցառումների չիրականացման դեպքում քաղաքային միջավայրին, շենքերին և ինժեներական ենթակառուցվածքներին և բնակչությանը սելավների, սողանքների, ջրաողողումների և այլ անբարենպաստ երկրաբանական երևույթների արդյունքում կհասցվի զգալի տնտեսական և էկոլոգիական վնաս:

VII. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ՀՆԱՐԱԿՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԳԼՆԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Գլխավոր հատակագծի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը գնահատվել է՝ դիտարկելով հատակագծի հիմնական

ուղղությունների կապը հենակետային բնապահպանական խնդիրների հետ, ինչպես դրանց հնարավոր ազդեցությունը վերջիններիս վրա:

Երևանի գլխավոր հատակագծի հիմնական ուղղությունների կապը հենակետային բնապահպանական խնդիրների հետ

Տվյալ կապի գնահատման նպատակով՝ 0 նիշը նշանակում է՝ կապ չկա, 1 նիշը՝ կա թույլ կապ, 2 նիշը՝ կա միջին կապ և 3 նիշը՝ կա ուժեղ կապ:

Հենակետային բնապահպանական խնդիրներ	Պլանավորման կառուցվածքի կատարելագործում, քաղաքային միջավայրի տարածական ամբողջականության և ֆունկցիոնալ բավարարության ապահովում	Տրանսպորտային և ինժեներային ենթակառուցվածքների կատարելագործում	Էկոլոգիապես մաքուր արտադրության զարգացում	Կենսապայմանների բարելավում և բնակելի ֆոնդի արդիականացում	Բնական կոմպլեքսի կայունության վերականգնում և բարձրացում՝ բնակչության առողջության համար էկոլոգիական ռիսկերի նվազեցում	Պատմամշակութային ժառանգության պահպանում
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	1	3	3	1	1	0
Զրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	1	3	3	2	2	0
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	1	1	2	0	3	0
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	3	1	1	1	2	1
Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	0	0	3	1	1	0
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	2	2	1	1	0	0
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	2	3	3	3	2	2

Հենակետային բնապահպանական խնդիրների վրա ազդեցությունը Երևանի գլխավոր հատակագծի հիմնական ուղղությունների իրականացման արդյունքում

Տվյալ ազդեցության գնահատման նպատակով՝ 0 նիշը նշանակում է՝ հնարավոր ազդեցության բացակայություն, 1 նիշը՝ հնարավոր թույլ ազդեցություն, 2 նիշը՝ հնարավոր ուժեղ ազդեցություն: «+» և «-» նշանները համապատասխանաբար նշանակում են դրական և բացասական ազդեցություն:

1. Պլանավորման կառուցվածքի կատարելագործում, քաղաքային միջավայրի տարածական ամբողջականության և ֆունկցիոնալ բավարարության ապահովում	
Հենակետային բնապահպանական	Շրջակա միջավայրի վրա

<i>նպատակ</i>	<i>հնարավոր ազդեցություն</i>
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	+1 ⁷
Իրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	0
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	+1
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	+2
Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	0
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	+1
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	+1

2. Տրանսպորտային և ինժեներային ենթակառուցվածքների կատարելագործում

ա. Տրանսպորտային կառուցվածքների կատարելագործում

<i>Հենակետային բնապահպանական նպատակ</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն</i>
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	+1
Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	0
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	0
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	-1
Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	0
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	+1 ⁸
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	+1

բ. Ինժեներային ենթակառուցվածքների կատարելագործում

<i>Հենակետային բնապահպանական նպատակ</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն</i>
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	0
Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	+2
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	0
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	0
Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	0
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	-1 ⁹
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	+1

3. Էկոլոգիապես մաքուր արտադրության զարգացում

ա. Արդյունաբերական ձեռնարկությունների ընդլայնման բացառում

<i>Հենակետային բնապահպանական նպատակ</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն</i>
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	+1
Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային	+1

⁷ Աղտոտվածությունը քաղաքի տարածքով անհավասարաչափ է բաշխված:
⁸ Տվյալ գնահատականը վերաբերում է աղմուկին:
⁹ Տվյալ գնահատականը կապված է ապագայում ճառագայթման աղբյուրների հզորությունների ավելացման հետ:

օբյեկտների աղտոտվածության նվազեցում	
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	+1
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	+1
Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	+1
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	+1
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	+1
բ. Գյուղատնտեսական արտադրությունների վերապրոֆիլավորում կամ դուրսբերում քաղաքից	
<i>Հենակետային բնապահպանական նպատակ</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն</i>
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	+1
Զրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	+1
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	+1
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	+1
Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	+1
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	0
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	+1

4. Կենսապայմանների բարելավում և բնակելի ֆոնդի արդիականացում	
<i>Հենակետային բնապահպանական նպատակ</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն</i>
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	-1
Զրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	+1
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	0
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	-2 ¹⁰
Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	0
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	0
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	+2

5. Բնական կոմպլեքսի կայունության վերականգնում և բարձրացում, բնակչության առողջության համար էկոլոգիական ռիսկերի նվազեցում	
ա. Բնական միջավայրի բոլոր տարրերի վիճակի բարելավում	
<i>Հենակետային բնապահպանական նպատակ</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն</i>
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	+1
Զրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	+1
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	+1
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	+1

¹⁰ Տվյալ գնահատականը պայմանավորված է սպասարկման ոլորտի օբյեկտների և նոր բնակելի թաղամասերի հնարավոր բացասական ազդեցությամբ:

Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	+1
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	+1
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	+2
բ. Վտանգավոր բնական երևույթներից տարածքների ինժեներատեխնիկական պաշտպանության	
<i>Հենակետային բնապահպանական նպատակ</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն</i>
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	0
Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	+1
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	0
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	+2
Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	0
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	0
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	+1

6. Պատմամշակութային ժառանգության պահպանում	
<i>Հենակետային բնապահպանական նպատակ</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն</i>
Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում	0
Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում	0
Հողային ծածկի պահպանում և վերականգնում	0
Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում	0
Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում	0
Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն	0
Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում	+1

Վերոհիշյալ աղյուսակներում ներկայացված գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ Երևանի գլխավոր հատակագծով նախատեսված գործողությունների հիմնական ուղղությունների իրականացման արդյունքում ազդեցությունը շրջակա միջավայրի հենակետային բնապահպանական խնդիրների վրա կլինի դրական կամ ազդեցություն չի լինի: Բացառություն է կազմում հետևյալը`

- *Մթնոլորտային աղտոտվածության նվազեցման խնդիրը* թերևս դժվար կլինի լուծել, քանի որ կենսապայմանների բարելավումն ու բնակելի ֆոնդի արդիականացումը կարող են զուգակցվել հարկայնության և բնակչության խտության աճի հետ և հանգեցնել ավտոկայանատեղերի ու ջեռուցման աղբյուրների քանակի ավելացման, ինչպես որ դա կատարվում է ներկայիս կառուցապատման պրակտիկայում:
- *Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանման, վերականգնման, նոր տարածքների կանաչապատման և անտառապատման խնդրի* լուծման համար լուրջ խոչընդոտ կարող են հանդիսանալ կենսապայմանների բարելավումն ու բնակելի ֆոնդի արդիականացումը, ինչի մասին վկայում են կանաչ տարածքների հաշվին կառուցապատման ներկա միտումները: Բացի այդ, կանաչ տարածքների վրա որոշ դեպքերում բացասականապես կանդրադառնա նոր ճանապարհների կառուցումը` տրանսպորտային կառուցվածքների կատարելագործման շրջանակներում:

- *Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանության* խնդիրը, մասնավորապես՝ էլեկտրամագնիսական ճառագայթման մակարդակը կարող է չնվազել, քանի որ ինժեներային ենթակառուցվածքների կատարելագործումը կարող է հանգեցնել ճառագայթման աղբյուրների հզորությունների հնարավոր ավելացման:

VIII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանության խնդրի լուծմանն ուղղված ԵԳՀ-ով առաջարկվող՝ պաշտպանիչ գոտիների ստեղծմանն ուղղված միջոցառումները գնահատվում են որպես բավարար ՌԷԳ խմբի կողմից:

Մթնոլորտային աղտոտվածության նվազեցման և լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանման, վերականգնման, նոր տարածքների կանաչապատման ու անտառապատման խնդրի լուծմանն ուղղությամբ առաջարկվում է գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան փուլերում նախատեսել հետևյալ միջոցառումները՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի շոգ և չոր բնակլիմայական պայմաններն ու անբարենպաստ տեղադրությունը մթնոլորտային աղտոտումների կլանման առումով.

- քաղաքի տարածքում մինչև 1998թ. գոյություն ունեցող կանաչ կամ հողածածկ տարածքների (օրինակ՝ Դալմայի այգիներ), այդ թվում՝ սարալանջերի վրա (օրինակ՝ Նորքի անտառ, Բաբայան փողոցին հարող անտառպուրակ) բացառել կառուցապատման որևիցե ծրագիր և վերանայել ՀՀ կառավարության համապատասխան որոշումները՝ հիմք ընդունելով այդ տարածքների կարևորագույն էկոլոգիական արժեքը քաղաքի համար ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ տարածքների կառուցապատման վերաբերյալ որոշումներն ընդունվել են առանց դրանց կառուցապատման հայեցակարգի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- գլխավոր հատակագծի գործողության ընթացքում վերանայել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում հողերի վարձակալության պայմանագրերը՝ ձգտելով մինչև 2020թ. ապահովել 75-80 տոկոս կանաչ տնկարկների կամ ջրային ավազանների առկայություն այդ տարածքներում.
- քաղաքի խիտ կառուցապատում և անբարենպաստ էկոլոգիական պայմաններ ունեցող համայնքներում (մասնավորապես՝ Կենտրոն) համապատասխանաբար փոխել արդյունաբերական և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերի կատեգորիան՝ բնակավայրի հողերի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների,
- կառուցապատման մեծ խտություն ունեցող տարածքներում բացառել նոր ծավալվող շինարարության ավելի մեծ խտություն քան գոյություն ունի ներկայում, հատկապես Կենտրոն և Արաբկիր համայնքներում հաշվի առնելով վերջիններիս էկոլոգիական անբարենպաստ վիճակը,
- քաղաքացիների կողմից՝ նախկինում ընդհանուր օգտագործման ամայի ու քարքարոտ տարածքների անօրինական զավթված և կանաչապատված մակերեսի կանաչի պահպանում և կառուցապատման բացառում (օրինակ՝ Ջաքարիա Սարկավազի փողոցի այգին, Բերդաձոր-Կաքավաձորի այգիներ),
- գոյություն ունեցող անտառային տարածքների պահպանում անտառային հողերի կատեգորիայում՝ ընդհանուր օգտագործման բնակավայրի հողերին դրանք դասելու փոխարեն՝ բացառելով այդ տարածքների կառուցապատումը մինչև ընդհանուր օգտագործման տարածքների պահպանության համապատասխան կանոնակարգումը,
- գլխավոր հատակագծին հաջորդող միջոցառումների ցանկում որպես առաջնային խնդիր նախատեսել պատմամշակութային հիմնավորման

- նախագծի և հուշարձանների պահպանության գոտիների նախագծերի մշակումը,
- վերանայել գլխավոր հատակագծով հեռանկարային կանաչապատման համար նախատեսված ծառերի և թփերի տեսակային կազմը,
 - նախատեսել միջոցառումներ օգտագործելու մետրոպոլիտենի թունելներից հեռացվող ջրերը քաղաքի ոռոգման համակարգում,
 - նախատեսել հարկային քաղաքականության փոփոխությանն ուղղված միջոցառումներ՝ նպաստելու անկանոն կառուցապատված կանաչ տարածքների վերականգնմանը,
 - վերականգնել Ղալմայի այգիների ոռոգման ջրանցքն ու թունելը, որոնք ունեն նաև պատմամշակութային արժեք,
 - նախատեսել միջոցառումներ կառուցապատման խտությունը և կանաչապատման տոկոսը համապատասխանեցնելու քաղաքաշինական նորմերին ոչ միայն քաղաքի, այլև՝ համայնքների մակարդակով և ձգտելով ապահովել դրանց համաչափ բաշխվածություն,
 - ձեռնարկել միջոցառումներ կանոնակարգելու կառուցվող շենքերի հարկայնությունը,
 - նախատեսել միջոցառումներ կանաչապատելու մերձքաղաքային հողերը:

IX. ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԾՌԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Հաշվի առնելով ռազմավարական էկոլոգիական գնահատման մեթոդների ընդհանրացված լինելը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների համար անհրաժեշտ ելակետային տվյալների բացակայությունը, գլխավոր հատակագծից բխող փաստաթղթերի ու գործողությունների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գումարային բնույթը և կանխատեսումների գիտական հիմնավորման թերությունները, գլխավոր հատակագծում անհրաժեշտ է ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգի ծրագիր: Վերջինս թույլ կտա պարբերական դիտարկումների և համապատասխան միջոցառումների ձեռնարկման միջոցով կանխել կամ մեղմացնել վնասակար ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Առաջարկվում է Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչությանը համակարգել մոնիտորինգի տվյալների հավաքագրումը և վերլուծությունը:

Առաջարկվող մոնիտորինգի ծրագրի հիմքում դրված են հենակետային բնապահպանական խնդիրների համար մշակված ցուցանիշները: Առաջարկվում է բնապահպանական նպատակների իրականացման աստիճանի գնահատումն իրականացնել ազդեցության ցուցանիշների հիման վրա, որոնց տվյալների՝ Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության կողմից հավաքագրման նպատակահարմար ժամկետները և դրանց չափումների համար պատասխանատու մարմինները ներկայացված են ստորև տրված աղյուսակում:¹¹ Ցուցանիշների փոփոխությունները պետք է վերլուծության ենթարկվեն հիմք ընդունելով իրականացվող միջոցառումները, ինչպես նաև արտաքին գործոնները:

Բացի այդ, առաջարկվում է իրականացնել գլխավոր հատակագծից բխող բոլոր քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի ռազմավարական էկոլոգիական գնահատում և դրանց շրջանակներում նախատեսվող գործունեության տեսակների

¹¹ Նշված ցուցանիշների չափումները կարող են կատարվել պատասխանատու մարմինների կողմից ավելի հաճախ:

շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ ՀՀ օրենսդրության համապատասխան:

Ցուցանիշներ		Ներկա ցուցանիշը	2020թ.	Հավաքագրման հաճախություն	Դիտարկող կազմակերպություն
1. Մթնոլորտային աղտոտվածության նվազեցում					
1.1	Օդի աղտոտվածության մակարդակի նվազում՝ ըստ ՍԹԿ բազմապատիկի <ul style="list-style-type: none"> ▪ ազոտի օքսիդներ ▪ ածխածնի օքսիդ ▪ ցնդող օրգանական միացություններ ▪ կայուն օրգանական աղտոտիչներ ▪ փոշի 	2.2 2.0 2.0 - 3.6	1.3 1.2 1.1 - 1.2	3 տարի	ՀՀ ԲՆ
1.2	Ըստ քաղաքաշինական նորմերի խիտ կառուցապատված տարածքներում կառուցապատման խտության նվազեցում			3 տարի	Երևանի քաղաքապետարան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր
2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ջրային օբյեկտների աղտոտվածության նվազեցում					
2.1	Քաղաքային ցանցերում ջրերի կորուստների նվազում (տոկոս)	70%	20%	3 տարի	ՀՀ ՏԿՆ, «ԵրևանԶրնուղկոյուղի»
2.2	Խմելու ջրի որակի պահպանում և բարելավում			1 տարի	ՀՀ ԱՆ «ԵրևանԶրնուղկոյուղի»
2.3	Արտահոսքերի ծավալների նվազում <ul style="list-style-type: none"> ▪ արտահոսող կեղտաջրերի ընդհանուր ծավալի նվազում (խոր.մ/տարի)՝ ▪ արտահոսվող աղտոտիչների քանակի նվազում՝ ըստ ԹԿՊ (տոննա/տարի) 	128.3 տվյալներ չկան	- մինչև 70% մաքրում	3 տարի	ՀՀ ԲՆ ՀՀ ՏԿՆ «ԵրևանԶրնուղկոյուղի»
2.4	Ջրային օբյեկտների աղտոտվածության մակարդակի նվազում՝ ըստ ՍԹԿ բազմապատիկի <ul style="list-style-type: none"> ▪ ԹԿՊ ▪ նավթամթերքներ ▪ ծանր մետաղներ 	20 2-5 11-13 (պղինձ)	6 - -	3 տարի	ՀՀ ԲՆ
2.5	Մաքրված կեղտաջրերի և անձրևաջրերի ծավալի աճ (տոկոս)	10	70	3 տարի	ՀՀ ՏԿՆ

					«ԵրևանԶրմուղկոյուղի»
3. Հողային ծածկի պահպանում և վերականգնում					
3.1	Ծանր մետաղներով աղտոտվածության մակարդակի նվազում՝ ըստ ԿԳՑ	32-128	16-32	5 տարի	ՀՀ ԲՆ
3.2	Ռադիոնուկլիդներով աղտոտվածության մակարդակի նվազում՝ ըստ ՍԹՄ	1.4	1.1	5 տարի	ՀՀ ԲՆ
3.3	Գերնորմատիվային աղտոտված տարածքների մակերեսի նվազում (հա, տոկոս)	հող՝ 2800 հա օդ՝ 5600 հա	-	5 տարի	ՀՀ ԲՆ
3.4	Վտանգավոր երկրաբանական երևույթների ենթակա տարածքների մակերեսի նվազում (հա) <ul style="list-style-type: none"> ▪ ջրառողողումներ ▪ սելավներ ▪ սողանքներ 	2400 800 3000	1500 500 2400	5 տարի	ՀՀ ՏԿՆ
4. Լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում և անտառապատում					
4.1	Կանաչ տարածքների մակերեսի աճ <ul style="list-style-type: none"> ▪ կանաչ տարածքների, այդ թվում՝ վերականգնվող և նոր հիմնվող, ընդհանուր մակերես, (հա) ▪ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը (հա, քառ.մ/մարդ) ▪ հատուկ պահպանվող տարածքների բնապահպանական հողերի մակերեսը (հա) ▪ անտառային հողերի մակերեսը (հա) 	4951.7 540.3 0 1238.7	9397.7 2382.3 892 1090.0	1 տարի 3 տարի 3 տարի 3 տարի	Երևանի քաղաքապետարան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր
5. Թափոնների վնասակար ազդեցության նվազեցում					
5.1	Կազմակերպված աղբյուրների քանակի (հատ) և մակերեսի (հա) պահպանում	1/30	1/30	5 տարի	Երևանի քաղաքապետարան
5.2	Չկազմակերպված աղբյուրների քանակի (հատ) և մակերեսի (հա) նվազում	-	-	1 տարի	Երևանի քաղաքապետարան Թաղապետարաններ
5.3	Կենցաղային կոշտ թափոնների ընդհանուր ծավալից վերամշակվող և օգտագործվող թափոնների բաժնի աճ (տոկոս)	10	80	5 տարի	ՀՀ ԲՆ
5.4	Սանիտարա-պաշտպանական գոտիների մակերեսի աճ (հա)	0	1041	3 տարի	Երևանի

					քաղաքապետարան, Թաղապետարաններ ՀՀ ԱՆ, ՀՀ ԲՆ
6. Ֆիզիկական ազդեցություններից պաշտպանություն					
6.1	Աղմուկի մակարդակի նվազում՝ ըստ ՍԹՄ	1-5	1-3	1 տարի	ՀՀ ԱՆ
6.2	Էլեկտրամագնիսական ճառագայթման մակարդակի նվազում՝ ըստ ՍԹՄ	-	-	5 տարի	ՀՀ ՏԿՆ
6.3	Վիբրացիայի մակարդակի նվազում՝ ըստ ՍԹՄ	-	-	5 տարի	ՀՀ ՏԿՆ
7. Մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցում					
7.1	Էկոլոգիապես դիսկոմֆորտային գոտում ¹² ապրող բնակչության թվի նվազում (հազ. մարդ)	210	-	1 տարի	ՀՀ ԱՆ
7.2	Բնակչության հիվանդացության և մահացության դեպքերի նվազում՝ ըստ հետևյալ նոզոլոգիական ծների <ul style="list-style-type: none"> ▪ շնչառական հիվանդացություններ (մարդ/հազ.մարդ) ▪ սրտանոթային հիվանդացություններ (մարդ/հազ.մարդ) 	-	-	1 տարի	ՀՀ ԱՆ
7.3	Ջրով փոխանցվող հիվանդությունների բռնկումների ենթարկված մարդկանց քանակի նվազում	-	-	1 տարի	ՀՀ ԱՆ

¹² Առկա և կանխատեսվող էկոլոգիապես դիսկոմֆորտային գոտիների սահմանները ներկայացված են *Չվիսավոր հատակագծի հատոր 5, 11 և 15 սխեմաներում, էջ 49 և 70*

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ԳԼԽԱԿՈՐ ՀՍՏԱԿԱԳԾԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՑԱՆԿ**

(ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացված՝
ռազմավարական էկոլոգիական գնահատման խնդիրները)

Հողային ռեսուրսների պահպանություն

- հողային ֆոնդի արդի և հեռանկարային բաշխվածությունն՝ ըստ նպատակային և գործառնական նշանակության,
- հողի բերրի շերտի պահպանում և օգտագործում,
- տարածքների պահպանում տարերային աղետներից և տեխնածին ազդեցություններից:

Ջրային ռեսուրսների պահպանություն

- Քաղաքի չկոյուղացված տեղամասերի կոյուղավորում (կենցաղային, արտադրական և անձրևային),
- Արտադրական կեղտաջրերի (նախնական), քաղաքային կեղտաջրերի և անձրևաջրերի մաքրման ապահովում,
- Ջրամատակարարման համակարգի վերականգնում:

Ընդերքի պահպանություն

- պահուստային, գործող և ուսումնասիրվող հանքավայրերի ցանկը, տեղադրությունը,
- ստորերկրյա պահուստների, ինչպես նաև ստորգետնյա տրանսպորտի (մետրոյի) ներկա վիճակը և զարգացումը,
- հանքավայրերի շահագործման սահմանափակում և տարածքների վերականգնում:

Օդային ավազանի պահպանություն

- անշարժ և շարժական աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների վերաբերյալ տեղեկատվություն (ներկա և հեռանկարային),
- մթնոլորտային աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումներ հաշվարկային ժամանակաշրջանում (անհրաժեշտության դեպքում հաշվարկային ժամանակաշրջանից դուրս), մթնոլորտի աղտոտվածության մակարդակը սահմանային թույլատրելի նորմերին հասցնելու նպատակով,
- կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի ձևավորում,
- ավտոտրանսպորտի արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝
 - ներքաղաքային հասարակական տրանսպորտի բարձրակարգ համակարգի զարգացման ծրագիր՝ ուղղված մեծ և միջին տեղատարողությամբ ավտոբուսների ձեռքբերմանը և էլեկտրատրանսպորտի պահպանմանն ու զարգացմանը և ներքաղաքային հասարակական տրանսպորտից օգտվող ուղևորների սպասարկման բարելավմանը,
 - մետրոպոլիտենի զարգացման արդյունավետ ֆինանսատնտեսական մեխանիզմի ձևավորմանը նպաստող միջոցառումներ,
 - մետրոպոլիտենի հետ վերգետնյա հասարակական տրանսպորտի երթուղիների շաղկապում:

Ավտոտրանսպորտի շարժի կարգավորում

- ճանապարհային ցանցի հեռանկարային ծրագիր,
- հետիոտն և հեծանվային երթևեկության զարգացմանը և անվտանգությանը նպաստող միջոցառումներ՝ ուղղված քաղաքի մարդաշատ վայրերին և հանգստյան գոտիներին հարակից փողոցներում տրանսպորտային երթևեկության մասնակի սահմանափակումներ սահմանելուն,
- ճանապարհային երթևեկության կարգավորման ավտոմատացված համակարգերի նախատեսում,
- ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի կազմակերպմանն ուղղված միջոցառումներ:
- երթևեկության կազմակերպման սխեմայի նախատեսում:

Թափոնների ազդեցությունների նվազեցում

- Նուբարաշենի աղբավայրի բարեկարգում, կոշտ կենցաղային թափոնների վնասազերծում՝ բացառելով այրումը,
- վտանգավոր այլ թափոնների վնասազերծման մասնագիտացված պոլիգոնի ստեղծում:

Ֆիզիկական ազդեցությունների նվազեցում

- աղմուկ,
- վիբրացիա,
- էլեկտրամագնիսական ծառայություն:

Երևան քաղաքի հատուկ պահպանվող տարածքների պահպանում և վերականգնում

Անտառային հողերի կատեգորիայում ընդգրկել՝

- Անտառային փողոցի հարակից անտառտարածք
- Բաբայան-Ազատության խաչմերուկի անտառ-պուրակ
- Բաբայան-Ուլնեցի-Դավիթ Անհաղթի հարակից անտառտարածքներ
- Եռաբլուր
- Լվովյան փողոցին հարող անտառ-պուրակ
- Խորենացու փողոցի հարակից անտառտարածքներ
- Կարմիր բլուր
- Կենդանաբանական այգի
- Հրազդանի կիրճի հողապահպան ծառուտներ
- Նորք-Մարաշ-Սարի թաղ հողապահպան անտառաշերտեր
- Նուբարաշենի անտառ-տնտեսություն
- Ջրաշեն-Ողջաբերդի հողապահան ծառուտներ
- Փափազյան փողոցի վերջնամասի այգի.

Հատուկ պահպանվող տարածքների՝ բնապահպանական գործառնական նշանակության հողերի ցանկում ընդգրկել՝

- Դալմայի այգիներ, ներառյալ Սարդուրի այգիներ՝ 533 հա տարածքով
- Բուսաբանական այգի
- Երևանյան լճի ջրապահպան ծառուտներ
- Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կանաչ զանգված.

Քաղաքի զբոսայգիներ՝

- Անգլիական այգի
- «Ալմաստ» գործարանի պուրակ
- Կոմիտասի անվան զբոսայգի
- «Հաղթանակ» զբոսայգի
- Դուկասյանի այգի

- Մալաթիա-Սեբաստիա համայնքի պուրակներ
- Մանկական այգի
- Մերգելյան ինստիտուտի պուրակ
- Շահունյանի այգի
- Պուշկինի այգի
- Վարդավառի այգի
- Օղակաձև զբոսայգի
- Օպերայի շրջակայքի պուրակներ

Կանաչ տարածքների պահպանում

- անտառների պահպանում, վերականգնում, նոր տարածքների անտառապատում.
- կանաչ տարածքների պահպանում, վերականգնում, նոր տարածքների կանաչապատում:

Հուշարձանների պահպանում

- պատմամշակութային և հնէաբանական հուշարձաններ,
- բնական հուշարձաններ:

Այլ բնապահպանական հարցեր

- բնակիչների կենսագործունեության համար անհրաժեշտ տեղաշարժերը նվազեցնելու նպատակով՝ բնակավայրերի կառուցապատումներն իրականացնելիս սպասարկման օբյեկտների տեղաբաշխման նորմատիվային պահանջների ապահովում:

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Ճարտարապետների Միությունում 30.03.2054թ. կայացած Երևան քաղաքի Նոր Գլխավոր հատակագծի հայեցակարգի հասարակական քննարկման արձանագրություն

Ք. Երևան

ժ. 17.00.

Օրակարգում

1. Տեղեկություն նոր Գլխավոր հատակագծի հայեցակարգի նախագծի մշակման աշխատանքների վերաբերյալ՝ հիմնախնդիրների ընդգծմամբ-զեկուցող «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի տնօրեն Գ.Մուշեղյանը:
2. Նոր Գլխավոր հատակագծի հայեցակարգի հիմնական դրույթները. զեկուցող «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի ԳԶԲ-ի պետ Պ. Սողոմոնյան:
3. Նոր Գլխավոր հատակագծի հայեցակարգի առանձին բաժինների ներկայացում.
 - Քաղաքի փողոցաճանապարհային ցանց, տրանսպորտ և ճարտարագիտական ենթակառուցվածքներ- Գ.Մուշեղյան
 - Շրջակա միջավայրի պահպանություն- Մ. Վերմիշև

Ծավալված քննարկումների արդյունքում բարձրացվել են հետևյալ հարցերը.

1. **Վ. Դարությունյան, ճարտարապետ**

Քաղաքի որ տարածքներն են առաջարկվում կառուցապատման համար: Միջթաղամասային տարածքների հետագա ճակատագիրը: Ինչ է նախատեսում նոր Գլխավոր հատակագիծը հուշարձանների և դրանց գոտիների պահպանության ուղղությամբ:

2. **Ա. Իսկոյան, «ԵՔԱԿ» հասարակական կազմակերպություն**

Ինչպես է հայեցակարգում արժարժված կարմիր գծերի հիմնախնդիրը:

3. **Ա. Պողոսյան, սպառողների միության նախագահ**

Մեր քաղաքում հետևողական կերպով ոչնչացվում են կանաչ տարածքները, ավելացվում է կառուցապատման խտությունը: Ինչպես են վերը նշված հարցերը արժարժված նոր Գլխավոր հատակագծի հայեցակարգում:

4. **Է. Արևշատյան, ճարտարապետ**

Ինչպես է լուծվել արդյունաբերական հանգույցների գոտիների խնդիրները:

5. **Ա. Կանայան, ճարտարապետ**

Որոնք են այսօր Երևան քաղաքի հետագա զարգացման հիմնական քաղաքաստեղծ գործոնները: Սոցիալական ոլորտի բաժնում արդյոք արժարժված է գործազրկության հիմնախնդիրը:

6. **Ա. Իսկոյան, «ԵՔԱԿ» հասարակական կազմակերպություն**

Որքանով է հիմնավորված գյուղատնտեսական հողերը որպես ռեզերվային առաջարկելը:

7. **Յ. Սանասարյան, «Կանաչների միություն»**

Գլխավոր հատակագծի հայեցակարգում առաջարկված էկոլոգիական նորմատիվների համար սահմանված է վերին և ներքին սահմաններ:

8. **Վ. Դարությունյան, ճարտարապետ**

Ոռոգման համակարգում նախատեսվում է արդյոք երևանի տարածքի ունեցող ստորգետնյա ջրերի օգտագործումը:

9. **Ա. Իսկոյան, «ԵՔԱԿ» հասարակական կազմակերպություն**

Ներկայացրեք մոտեցումը էկոլոգիական վտանգ ներկայացնող արդյունաբերական ձեռնարկությունների հետագա ճակատագրի վերաբերյալ:

10. **Բ. Դազարյան, ԳԳ բնապահպանության նախարարություն**

Ինչով է բացատրվում մթնոլորտի աղտոտվածության բարձրացումը:

11. **Վ. Դարությունյան, ճարտարապետ**

Ինչպես են հետագայում պատկերացնում ձեր կատարած աշխատանքի, այստեղ սահմանված գոտիների նկատմամբ հեղինակային իրավունքի պաշտպանման հարցը:

12. **Ս. Ադամյան, «Թռչնասերների միություն» հկ**

Որտեղ են կանաչ գոտիներ:

13. **Գ. Սանասարյան, «Կանաչների միություն» հկ**

Խնդրում ենք հկ-րին ծանոթանալու համար տրամադրել հայեցակարգի նյութերը:

14. **Է. Արևշատյան, ճարտարապետ**

Չաշվի առնված է արդյոք էկոլոգիական բաժնում արված առաջարկություններում քաղաքում այսօր իրականացվող կառուցապատման քաղաքականությունը:

15. **Ն. Չիլինգարյան, ճարտարապետ**

Ինչ մոտեցումներ են առաջարկվում քաղաքի արվարձանների հետագա զարգացման համար:

16. **Ա. Սարգսյան, «Բնակարանային կոմունալ համակարգ» հկ**

Ինչ մոտեցումներ են առաջարկվում գերեզմանատների և աղբավայրերի համար:

17. **Ս. Կարապետյան, «Չիվանդությունների կանխարգելման կենտրոն»**

Ինչպես է հետագայում լուծվելու կենտրոնացված ջերմամատակարարման հիմնախնդիրը:

18. **Ա. Իսկոյան, «ԵՔԱԿ» հասարակական կազմակերպություն**

Երևանյան լճի հետագա ճակատագիրը:

19. **Ս. Այվազյան, Երևանի էկոլոգիական հասարակական դաշինքի խորհրդի համակարգող**

Ինչպես է Գլխավոր հատակագիծը անդրադարձել հարկայնության և քաղաքի ոճային հարդարման խնդիրներին:

Բարձրացված հարցերին պատասխանեցին Գ. Մուշեղյանը, Պ. Սողոմոնյանը, Մ. Վերմիշևը՝ համաձայն Գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակված հիմնական դրույթների:

Ծավալված քննարկումների արդյունքում որոշվեց ի գիտություն ընդունել հետևյալ առաջադրությունները.

1. *Ա. Առուստամյան, ճարտարապետ.*

Հետագա քննարկումները առանձնացնել ըստ մասնագիտական ոլորտների:

2. *Ա. Սարգսյան, «Բնակարանային կոմունալ համակարգ» իկ*

Ստեղծել էլեկտրոնային սայտ:

3. *Վ. Հարությունյան, ճարտարապետ*

Ստեղծել անկախ աշխատանքային ճարտարապետական խումբ՝ աշխատանքների մշակման քննարկման համար:

ՀՀ ճարտարապետների միության նախագահ  Մ. Մխնատյան

Արձանագրություն N

ՀՀ ճարտարագիտական Ակադեմիայի խորհրդի նիստի

ք. Երևան

5 մայիսի

2005թ.

Ներկա էին.

ՀՀ ճարտարագիտական Ակադեմիայի նախագահության և Ակադեմիայի անդամները

Հրավիրված էին.

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից՝ Երևանի նոր Գլխավոր հատակագծի հեղինակային խումբը. Գ. Սուշեղյան, Պ. Սողոմոնյան, Ա. Ալոյան, Զ. Մամյան, Ս. Վերմիշև, Ա. Նալբանդյան, Լ. Կոջոյան, Ա. Սողոմոնյան, Ա. Սանասյան, Ր. Թաշչյան

Ս. Այվազյան- Երևանի գլխավոր հատակագծի UNDP-ի «Ուղղորդված Բնակահպանական գնահատման» /ՌԲԳ/ ծրագրի ղեկավար

Ռ. Ամիրխանյան- «Շենինֆո» ամսագրի խմբագիր

Օրակարգում.

Տեղեկություններ Երևան քաղաքի նոր Գլխավոր հատակագծի նախագծի մշակման աշխատանքների վերաբերյալ՝ հիմնախնդիրների ընդգծմամբ.


գեկուցողներ՝ Գ.Սուշեղյանը, Պ. Սողոմոնյան, Ա. Ալոյան, Ս. Վերմիշև, Ա.Նալբանդյան

Ելույթ ունեցան. Զ. Պողոսյան, Գ. Շախկյան, Գ. Բաբայան, Դ. Քերտմենջյան, Ա. Թովմասյան, Ռ. Ամիրխանյան, Ա. Գրիգորյան, Ս. Շահինյան, Յու. Սաֆարյան

Որոշվեց.

1. Հավանության արժանացնել Երևան քաղաքի նոր Գլխավոր հատակագծի նախագիծը՝ նշելով տրամադրված նյութի և նախագծային առաջարկությունների բարձր որակը:
2. Ներկայացված նյութը երաշխավորել հաստատման՝ Գլխավոր հատակագծի հետագա իրացման միջոցառումների ծրագրի մշակմամբ:

Նախագահ՝ ՀՃԱ փոխնախագահ
գլխավոր գիտ. քարտուղար՝



Յու. Սաֆարյան

Գիտական քարտուղար՝

Ռ. Բարսեղյան

**ՄԱԶԾ փորձնական ՌԷԳ ծրագիրը՝ որպես Հայաստանում ՄԱԿ ԵՏՀ
«Ռազմավարական բնապահպանական գնահատման մասին» արձանագրության
իրականացմանն ուղղված կարողությունների զարգացման միջոց**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Մասնագիտական քննարկում (I մաս)

11 մայիսի, 2005թ.

Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի նախագծի ռազմավարական էկոլոգիական գնահատման փորձնական ծրագրի շրջանակներում 2005թ. մայիսի 11-ին, ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի դահլիճում տեղի ունեցավ առաջին մասնագիտական քննարկումը, որին մասնակցեցին գիտական, պետական և հասարակական ոլորտների 62 ներկայացուցիչներ և անհատներ:

Քննարկման ընթացքում գլխավոր հատակագծի հեղինակների կողմից ներկայացվեցին Երևան քաղաքի ներկա վիճակը, նոր հատակագծի նախագծով նախատեսվող փոփոխություններն ըստ ոլորտների և քննարկվեց դրանց հնարավոր ազդեցությունը քաղաքի շրջակա միջավայրի վրա:

Բացման խոսքով հանդես եկան ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի ղեկավար պարոն Արմեն Մարտիրոսյանը և ՄԱԶԾ ՌԷԳ ծրագրի համակարգող Սոնա Այվազյանը, որոնք ներկայացրեցին ծրագրի նպատակը և քննարկման ընթացակարգը:

«Երևաննախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները համապատասխան քարտեզների օգնությամբ ներկայացրեցին քաղաքի նոր գլխավոր հատակագծի հայեցակարգը և տվյալ փաստաթղթով առաջարկվող լուծումները: Երևանի գլխավոր հատակագծի նախագծի գլխավոր ձարտարապետ Պետրոս Սողոմոնյանը նկարագրեց քաղաքի ներկայիս վիճակը, սահմանները, նոր հատակագծի նախագծով առաջարկվող ընդհանուր փոփոխությունները: «Երևաննախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն Գուրգեն Մուշեղյանը ներկայացրեց նոր գլխավոր հատակագծի նախագծով նախատեսված տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների բարելավման առաջարկը: Երևանի նոր գլխավոր հատակագծի նախագծի բնապահպանական և առողջապահական խնդիրները ներկայացրեց նախագծի շրջակա միջավայրի պահպանության բաժնի ղեկավար Սիխայիլ Վերմիշևը:

Ս.Վերմիշևը նշեց, որ Երևանի գլխավոր հատակագծի մշակման շրջանակներում Երևան քաղաքի բնապահպանական խնդիրներն ուսումնասիրվել են ըստ հիմնական թեմաների՝ օդ, ջուր, հող, կանաչապատում, էլեկտրամագնիսական ազդեցություն, աղմուկ և այլն: Նա մանրամասն ներկայացրեց քաղաքի շրջակա միջավայրի ներկա վիճակը և նախագծով առաջարկվող գործողությունների դեպքում ակնկալվող փոփոխությունները և բնապահպանական միջոցառումները:

Ելույթներից հետո ծավալվեց ակտիվ հարցուպատասխան: Պատասխանները տրվում էին նախագծող խմբի համապատասխան մասնագետների կողմից: Հնչեցված հիմնական հարցերն ու պատասխանների համառոտ արձանագրությունը ներկայացված է ստորև.

Հարց (Արմեն Պողոսյան, «Սպառողների միություն» ՀԿ). Խնդրում եմ ներկայացնել նախագծի տրանսպորտի կառուցվածքը, քաղաքային էլեկտրատրանսպորտի

գարգացումը և դրա հարաբերակցությունը տրանսպորտի մյուս տեսակների նկատմամբ:

Պատասխան. Քաղաքի տրանսպորտային կառուցվածքի բարեփոխման նպատակով մեծաքանակ միկրոավտոբուսները ժամանակի ընթացքում կփոխարինվեն փոքր ավտոբուսներով և տրոլեյբուսներով: Տրանսպորտի տեսակների հարաբերակցության համար հաշվարկ դեռևս չի կատարվել և դա կներկայացվի գլխավոր հատակագծի փաստաթղթում:

Հարց (*Հակոբ Սանասարյան, «Հայաստանի կանաչների միություն» ՀԿ*). Արդյոք ավելի նպատակահարմար չի կեղտաջրերի մաքրման նոր կայանի կառուցումը Քաղսի գյուղի մոտ, հաշվի առնելով, որ Հրազդան գետը զգալիորեն աղտոտվում է մինչև Երևան մտնելը:

Պատասխան. Տվյալ հարցը դիտարկվում է ոչ թե Երևանի գլխավոր հատակագծի, այլ Երևանյան ագլոմերացիայի հատակագծի խնդիր, իսկ Երևանում նախատեսվում է շարունակել մաքրման նոր կիսակառույց կայանի կառուցման աշխատանքները կամ արդիականացնել հին կայանը:

Հարց (*Հակոբ Սանասարյան, «Հայաստանի կանաչների միություն» ՀԿ*). Քաղաքի կանաչ գոտիներում, մասնավորապես «Հաղթանակ» զբոսայգում, Օղակաձև զբոսայգում կամ Օպերայի շրջակայքում կառուցված ապօրինի կառույցները արդյո՞ք պետք է քանդվեն, և այդ տարածքները նոր գլխավոր հատակագծի նախագծով դիտարկվում են որպես կանաչ, թե՞ կառուցապատված տարածքներ:

Պատասխան. Եթե կառավարությունը որոշում ընդունի քանդելու քաղաքի զբոսայգիներում կառուցված կառույցները, ապա դրանք կքանդվեն, քանի որ այդ տարածքները տրվել են ժամանակավոր վարձակալության: Նոր գլխավոր հատակագծով սահմանված կանաչ տարածքների սահմանների համար հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության կողմից նախապես ընդունված որոշումները: Այսպես, ՀՀ կառավարության որոշմամբ «Մկոյի անտառ» կոչվող տարածքի հողերը առանց մրցույթի հատկացվել են կանադական թաղամաս կառուցելու նպատակով, ուստի այդ տարածքը գլխավոր հատակագծում ներկայացվել է որպես կառուցապատվող տարածք:

Հարց (*Ելենա Մանվելյան, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ*). Արդյո՞ք գլխավոր հատակագծով նախատեսված է թափոնների քանակի ավելացում և ինչպիսի՞ լուծումներ են առաջարկվում դրանց կառավարման ուղղությամբ:

Պատասխան. Գլխավոր հատակագծով նախատեսված է թափոնների քանակի ավելացում: Տվյալ խնդրի լուծման նպատակով նախատեսվում է ոչ թե այրման գործարանի, այլ թափոնների վերամշակման գործարանի կառուցում Նուբարաշենում, որը կվերամշակի արտադրական թափոնների մինչև 80%-ը: Ընդ որում աղբավայրի շրջակայքում նախատեսվում է մինչև 500մ շառավղով ստեղծել պաշտպանիչ կանաչ գոտի:

Հարց (*Արա Մեջլումյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն*). Ի՞նչ է նախատեսում գլխավոր հատակագիծը գերեզմանոցներում տարածքների սակավության խնդրի լուծման ուղղությամբ: Արդյո՞ք նախատեսվում է դիակիզարանի կառուցում, որի համար մի ժամանակ Երևանի քաղաքապետարանը մոտ 2հա տարածք էր խնդրել Երևանի ՋԷԿ-ի շրջակայքում:

Պատասխան. Գլխավոր հատակագիծը նախատեսում է նոր գերեզմանոցի կառուցում Աջափնյակ թաղամասում, իսկ դիակիզարանի կառուցման հարցը դեռևս մնում է բաց:

Հարց (*Կարինե Դանիելյան, «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիա ՀԿ*). Աբովյան փողոցում, Հյուսիսային պողոտայի կառուցման անվան տակ, քանդվում

են պատմամշակութային արժեք ներկայացնող մի շարք շենքեր: Ինչպիսի՞ն է լինելու դրանց ձևատառերը:

Պատասխան. Նշված շենքերի քարերը համարակալվում են, դրանք տեղափոխվելու են այլ համապատասխան միջավայր: Այդպես, օրինակ, քաղաքի մի շարք տարածքներից Հանրապետության փողոց են տեղափոխվել մի քանի հուշարձան-շենքեր, ստեղծելով 19 դարի Երևանին բնորոշ մի փողոց:

Հարց (Կարինե Դանիելյան, «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիա ՀԿ). Գլխավոր հատակագծի համաձայն ինչպե՞ս է նախատեսվում ավելացնել քաղաքի կանաչ գոտիները:

Պատասխան. Վերջին տարիներին քաղաքի կանաչ գոտիների կորուստը կազմել է մոտ 350 հա, ընդ որում դրանք դասակարգվել են ըստ հատման աստիճանի՝ հատված, մասնակի հատված և այլն: Ըստ նոր գլխավոր հատակագծի նախատեսվում է պահպանել կանաչ գոտիների տարածքները, սակայն որոշ դեպքերում կփոխվեն դրանց կատեգորիաները, օրինակ Նորքի անտառինը: Հատակագծով քաղաքի կանաչ գոտիների ընդհանուր մակերեսը կավելանա մոտ 1700 հա-ով: Նախատեսվում են նաև շենքերի տանիքներում կառուցել հատուկ հարթակներ՝ կանաչ տարածքների ստեղծման համար:

Հարց (Գոհար Օզանեզովա, «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ). Ինչու՞ չեն անտառները նորից վերականգնվում որպես անտառ, այլ փոխում են դրա կարգավիճակը:

Պատասխան. Հին անտառները վերականգնվելու են: Անտառների մակերեսը կլինի մոտ 1000 հա:

Հարց (Ալեքսանդր Դանիելյան, "Quilque-chose" ՍՊԸ). Արդյո՞ք գլխավոր հատակագծով նախատեսվում է կառուցել զբոսայգիներ իրենց ենթակառուցվածքներով:

Պատասխան. Միակ նմանատիպ զբոսայգին Հաղթանակ զբոսայգին է, նորը չի նախատեսվում:

Հարց (Արա Մեջլումյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն). Էրեբունի, Նորք և այլ համայնքներում նախկինում կային մեծ անտառներ, ձիշտ կլինի, որ դրանք վերականգնվեն:

Պատասխան. Դրանք բոլորը վերականգնվելու են բացի Մարաշի անտառներից:

Հարց (Արմենուհի Դեմիրճյան, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն). Հրազդանի կիրճում առանձնացված են 11 պատմա-հնագիտական տարածքներ, այդ թվում՝ ԱՄՆ դեսպանատան տարածքը: Ինչպիսի՞ն է լինելու այդ տարածքների ձևատառերը:

Պատասխան. Նշված հարցերը պետք է լուծվեն ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից:

Հարց (Էդուարդ Մեսրոպյան, «Զինջ» ՍՊԸ). Ի՞նչ միջոցներով են իրականացվելու գլխավոր հատակագծով նախատեսված միջոցառումները: Օրինակ՝ ջրմուղի համակարգում նախատեսվում է պահպանել մեկ մարդու հաշվով 150լ/օր նորման և կորուստները հասցնել 20%-ի: Արդյո՞ք դա իրատեսական է:

Պատասխան. Բյուջեի հաշվին նախատեսված է իրականացնել ընդհանուր ներդրումների միայն 20%-ը, իսկ մնացածը նախատեսված է այլ աղբյուրներից: Օրինակ՝ ջրմուղի համակարգում ներդրում կարող է լինել դրամաշնորհների, վարկերի և այլ միջոցների հաշվին, էլեկտրացանցերի համակարգում ներդրումներ պետք է կատարի դրանց սեփականատերը և այլն:

Հարց (Ռոբերտ Դաշտոյան, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, «Գոյապահպանություն» ՀԿ). Ի՞նչ է նախատեսվում իրականացնել

Հյուսիսային ճառագայթ թաղամասում և արդյո՞ք այդ տարածքի կանաչ գոտիները պետք է վերացվեն:

Պատասխան. Տվյալ տարածքի կառուցապատումը ներկայումս կանգնեցված է, իսկ կառուցված պարիսպները քանդվելու և հետ են քաշվելու:

Հարց (Սարիսատ Պետրոսյան, Ճարտարապետ). Վերանում են պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները և դրանով իսկ՝ Երևանի պատմամշակութային դեմքը: Ի՞նչ է նախատեսում Երևանի գլխավոր հատակագիծն այդ ուղղությամբ:

Պատասխան. Երևանի պատմամշակութային դեմքը չի վերանա, իսկ հուշարձանները ընդամենը տեղափոխվում են այլ համապատասխան միջավայր:

Հարց (Ինգա Ջարաֆյան, «Էկոլուր» ՀԿ). Օղակաձև զբոսայգին և մյուս վնասված կանաչ գոտիները նախկինում նշված են եղել որպես «թեժ կետեր»: Մասնավորապես այդպես է նշված ՀՀ բնապահպանության նախարարության ազգային զեկույցում: Ինչպե՞ս են դրանք հանդես գալիս Երևանի գլխավոր հատակագծում:

Պատասխան. Փաստաթղթում նշված տարածքները նշված են որպես կանաչ գոտիներ:

Հարց (Սուրեն Շատվորյան, էներգետիկայի ինստիտուտ) – Ինչ է նախատեսվում իրականացնել քաղաքի կենտրոնում ավտոկանգառների խնդիրը լուծելու ուղղությամբ:

Պատասխան. Ըստ նախագծի մեքենաների կանգառները պետք է լինեն ստորգետնյա կամ պետք է կառուցվեն մի քանի հարկանի ավտոկանգառներ:

Հարց (Հարություն Հարությունյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն). Ըստ միջազգային նորմաների, 1մլն. ավել բնակչություն ունեցող քաղաքների շրջակայքում պետք է լինեն 50 կմ շառավղով անտառային զանգված: Ի՞նչ է նախատեսվում նախագծով այս ուղղությամբ:

Պատասխան. Երևանի նման քաղաքների համար ըստ միջազգային նորմաների նախատեսվում է 0.5 կմ շառավղով անտառային զանգված: Երևանի շրջակայքում նախատեսվում է ստեղծել քաղաքամերձ կանաչ գոտի ըստ տարբեր ռեժիմների, ներառյալ արգելավայրեր և հանգստի գոտիներ:

Հարց (Արամ Քոսլակյան, Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան). «Հրազդան» մարզադաշտը և «Ռոսիա» կինոթատրոնը վերածվել են տոնավաճառների: Ի՞նչ է նախատեսում գլխավոր հատակագիծը այդ խնդրի լուծման ուղղությամբ:

Պատասխան. Տվյալ հարցը չի գտնվում գլխավոր հատակագծի խնդիրների շրջանակում:

Հարց (Լիլիթ Ստեփանյան, ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ծկնաբանության ինստիտուտ). Ի՞նչ ձակատագրի է արժանանալու Ավանի միակ այգին, որի հաշվին ընդլայնվում է այդ տարածքի գերեզմանոցը, չնայած բնակիչների բողոքներին:

Պատասխան. Տարածքի կանաչ գոտին կպահպանվի: Իսկ գերեզմանոցի ընդլայնման աշխատանքները կանգնեցվել են, փոխարենը դրա շուրջը կստեղծվի պաշտպանիչ կանաչ գոտի:

Հարց (Արթուր Մանուկյան, Սեյսմիկ պաշտպանության ծառայություն). Ներկայումս շենքերը կառուցվում են առանց հաշվի առնելու սեյսմիկ հարցերը: Ի՞նչ է նախատեսում գլխավոր հատակագիծն այդ ուղղությամբ: Շինարարություն իրականացնելիս պետք է հաշվի առնվեն փափուկ և կոշտ գրունտները: Արդյո՞ք հաշվարկված է երկրաշարժի դեպքում քաղաքին հասցվելիք էկոլոգիական վնասը:

Պատասխան. Շենքերի սեյսմակայունության հարցերը դիտարկվել են և հաշվի առնվել է գրունտի կոշտությունը: Ցավոք, շատ դեպքերում շինարարությունն իսկապես կատարվում է մեծ խախտումներով: Իսկ երկրաշարժի դեպքում քաղաքին կհասցվի ոչ թե էկոլոգիական վնաս, այլ կլինի կենսաբանական ձգնաժամ:

Հարց (Կարապետ Օհանյան, Աերացիայի կայան). Քաղաքի հեղեղատար ցանցի հետ կապված ի՞նչ է նախատեսում գլխավոր հատակագիծը:

Պատասխան. Երևանում բոլոր գետերն ու առուները դարձել են հեղեղատարներ: Այդ հարցը կարգավորելու համար հատակագծով նախատեսվում է կառուցել հեղեղատար ցանց և առանձին մաքրման կայան:

Հարց (Արմեն Պողոսյան, «Սպառողների միություն» ՀԿ). Ինչպե՞ս է գլխավոր հատակագծի հեղինակային խումբը պատկերացնում կանաչ գոտիների վրա կառուցված ապօրինի կառույցների քանդումը: Արդյո՞ք առաջարկվելու են համապատասխան մեխանիզմներ:

Պատասխան. Առաջարկվելու են մեխանիզմներ և մշակվելու առաջարկներ ապօրինի շինությունների վերացման համար, սակայն խնդիր է այն, թե դրանք որքանով կիրականացվեն:

Հարց. Արդյո՞ք բնակելի ֆոնդի մաշվածությունը գլխավոր հատակագծի խնդիր է և, եթե այո, ի՞նչ ռազմավարություն է նախատեսված տվյալ խնդիրը լուծելու ուղղությամբ:

Պատասխան. Բնակելի ֆոնդի վերակառուցումը և արդիականացումը հանդիսանում են հատակագծի առաջնային խնդիրներից մեկը, որի համար նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

Հարց. Նախրիտ գործարանի կոյուղին միանում է Հրազդան գետին և հոսքաջրերը առանց մաքրման թափվում են գետի մեջ: Ի՞նչ է նախատեսում գլխավոր հատակագիծն այդ ուղղությամբ:

Պատասխան. Տվյալ հարցը գլխավոր հատակագծի խնդիր չէ, այլ պետք է լուծվի համապատասխան կառույցների կողմից:

Հարց. Արդյո՞ք նախատեսվում է «Բարեկամություն» - «Աջափնյակ» գծի շինարարության ավարտում:

Պատասխան. Հատակագծով նախատեսվում է ոչ միայն այդ գծի, այլ նաև քաղաքի մետրոյի զարգացման նախկին սխեմայով հաստատված գծերի շինարարություն:

Միջոցառման ավարտին ծրագրի համակարգող Ս.Այվազյանը խնդրեց մասնակիցներին իրենց դիտողություններն ու առաջարկները գրավոր հանձնել ծրագրի աշխատանքային խմբի անդամներին կամ ներկայացնել քննարկման շարունակությանը՝ 2005թ. մայիսի 16-ին:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Պետական կառույցներ

1. Ավազյան Սերգեյ, ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գրիգորյան Արտակ, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ
3. Մուրադյան Սիրանուշ, ՀՀ բնապահպանության նախարարություն
4. Հակոբյան Իրինա, ՀՀ բնապահպանության նախարարություն
5. Վարդանյան Սվետլանա, ՀՀ բնապահպանության նախարարություն
6. Ղազարյան Բորիս, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
7. Դռնոյան Ազգանուշ, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
8. Մովսիսյան Կարինե, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
9. Հարությունյան Հարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարության անտառտնտեսության վարչություն

10. Մեջլուծյան Արա, ՀՀ գյուղատնտեսության նախարարության անտառտնտեսության վարչություն
11. Պողոսյան Աշոտ, ՀՀ էներգետիկայի նախարարություն
12. Բաղալյան Հայկ, ՀՀ էներգետիկայի նախարարություն
13. Դեմիրճյան Արմենուհի, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն
14. Չիթչյան Լևոն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
15. Սրապյան Սամվել, ՀՀ քաղաքաշինության նախարարություն
16. Հարությունյան Սպարտակ, ՀՀ սեյսմիկ պաշտպանության ծառայություն
17. Մանուկյան Արթուր, ՀՀ սեյսմիկ պաշտպանության ծառայություն
18. Կոստյան Ռոմիկ, Երևանի քաղաքապետարան
19. Դանիելյան Սամվել, Երևանի քաղաքապետարան
20. Օհանյան Կարապետ, Երևանի աերացիայի կայան
21. Խաչատրյան Հենգել, «Երևան ջրմուղկոյուղի» ՓԲԸ
22. Սիմոնյան Արմինե, «Ռոռոգման համակարգերի զարգացում» ԾԻԳ

Գիտակրթական և նախազծային կազմակերպություններ

23. Ստեփանյան Լիլիթ, ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ
24. Քոսլալյան Արամ, Երևանի բժշկական համալսարան
25. Ամիրադյան Սերգեյ, «Հայնախագիծ» ինստիտուտ
26. Մաթասյան Ռոմեն, «Էներգոցանց» ինստիտուտ
27. Շատվորյան Սուրեն, էներգետիկայի ինստիտուտ
28. Խաչկալյան Միշա, «Հայկոմուննախագիծ» ինստիտուտ
29. Կաչյանց Մեսրոպ, «Հայոմուննախագիծ» ինստիտուտ
30. Զաքարյան Մանուկ, «Հայկոմուննախագիծ» ինստիտուտ
31. Առուստամյան Մարգարիտա, «Հայարդնախագիծ» ինստիտուտ
32. Սաֆարյան Լիդա, «Հայարդնախագիծ» ինստիտուտ
33. Սողոմոնյան Պետրոս, «Երևաննախագիծ» ինստիտուտ
34. Մուշեղյան Գուրգեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
35. Վերմիշև Միխայիլ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
36. Հովհաննիսյան Կառլեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
37. Կրիշչյան Հենրիխ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
38. Սողոմոնյան Աննա, «Երևաննախագիծ» ինստիտուտ
39. Մամյան Զարուհի, «Երևաննախագիծ» ինստիտուտ
40. Ալոյան Արտյոմ, «Երևաննախագիծ» ինստիտուտ

Հասարակական կազմակերպություններ և անհատներ

41. Հովսեփյան Արևիկ, «Կայուն ջրային միջավայր» ՀԿ
42. Օգանեզովա Գոհար, Հայկական բուսաբանական ընկերություն
43. Պողոսյան Արմեն, Սպառողների միություն
44. Խաչատրյան Հրաչյա, «Գազաշարժիչային ասոցիացիա»
45. Դալլաքյան Գայանե, «Գազաշարժիչային ասոցիացիա»
46. Դարբինյան Նունե, «Էկոգլոբ» ՀԿ
47. Դաշտոյան Ռոբերտ, «Գոյապահպանություն» ՀԿ
48. Դանիելյան Կարինե, «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիա
49. Մանվելյան Ելենա, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
50. Բուրխաջյան Սուրեն, Հայաստանի ճարտարապետների միություն
51. Զարաֆյան Ինգա, «Էկոլուր» ՀԿ
52. Սանասարյան Հակոբ, Հայաստանի կանաչների միություն
53. Սաֆարյան Դերենիկ, «Հնաբնակ երևանցիներ» ՀԿ
54. Կարապետյան Իրինա, Տարածաշրջանային զարգացման կենտրոն
55. Թևոսյան Վռամ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձագետ

- 56. Պետրոսյան Լիլիթ, տնտեսագետ
- 57. Պետրոսյան Սարհատ, ճարտարապետ

Մասնավոր կազմակերպություններ

- 58. Մեսրոպյան Էդուարդ, «Զինջ» ՍՊԸ
- 59. Դանիելյան Ալեքսանդր, "Quique-chose" ՍՊԸ

Միջազգային կազմակերպություններ և ծրագրեր

- 60. Մարտիրոսյան Արմեն, UNDP
- 61. Այվազյան Սոնա, UNDP ՌԷԳ ծրագիր
- 62. Վերմիշյան Արման, UNDP ՌԷԳ ծրագիր

ՄԱԶԾ փորձնական ՌԷԳ ծրագիրը՝ որպես Հայաստանում ՄԱԿ ԵՏՀ
«Ռազմավարական բնապահպանական գնահատման մասին» արձանագրության
իրականացմանն ուղղված կարողությունների զարգացման միջոց

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Մասնագիտական քննարկում (II մաս)

16 մայիսի, 2005թ.

Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի նախագծի ռազմավարական բնապահպանական գնահատման (ՌԷԳ) փորձնական ծրագրի շրջանակներում 2005թ. մայիսի 16-ին, ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի դահլիճում տեղի ունեցավ մասնագիտական քննարկման շարունակությունը, որին մասնակցեցին գիտական, պետական և հասարակական ոլորտների 27 ներկայացուցիչներ և անհատներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՄԱԶԾ ՌԷԳ ծրագրի համակարգող Սոնա Այվազյանը, որը ներկայացրեց քննարկման ընթացակարգը: Ծավալվեց հարցուպատասխան: Հնչեցված հիմնական հարցերն ու պատասխանների համառոտ արձանագրությունը ներկայացված է ստորև.

Հարց (Հակոբ Սանասարյան, «Հայաստանի կանաչների միություն» ՀԿ). Ի՞նչ մեթոդ է կիրառվել քաղաքի հողային հաշվեկշռի կազմման ժամանակ: Ինչպե՞ս են քաղաքի կանաչ գոտիները երկու անգամ ավելանում ըստ գլխավոր հատակագծի, եթե կան կանաչ գոտիների վերացման օրինակներ, մասնավորապես՝ Նորք, Օղակաձև զբոսայգի, Դալմայի այգիներ և այլն):

Պատասխան. Հողային հաշվեկշռի կազմման ժամանակ օգտագործվել են ներկայումս առկա մեթոդները, հաշվի են առնվել նորմատիվաիրավական համապատասխան փաստաթղթերը: Կանաչ տարածքների սահմանները որոշելիս հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումները մի շարք հողահատկացումների վերաբերյալ, ինչպես օրինակ՝ Դալմայի այգիների մի հատվածը: Կանաչ տարածքների մակերեսը նախատեսված է ավելացնել վերականգնելով և պահպանելով եղած կանաչ տարածքները և հիմնելով նորերը:

Հարց. (Գոհար Օզանեզովա, «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ). Դալմայի այգու արժեքավոր հողերի միջով նախատեսվում է կառուցել նոր ավտոճանապարհ: Արդյո՞ք հնարավոր չէ շրջանցել այդ տարածքը:

Պատասխան. Տվյալ տարածքով անցնող ավտոճանապարհի կառուցումը էականորեն կնվազեցնի տրանսպորտային արտանետումները և բնապահպանական տեսանկյունից կարող է ունենալ դրական ազդեցություն մթնոլորտային օդի վրա: Բացի այդ, Դալմայի այգիների տարածքի հողերի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ տվյալ տարածքի հողերը աղտոտված են և սխալ է դրանց օգտագործումը գյուղատնտեսական նպատակով:

Հարց. (Գոհար Օզանեզովա, «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ). Ի՞նչ է նախատեսվում իրականացնել ձնհալից առաջացող ջրերի մաքրման ուղղությամբ:

Պատասխան. Գլխավոր հատակագծով նախատեսվում է առանձնացնել հեղեղատար ցանցն ու կոյուղին և առանձին կազմակերպել դրանց մաքրումը:

Հարց (Գոհար Օզանեզովա, «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ). Արդյո՞ք գլխավոր հատակագիծն անդրադարձնում է բակային կանաչապատման խնդիրներին:

Պատասխան. Բակային կանաչապատումը բավականին բարդ է, սակայն այն ներառված է գլխավոր հատակագծում:

Հարց (Լևոն Չիթչյան, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն). Տիգրան Մեծի փողոցից մինչև կահույքի գործարան ընկած հատվածի երկաթուղին նախատեսված է հանել, մինչդեռ դա կարող է առաջացնել լուրջ խնդիրներ բեռնափոխադրումների հետ: **Պատասխան.** Ըստ ընդունված նորմատիվների քաղաքում երկաթուղի չի թույլատրվում ունենալ, ուստի տվյալ գիծը նախատեսված է հանել: Բացի այդ կան քաղաք մտնող երկու այլ գծեր:

Հարց (Լևոն Չիթչյան, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն). Ի՞նչ է նախատեսվում անել քաղաքում գործող ասֆալտբետոնի և բետոնե իրերի գործարանների հետ: Արդյո՞ք նախատեսվում է դրանց դուրս բերում քաղաքից, թե ոչ: **Պատասխան.** Դեռևս խորհրդային տարիներին որոշված էր Երևանի դուրս բերել 48 տարբեր գործարաններ: Գլխավոր հատակագծով նախատեսվում է տեղափոխել դրանցից մի քանիսը, ինչպես օրինակ՝ Այրարատ կինոթատրոնի մոտ տեղակայված էլեկտրատեխնիկական գործարանը: Մյուս գործարանների կողմից շրջակա միջավայրի աղտոտման վերահսկողությունը վերապահված է սանիտարահիգիենիկ և բնապահպանական տեսչություններին:

Հարց (Լևոն Չիթչյան, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն). Ի՞նչ է նախատեսում գլխավոր հատակագիծը փողոցների ստորգետնյա անցումների հետ կապված: **Պատասխան.** Տվյալ խնդիրը չի հանդիսանում գլխավոր հատակագծի առարկա:

Հարց (Հակոբ Սանասարյան, «Հայաստանի կանաչների միություն» ՀԿ). Ի՞նչ է նախատեսում գլխավոր հատակագիծը քաղաքի շենքերի հարկայնության վերաբերյալ: **Պատասխան.** Դա գլխավոր հատակագծի խնդիր չի, սակայն յուրաքանչյուր գոտու համար կան տարածքի խտության հաշվարկային նորմեր, որոնք անուղղակիորեն սահմանափակում են շենքերի հարկերը:

Առաջարկ (Արմեն Պողոսյան, «Սպառողների միություն» ՀԿ). Առաջարկվում է գլխավոր հատակագծով դնել հարկայնության սահմանափակում: **Պատասխան.** Դա քաղաքաշինական խնդիր է, գլխավոր հատակագիծը չպետք է անդրադառնա այդ հարցին:

Առաջարկ (Հակոբ Սանասարյան, «Հայաստանի կանաչների միություն» ՀԿ). Առաջարկվում է գլխավոր հատակագծում ամրագրել քաղաքի պատմամշակութային դեմքի պահպանությունը: **Պատասխան.** Դա ևս քաղաքաշինական խնդիր է, գլխավոր հատակագիծը չպետք է Պատասխան – Սա ևս հատակագծի խնդիր չէ և կարգավորվում է քաղաքի գլխավոր ճարտարապետի, կառույցի ճարտարապետի և այլոց կողմից:

Հարց (Արմեն Պողոսյան, «Սպառողների միություն» ՀԿ). Խնդրում են ներկայացնել նախագծով նախատեսված տրանսպորտային միջոցների հարաբերակցությունը: **Պատասխան.** Տվյալ հարցի պատասխանը հնարավոր է ստանալ «Երևաննախագիծ» ինստիտուտում: Հարաբերակցության հաշվարկման աշխատանքը դեռևս ընթացքի մեջ են:

Հարց (Արմեն Պողոսյան, «Սպառողների միություն» ՀԿ). Արդյո՞ք քաղաքից լրիվ հանվում է տրամվայը: **Պատասխան.** Քաղաքի փողոցների կառուցվածքը թույլ չի տալիս այս տրանսպորտային միջոցի պահպանումը: Առաջին հայացքից թվում է, թե այն էկոլոգիապես մաքուր է, սակայն իրականում այն փողոցներում առաջացնում է խցանումներ և դրանով խանգարելով մեքենաների ընթացքին, ավելացնում է արտանետումները:

Առաջարկ (Հակոբ Սանասարյան, «Հայաստանի կանաչների միություն» ՀԿ). Առաջարկվում է ստեղծել մասնագետների աշխատանքային խումբ, որը կծանոթանա գլխավոր հատակագծի նյութերին, որով նաև կապահովվի համագործակցությունը շահագրգիռ կողմերի հետ:

Պատասխան. Յուրաքանչյուր անձ կարող է ծանոթանալ գլավոր հատակագծի փաստաթղթերին «Երևաննախագիծ» ինստիտուտում:

Հարց (Ռոբերտ Ղաշտոյան, «Գոյապահպանություն» ՀԿ). Բաբայան փողոցի մերձակա կանաչ գոտում կառուցված են բազմաթիվ ապօրինի տներ: Ի՞նչ է նապատեսված այդ տարածքում:

Պատասխան. Տվյալ տարածքում ՀՀ կառավարության որոշմամբ փոփոխված է հողի կատեգորիան և այն նախատեսված է կառուցապատման համար:

Հարց (Ատոմ Սարգսյան, «Բնակարանային-կոմունալ աշխատողների միություն» ՀԿ). Արդյո՞ք նախատեսված է կրճատել թաղային համայնքների թիվը:

Պատասխան. Համայնքների քանակի վերաբերյալ որոշման ընդունումը ՀՀ կառավարության խնդիրն է: Բոլոր դեպքերում քաղաքը չի ընդլայնվելու:

Միջոցառման ավարտին ծրագրի համակարգող Ս.Այվազյանը խնդրեց մասնակիցներին իրենց գրավոր դիտողություններն ու առաջարկները հանձնել ծրագրի աշխատանքային խմբի անդամներին:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Պետական կառույցներ

1. Կարապետյան Սերյոժա, ՀՀ առողջապահության նախարարություն
2. Եգանյան Արմեն, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն
3. Վարդանյան Սվետլանա, ՀՀ բնապահպանության նախարարություն
4. Ղազարյան Բորիս, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
5. Բաղայան Հայկ, ՀՀ էներգետիկայի նախարարություն
6. Պողոսյան Աշոտ, ՀՀ էներգետիկայի նախարարություն
7. Զիթյան Լևոն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

Գիտահետազոտական կազմակերպություններ

8. Սողոմոնյան Պետրոս, «Երևաննախագիծ» ինստիտուտ
9. Մուշեղյան Գուրգեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
10. Նալբանդյան Արմեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
11. Ալոյան Արտյոմ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
12. Կրիշչյան Հենրիխ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
13. Ստեփանով Էդուարդ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
14. Մամյան Զարուհի, «Երևաննախագիծ» ինստիտուտ

Հասարակական կազմակերպություններ և անհատներ

15. Սանասարյան Հակոբ, Հայաստանի կանաչների միություն
16. Օգանեզովա Գոհար, Հայկական բուսաբանական ընկերություն
17. Պողոսյան Արմեն, Սպառողների միություն
18. Կարապետյան Իրինա, Տարածաշրջանային զարգացման կենտրոն
19. Սարգսյան Ատոմ, Բնակարանային կոմունալ աշխատողների միություն
20. Ղաշտոյան Ռոբերտ, «Գոյապահպանություն» ՀԿ
21. Խաչատրյան Հրաչյա, «Գազաշարժիչային ասոցիացիա»
22. Դասաբյան Արսեն, բժիշկ
23. Բաղդասարյան Սեդրակ, ճարտարագետ

24. Պետրոսյան Սարիատ, ճարտարապետ

Միջազգային կազմակերպություններ և ծրագրեր

25. Սիմոնյան Անահիտ, UNIDO

26. Այվազյան Սոնա, UNDP ՌԷԳ ծրագիր

27. Վերմիշյան Արման, UNDP ՌԷԳ ծրագիր

**ԱԶԾ փորձնական ՌԷԳ ծրագիրը՝ որպես Հայաստանում ՄԱԿ ԵՏՀ
«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրության
իրականացմանն ուղղված կարողությունների զարգացման միջոց**

**Երևանի գլխավոր հատակագծով նախատեսված կանաչ տարածքների
վերաբերյալ մասնագիտական քննարկում**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

21 հոկտեմբերի, 2005թ.

Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի նախագծի ռազմավարական էկոլոգիական գնահատման փորձնական ծրագրի շրջանակներում 2005թ. հոկտեմբերի 21-ին, ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի դահլիճում տեղի ունեցավ քննարկում նվիրված Երևանի գլխավոր հատակագծի նախագծով նախատեսված կանաչ տարածքների խնդրին: Քննարկմանը մասնակցեցին 46 հոգի՝ գիտական, պետական, հասարակական և միջազգային կառույցների ու լրատվամիջոցների ներկայացուցիչներ և անհատ քաղաքացիներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՄԱԶԾ ՌԷԳ ծրագրի համակարգող Սոնա Այվազյանը: «Երևաննախագիծ ինստիտուտ» Երևանի գլխավոր հատակագծի նախագծի գլխավոր ճարտարապետ Պետրոս Սողոմոնյանը և նախագծի առաջատար մասնագետ-ճարտարապետ Արտյոմ Ալոյանը ներկայացրեցին հատակագծի նախագծի վրա կատարված աշխատանքները, մասնագիտական կառույցների ընդգրկման, նախագծի լրամշակման ընթացքը: Նախագծի կանաչապատման մասը ներկայացրեց տվյալ բաժնի համար պատասխանատու Արմեն Նալբանդյանը, որը նշեց, որ հետազոտվել է կանաչ տարածքների ներկա վիճակը, ճշգրտվել դրանց ընդգրկման փաստացի տարածքները: Պրն. Նալբանդյանը ներկայացրեց քաղաքի այն հատվածները, որտեղ նախատեսվում է վերականգնել կամ պահպանել նախկինում գոյություն ունեցող կանաչ տարածքները (Դալմայի այգիներ, Նորքի լանջ, Հրազդանի կիրճ և այլն) և այն տարածքները, որտեղ առաջարկվում է ստեղծել նորերը ըստ կատեգորիաների՝ հատուկ նշանակության, մասնավորապես անտառներ, ընդհանուր և սահմանափակ օգտագործման կանաչ տարածքներ: Նա նշեց նաև ավտոճանապարհների եզրերին պաշտպանիչ կանաչ տարածքների ստեղծման առաջարկի մասին:

ՌԷԳ ծրագրի ռազմավարական էկոլոգիական գնահատման գծով փորձագետ Բորիս Ղազարյանը ներկայացրեց ՌԷԳ ծրագրի նպատակը, խնդիրները, կիրառված մեթոդաբանությունը, քաղաքի լանդշաֆտների, կանաչ տարածքների և անտառների պահպանման, վերականգնման, նոր տարածքների կանաչապատման և անտառապատման հարցը որպես հենակետային բնապահպանական նպատակ և այլն:

Հարցերով ու ելույթներով հանդես եկան՝

- Հրանտ Սարգսյանը («Տապան էկոակումբ» ՀԿ)՝ Երևան քաղաքի մերձակա անտառների կարգավիճակի մասին.
- Սրբուհի Հարությունյանը (Սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա)՝ կանաչ տարածքների նախագծման հիմքում ընկած նորմատիվների, կանաչ տարածքներում առկա կապիտալ շինությունների ճակատագրի և էկոպոլիսի տեղադրության մասին.

- Լևոն Ներսիսյանը (Մարդու իրավունքների պաշտպանության Սախարովի անվան կենտրոն)՝ հատակագծի մշակման համար Երևանի քաղաքապետարան կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, քաղաքի բնակչության կանխատեսվող աճի և դրան համապատասխան տրանսպորտային միջոցների աճի դեպքում նախատեսվող միջոցառումների մասին.
- Նորա Գաբրիելյանը (Բուսաբանության ինստիտուտ)՝ նախագծվող կանաչ տարածքների ստեղծման համար առաջարկվող բուսատեսակների մասին.
- Ալեքսեյ Թարվերոյանը («Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ)՝ քաղաքի վարակված ծառերի կտրելու վերաբերյալ առաջարկությունը հանելու մասին.
- Կարեն Մանվելյանը (WWF հայաստանյան մասնաճյուղ)՝ քաղաքի սողանքային գոտիներում նախատեսվող միջոցառումների մասին.
- Ինգա Ջարաֆյանը («Էկոլուր» ՀԿ)՝ տվյալ քննարկման ընթացքում ներկայացվող առաջարկների կարգավիճակի և որոշումներ կայացնողների կողմից դրանց հաշվի առնելու մեխանիզմների մասին.
- Արսեն Առուստամյանը (Քաղաքաշինության ինստիտուտ)՝ հարկային քաղաքականության մեջ համապատասխան փոփոխություններ մտցնելու առաջարկով, ինչը կնպաստեր քաղաքի կանաչ տարածքներում տեղակայված օբյեկտների վերացմանը ժամանակի ընթացքում և շինությունների շրջակայքի «դեղին գծերի» մասին.
- Հարություն Հարությունյանը (ՀՀ գյուղատնտեսության նախարարության անտառային տնտեսության վարչություն)՝ հատակագծի նախագծում նշված կանաչ տարածքների համար նախատեսվող ֆինանսական միջոցների մասին և քաղաքի կանաչապատման համար առաջարկվող ծառերի և թփերի տեսակների ցուցակի վերանայման առաջարկով.
- Կարապետ Կարապետյանը (Արտակարգ իրավիճակների վարչություն)՝ կանաչ տարածքների պահպանության խնդրում հակահրդեհային միջոցառումների իրականացման և հրշեջ ծառայության հետ դրանց համաձայնեցման մասին.
- Աիդա Իսկոյան (EPAC)՝ արդյունաբերական օբյեկտների շրջակայքում պաշտպանիչ գոտիների ստեղծման և ինսուլյացիայի ապահովման մասին.
- Դերենիկ Սաֆարյանը («Հնաբնակ երևանցիներ» ՀԿ)՝ ոռոգման ցանցերի վերականգնման և նորերը ստեղծելու մասին.
- Կարեն Աֆրիկյանը («Հայաստանի անտառներ» ՀԿ)՝ մետրոպոլիտենի թունելներից հեռացվող ջրերը ոռոգման ցանցում օգտագործելու առաջարկով.
- Սիլվա Աղամյանը («Թռչնասերների կենտրոն» ՀԿ)՝ Բերդաձոր և Այգեձոր թաղամասերի պտղատու այգիների կարգավիճակի մասին.
- Արտեմիս Լեփեջյանը (Սբ. Սանդուխտ տիկնանց միություն)՝ քաղաքի տարածքում վերականգնվելիք և նոր ստեղծվող կանաչ տարածքների բաշխման համաչափության մասին.
- Արման Վերմիշյանը («Բուրգ» ԲԵԿ ՀԿ)՝ կանաչ տարածքների տեղադրությունները որոշելիս թաղամասերի ծանրաբեռնվածությունը ավտոտրանսպորտով հաշվի առնելու մասին, հնացած առանձնատներով թաղամասերը քանդելուց հետո կանաչ տարածքների վերածելու առաջարկով և օղը մաքրելու գործում Նուբարաշենի մոտ ստեղծվելիք կանաչ տարածքների փոքր ազդեցության մասին կարծիքով:

Հարցերին պատասխանեցին Պ.Սողոմոնյանը, Մ.Վերմիշևը և Ա.Նալբանդյանը: փուլերում: Միջոցառման ավարտին ծրագրի համակարգող Ս.Այվազյանը խնդրեց մասնակիցներին իրենց դիտողություններն ու առաջարկները գրավոր հանձնել ծրագրի աշխատանքային խմբի անդամներին:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Պետական կառույցներ

1. Պողոսյան Հերմինե, ՀՀ ազգային ժողովի սոցիալական, բնապահպանության և առողջապահության հարցերի մշտական հանձնաժողով
2. Կարապետյան Սերգեյ, ՀՀ առողջապահության նախարարություն
3. Ղազարյան Բորիս, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
4. Մովսիսյան Կարինե, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
5. Հարությունյան Հարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարության անտառտնտեսության վարչություն
6. Ստեփանյան Վիլեն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչություն
7. Կարապետյան Կարապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչություն
8. Սնգրյան Էդան, ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչություն
9. Եղիգարյան Արմինե, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն.
10. Քոչարյան Բորիս, Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության վարչություն
11. Կոստյան Ռոմիկ, Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչություն
12. Մաքսապետյան Սուրեն, Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչություն

Գիտակրթական և նախագծային կազմակերպություններ

13. Գաբրիելյան Նորա, ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ
14. Կանայան Աշոտ, Երևանի ճարտարապետա-շինարարական ինստիտուտ
15. Պարագյան Մարինա, Երևանի ճարտարապետա-շինարարական ինստիտուտ
16. Ռենե Ռիշեր, Հայաստանի ամերիկյան համալսարան
17. Առուստամյան Արսեն, «Քաղաքաշինություն» գիտահետազոտական ինստիտուտ
18. Թարվերոյան Ալեքսեյ, «Հայջրնախագիծ» ինստիտուտ
19. Սողոմոնյան Պետրոս, «Երևաննախագիծ» ինստիտուտ
20. Վերմիշև Միխայիլ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
21. Նալբանդյան Արմեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
22. Ալոյան Արտյոմ, «Երևաննախագիծ» ինստիտուտ

Հասարակական կազմակերպություններ

23. Մինասյան Մկրտիչ, Ճարտարապետների միություն
24. Բուրխաջյան Սուրեն, Ճարտարապետների միություն
25. Էլոյան Լևոն, Ճարտարապետների միություն
26. Սարգսյան Հրանտ, «Տապան, էկոակումբ» ՀԿ
27. Գալոյան Սվետ., «Խազեր» ՀԿ
28. Հովսեփյան Արևիկ, «Կայուն ջրային միջավայր» ՀԿ
29. Հարությունյան Սրբուհի, Սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա
30. Պետրոսյան Վազգեն, «Կանաչ Երևան» ՀԿ
31. Մկրտչյան Արամ, «Կանաչ Երևան» ՀԿ
32. Օգանեզովա Գոհար, Հայկական բուսաբանական ընկերություն
33. Սաֆարյան Դերենիկ, «Հնաբնակ Երևանցիներ» ՀԿ
34. Լեփեջյան Արտեմիս, սբ. Սանդուխտ տիկնանց միություն
35. Ներսիսյան Լևոն, Մարդու իրավունքների պաշտպանության Սախարովի անվան կենտրոն
36. Թուֆենկյան Ջեֆրի, «Հայաստանի անտառներ» ՀԿ
37. Իսկոյան Աիդա, EPAC
38. Պետրոսյան Արթուր, «Ազրոէկոտուր» ՀԿ

39. Զարաֆյան Ինգա , «Էկոլուր» ՀԿ
40. Կարապետյան Իրինա, Տարածաշրջանային զարգացման կենտրոն
41. Աֆրիկյան Կարեն, «Հայաստանի անտառներ» ՀԿ
42. Ադամյան Սիլվա, «Թռչնասերների կենտրոն» ՀԿ

Միջազգային կազմակերպություններ և ծրագրեր

43. Ղազինյան Գոհար, ԵԱՀԿ երևանյան գրասենյակ
44. Մանվելյան Կարեն, WWF
45. Այվազյան Սոնա, UNDP ՌԷԳ ծրագիր
46. Վերմիշյան Արման, UNDP ՌԷԳ ծրագիր

**ՄԱԶԾ փորձնական ՌԷԳ ծրագիրը՝ որպես Հայաստանում ՄԱԿ ԵՏՀ
«Ռազմավարական բնապահպանական գնահատման մասին» արձանագրության
իրականացմանն ուղղված կարողությունների զարգացման միջոց**

**Երևանի գլխավոր հատակագծի նախագծի և դրա ռազմավարական էկոլոգիական
գնահատման հաշվետվության քննարկում
պետական կառույցների հետ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

25 հոկտեմբերի, 2005թ.

Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի նախագծի ռազմավարական բնապահպանական գնահատման (ՌԷԳ) փորձնական ծրագրի շրջանակներում 2005թ. հոկտեմբերի 25-ին, ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի դահլիճում տեղի ունեցավ պետական կառույցների հետ քննարկում, որին մասնակցեցին պետական կառույցների 25 ներկայացուցիչ:

Բացման խոսքով հանդես եկավ ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի պատասխանատու Արմեն Մարտիրոսյանը, որը ներկայացրեց ՌԷԳ ծրագրի նպատակը և խնդիրները: ՌԷԳ ծրագրի համակարգող Սոնա Այվազյանը ներկայացրեց ՌԷԳ էությունը, Երևանի գլխավոր հատակագծի ՌԷԳ գործընթացը և մեթոդաբանությունը:

Երևանի նոր գլխավոր հատակագծի նախագծի բնապահպանական և առողջապահական խնդիրները ներկայացրեց նախագծի շրջակա միջավայրի պահպանության բաժնի ղեկավար Միխայիլ Վերմիշևը: Մասնավորապես նա նշեց, որ Երևանի գլխավոր հատակագծի նախագծի մշակման ժամանակ Երևանի բնապահպանական խնդիրներն ուսումնասիրվել են ըստ հիմնական թեմաների՝ օդ, ջուր, հող, կանաչապատում, թափոններ, էլեկտրամագնիսական ազդեցություն, աղմուկ և այլն: Պրն. Վերմիշևը մանրամասն ներկայացրեց քաղաքի շրջակա միջավայրի ներկա վիճակը և նախագծով առաջարկվող գործողությունների դեպքում ակնկալվող փոփոխությունները և բնապահպանական միջոցառումները:

Հարցերով ու ելույթներով հանդես եկան՝

- Վիլեն Ստեփանյանը (Արտակարգ իրավիճակների վարչություն)՝ բջջային հաղորդակցության սարքավորումներից գոյացող էլեկտրամագնիսական ճառագայթման խնդրի լուծման մասին.
- Բորիս Ղազարյան (ՌԷԳ ծրագրի փորձագետ)՝ գլխավոր հատակագծում հետագա նախագծային փուլերին առնչվող հարցերի ցանկի ընդգրկման մասին և լրացուցիչ մաքրման սարքերի տեղադրման առաջարկով.
- Ազգանույշ Դեմոյան (ՌԷԳ ծրագրի փորձագետ)՝ շինարարության տակ գտնվող կանաչ տարածքների վերականգնման մեխանիզմների մասին, անտառային հողերի՝ անտառային կատեգորիայում պահպանելու վերաբերյալ առաջարկով և քաղաքից հանվող թռչնաբուծական տնտեսությունների և արդյունաբերական շինությունների տեղում կանաչ տարածքներ հիմնելու առաջարկով.
- Սոնա Այվազյան (ՌԷԳ ծրագրի համակարգող)՝ մայթերի վրա անօրինական կառույցների վերացմանն ուղղությամբ նախատեսվող միջոցառումների մասին.
- Արման Վերմիշևյան (ՌԷԳ ծրագրի փորձագետ)՝ պատմական հուշարձան հանդիսացող շենքերի ճակատագրի մասին.

- Էլգա Չոլախյան (Առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)՝ Երևանի որոշ հատվածներում, օրինակ՝ Փոքր կենտրոնում քաղաքի պատմաճարտարապետական պատկերի պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկով.
- Կարապետ Կարապետյանը (Արտակարգ իրավիճակների վարչություն)՝ թաքստոցների ու ապաստարանների ստեղծման մասին՝ հաշվի առնելով, որ նախկին ապաստարանները հիմնականում կամ սեփականաշնորհվել են կամ գտնվում են բարձիթողի վիճակում.
- Մարիամ Բադալյան (ՀՀ դատախազություն)՝ ՌԷԳ ծրագրի բյուջեի վերաբերյալ:

Միջոցառման ավարտին ծրագրի համակարգող Սոնա Այվազյանը խնդրեց մասնակիցներին իրենց գրավոր դիտողություններն ու առաջարկները հանձնել ծրագրի աշխատանքային խմբի անդամներին:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Պետական կառույցներ

1. Պետիկյան Աիդա, ՀՀ առողջապահության նախարարություն
2. Կարապետյան Սերգեյ, ՀՀ առողջապահության նախարարություն
3. Չոլախյան Էլգա, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն
4. Ղազարյան Բորիս, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
5. Դոնոյան Ազգանուշ, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
6. Ստեփանյան Վիլեն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչություն
7. Կարապետյան Կարապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչություն
8. Եղիգարյան Արմինե, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
9. Բադալյան Մարիամ, ՀՀ գլխավոր դատախազություն
10. Հովհաննիսյան Սարգիս, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
11. Դանիելյան Գոռ, ՀՀ ոստիկանության շտաբ

Գիտակրթական և նախազծային կազմակերպություններ

12. Մուշեղյան Գուրգեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
13. Սողոմոնյան Պետրոս, «Երևաննախագիծ» ինստիտուտ
14. Նալբանդյան Արմեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
15. Ալոյան Արտյոմ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
16. Արսենյան Ռազմիկ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
17. Կրիշչյան Հենրիխ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
18. Ստեփանով Էդուարդ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
19. Կոչոյան Լիանա, «Երևաննախագիծ» ինստիտուտ
20. Մամյան Զարուհի, «Երևաննախագիծ» ինստիտուտ
21. Վերմիշև Միխայիլ, «Երևաննախագիծ» ինստիտուտ

Հասարակական կազմակերպություններ

22. Կարապետյան Իրինա, Տարածաշրջանային զարգացման կենտրոն

Միջազգային կազմակերպություններ և ծրագրեր

23. Մարտիրոսյան Արմեն, UNDP
24. Այվազյան Սոնա, UNDP ՌԷԳ ծրագիր
25. Վերմիշևյան Արման, UNDP ՌԷԳ ծրագիր

**ԱԶԾ փորձնական ՌԷԳ ծրագիրը՝ որպես Հայաստանում ՄԱԿ ԵՏՀ
«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրության
իրականացմանն ուղղված կարողությունների զարգացման միջոց**

**Երևանի գլխավոր հատակագծի նախագծի և դրա ռազմավարական էկոլոգիական
գնահատման հաշվետվության վերաբերյալ
հասարակական քննարկում**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12 նոյեմբերի, 2005թ.

2005թ. նոյեմբերի 12-ին, Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ հասարակական քննարկում, որին մասնակցեցին 68 հոգի՝ գիտական, պետական, հասարակական և միջազգային կառույցների ու լրատվամիջոցների ներկայացուցիչներ և անհատ քաղաքացիներ:

Միջոցառման նպատակն էր հասարակայնությանը ներկայացնել Երևանի գլխավոր հատակագիծը և դրա իրականացման արդյունքում՝ հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Բացման խոսքով հանդես եկավ ՄԱԶԾ ՌԷԳ ծրագրի համակարգող Սոնա Այվազյանը, որը ներկայացրեց միջոցառման նպատակն ու օրակարգը, և Երևանի գլխավոր ճարտարապետ Սամվել Դանիելյանը, որը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին նման քննարկում կազմակերպելու համար:

Երևանի նոր գլխավոր հատակագծի նախագիծը, դրա մշակման ընթացքը, հիմնական լուծումները, շրջակա միջավայրի հետ կապված հարցերը ներկայացրեցին «Երևաննախագիծ ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն Գուրգեն Մուշեղյանը, հատակագծի գլխավոր ճարտարապետ Պետրոս Սողոմոնյանը, շրջակա միջավայրի պահպանության բաժնի ղեկավար Միխայիլ Վերմիշևը, կանաչապատման բաժնի պատասխանատու Արմեն Նալբանդյանը:

Հարցերով ու ելույթներով հանդես եկան՝

- Ս.Դավթյանը («Կաքավաձոր-Բերդաձոր» ՀԿ)՝ Կաքավաձոր-Բերդաձոր թաղամասի բնակիչների կողմից տնկված կանաչի և բնակիչների կացարանների պահպանության վերաբերյալ,
- Ա.Պողոսյանը («Սպառողների միություն» ՀԿ)՝ նախատեսվող տրանսպորտային միջոցների և քաղաքի կանաչ տարածքների պահպանության վերաբերյալ,
- Հ.Սանասարյանը («Հայաստանի կանաչների միություն» ՀԿ)՝ ապօրինի շինարարության երևույթին համապատասխան գնահատական տալու, շենքերի հարկայնությունը կանոնակարգելու, գյուղատնտեսական հողերի, մասնավորապես՝ Դալմայի այգիների արժեքավոր ծառերի պահպանության հարցը վերանայելու վերաբերյալ,
- Զ.Կիրակոսյանը («ԺՏԵՄ» ՀԿ)՝ Դալմայի այգիների արժեքի և պահպանության վերաբերյալ, վարձակալներին այդ հողերից վտարելու խնդրի վերաբերյալ,
- Գ.Գաբրիելյանը («Էկոլոգիական ակադեմիա» ՀԿ)՝ ավտոմոբիլային մայրուղիների շուրջ պաշտպանիչ, խիտ կանաչ շերտերի ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ,
- Հ. Մելքոնյանը (Հայպետհիդրոմետ)՝ նախագծում քաղաքի սեզոնայնության և քամիների դաշտի հետ կապված հարցերը հաշվի առնելու վերաբերյալ:

Հարցերին պատասխանեցին Ս.Դանիելյանը, Գ.Մուշեղյանը և Ա.Նալբանդյանը, որոնց կողմից նշվեց որ բարձրացված հարցերի մեծ մասն արդեն իսկ արտացոլված են գլխավոր հատակագծի նախագծում: Սոցիալական և բնակարանային քաղաքականության հետ առնչվող իրավական հարցերը գլխավոր հատակագծի խնդիր չեն: Իսկ քաղաքաշինությանն առնչվող հարցերը, որոնք գլխավոր հատակագծի խնդիր չեն և չեն արտացոլվել տվյալ փաստաթղթում, կլուծվեն հատակագծին հաջորդող հետագա նախագծային փուլերում:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Պետական կառույցներ

1. Սողոմոնյան Թաթուլ, ՀՀ ազգային ժողով
2. Պողոսյան Հերմինե, ՀՀ ազգային ժողով
3. Սանթրոսյան Աշոտ, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
4. Ղազարյան Բորիս, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
5. Դռնոյան Ազգանուշ, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
6. Աֆյան Նադեժդա, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
7. Բաղայան Մարիամ, ՀՀ գլխավոր դատախազություն
8. Ստեփանյան Վիլեն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչություն
9. Սնգրյան Էդան, ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչություն
10. Դանիելյան Սամվել, Երևանի քաղաքապետարան, գլխավոր ճարտարապետ
11. Աստվածատուրյան Ստեփան, ԱՀԿ
12. Մելքոնյան Հ., Հայպետհիդրոմետ
13. Հովհաննիսյան Ս., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Գիտակրթական և նախագծային կազմակերպություններ

14. Սարգսյան Կարինե, Հայաստանի պետական ագրարային համալսարան
15. Հայրապետյան Էդուարդ, Հայաստանի պետական ագրարային համալսարան
16. Զախարյան Մանուկ, «Հայկոմուննախագիծ» ինստիտուտ
17. Ռուբենյան Ռուբեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
18. Սողոմոնյան Պետրոս, «Երևաննախագիծ» ինստիտուտ
19. Մուշեղյան Գուրգեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
20. Նալբանդյան Արմեն, «Երևաննախագիծ» ինստիտուտ
21. Ալոյան Արտյոմ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
22. Կրիշչյան Հենրիխ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
23. Ստեփանով Էդուարդ, «Երևաննախագիծ» ինստիտուտ
24. Սողոմոնյան Աննա, «Երևաննախագիծ» ինստիտուտ
25. Մամյան Զարուհի, «Երևաննախագիծ» ինստիտուտ
26. Վերմիշև Միխայիլ, «Երևաննախագիծ» ինստիտուտ

Մասնավոր կազմակերպություններ

27. Մեսրոպյան Էդուարդ, «ԶԻՆԶ» ՍՊԸ
28. Օրապաշխյան Գարեգին, Հովնանյան ինթերնեշնլ

Հասարակական կազմակերպություններ և անհատներ

29. Սանասարյան Հակոբ, Հայաստանի կանաչների միություն

30. Պողոսյան Արմեն, Սպառազորների միություն
31. Կարապետյան Իրինա, Տարածաշրջանային զարգացման կենտրոն
32. Հովսեփյան Արևիկ, «Կայուն ջրային միջավայր» ՀԿ
33. Հակոբյան Էդգար, Քաղաքացիական ազգային նախաձեռնություն
34. Գաբրիելյան Գրետա, «Էկոլոգիական ակադեմիա» ՀԿ
35. Ավետիսյան Բելլա, «Հայաստան, ծառատունկ» ծրագիր
36. Խաչատրյան Մերի, Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն
37. Դավթյան Սուսաննա, «Կաքավաձոր-Բերդաձոր» ՀԿ
38. Միքայելյան Ս., «Կաքավաբերդ, Բերդաձոր» ՀԿ
39. Մկրտչյան Արամ, «Կանաչ Երևան» ՀԿ
40. Պետրոսյան Նարբե, քաղաքացի
41. Անտոնյան Ս., քաղաքացի
42. Անդրեասյան Գրիշա, քաղաքացի
43. Ամիրխանյան Ասյա, քաղաքացի
44. Կոզմանյան Անահիտ, քաղաքացի
45. Կիրակոսյան Ծ., քաղաքացի

Միջազգային կազմակերպություններ և ծրագրեր

46. Ղազինյան Գոհար, ԵԱՀԿ երևանյան գրասենյակ
47. Հարությունյան Սամվել, Chemonics/USAID
48. Դալլաքյան Գայանե, Chemonics/USAID
49. Քեղյան Էդուարդ, Chemonics/USAID
50. Գևորգյան Արամ, PA/USAID
51. Ճենտերեճյան Աննա, REC Կովկաս
52. Վարդանյան Աննա, CENN
53. Թևոսյան Վռամ, CENN
54. Այվազյան Սոնա, UNDP ՌԷԳ ծրագիր
55. Վերմիշյան Արման, UNDP ՌԷԳ ծրագիր

Լրատվամիջոցներ

56. Տոնոյան Իվետա, Կենտրոն TV
57. Պետրոսյան Անայա, «Պանորամա»
58. Թադևոսյան Լիլիթ, Հայ TV
59. Ներսիսյան Անուշ, «Հարթակ»
60. Խաղյան Արևիկ, Շանթ TV
61. Գրիգորյան Արկադի, Արմնյուզ
62. Դանիելյան Նելլի, Երկիր Մեդիա TV
63. Նավասարդյան Աննա, Հանրային ռադիո
64. Ավազյան Անահիտ, Հանրային ռադիո
65. Սհարոնյան Արմինե, Openarmenia.com
66. Սարգսյան Մանե, Արմինֆո
67. Հովհաննիսյան Քրիստինե, Արմենպրես
68. Ներկայացուցիչ, Արկա գործակալություն